

**ՁԵՌՆԱՐԿ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀՏԴ 347.73:336(479.25)
ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3
2-464

*Մույն գիրքը հրատարակվել է Համաշխարհային
Բանկի Աղքատության հաղթահարման աջակցության
ծրագրի շրջանակներում*

2-464 **Ձեռնարկ փոքր և միջին ձեռնարկությունների հարկային և սո-
ցիալական վճարների պարտավորությունների վերաբերյալ:**—
Եր., Դար, 2006, 112 էջ:

Փոքր և միջին ձեռնարկությունների ղեկավարներին հասցեա-
գրված այս ձեռնարկում շարադրված են Հայաստանի Հանրա-
պետությունում գործող օրենսդրության նորմերը, որոնց իմա-
յությունը սեփական գործը արդյունավետ կազմակերպելու և
հնարավոր սխալներից խուսափելու անհրաժեշտ պայմաննե-
րից է:

*Մույն գրքի ցանկացած մաս չի բույլատրվում որևէ կերպով փո-
խանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն աղընքեր
հարկային պետական ծառայության գրավոր բույլտվության:*

2 $\frac{1203020300}{0123(01)2006}$ 2006

ԳՄԴ 67.99(2Հ)2+65.9(2Հ)261.3

ISBN 99941-47-17-X

© ՀՀ ԿԱ ՀՊԾ, 2006

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Փոքր և միջին ձեռնարկատիրության չափորոշիչները և առևտրային կազմակերպությունների տեսակները	4
1.1. Լիակատար ընկերակցություն	7
1.2. Վստահության վրա հիմնված ընկերակցություն	9
1.3. Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն	11
1.4. Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն	13
1.5. Բաժնետիրական ընկերություն	13
1.6. Կոոպերատիվներ	15
2. ՓՄՁ-ների պետական գրանցումը	17
3. ՓՄՁ-ի որպես հարկ վճարող և ապահովադիր հարկային մարմնում հաշվառվելը	20
4. Գործունեության լիցենզիան	21
4.1. Պետական տուրքերը, տեղական տուրքերը և տեղական վճարները	24
4.2. Կարգավորման պարտադիր վճարներ	27
5. Ընդհանուր հարկման ռեժիմը	29
5.1. Ավելացված արժեքի հարկը	29
5.2. Ակցիզային հարկը	41
5.3. Շահութահարկը	45
6. Պարզեցված հարկի ռեժիմը	66
6.1. Պարզեցված հարկը	67
7. Հաստատագրված վճարները	72
8. Գույքահարկը	76
9. Հողի հարկը	81
10. ՓՄՁ-ները՝ որպես հարկային գործակալ և ապահովադիր	84
10.1. Ավելացված արժեքի հարկը	85
10.2. Ոչ ռեզիդենտի շահութահարկը	86
10.3. Եկամտահարկը	88
10.4. Պարտադիր սույնիսկան ապահովագրության վճարները	97

1.

ՓՈՐԵ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՆՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու համար յուրաքանչյուր անձ առաջին հերթին պետք է պատկերացում ունենա որ գործունեությունն է համարվում ձեռնարկատիրական և ինչ պայմաններում է նա իրականացնելու իր նախընտրած գործունեությունը:

Ձեռնարկատիրական է համարվում անձի ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելույ, ապրանքներ վաճառելույ, աշխատանքներ կատարելույ կամ ծառայություններ մատուցելույ շահույթ (եկամուտ) ստանալն է:

Այս սահմանումը նախատեսում է որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում միայն տվյալ գործունեությունը կարող է հանդիսանալ ձեռնարկատիրական գործունեություն:

Գործունեությունը ձեռնարկատիրական է համարվում, երբ իրականացվում է տվյալ անձի կողմից՝

ա) **ինքնուրույն, իր ռիսկով**, այսինքն տվյալ գործունեությանը զբաղվելու նախաձեռնությունը անձինն է և ինքն է որոշում այդ գործունեության տեսակը, այն իրականացնելու ձևերն ու ներդրվող միջոցները, կնքում գործարքներ իր ընտրած անձանց հետ, իր հայեցողությանը ձեռք բերում, տիրապետում, օգտագործում և տնօրինում գույք և ինքն է հանդիսանում իր գործունեության հետևանքների կրողը: Այսպես օրինակ՝ խաճուխում աշխատանքային պայմանագրով որպես վաճառող աշխատող անձը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող (թեև արտաքինապես կատարում է առևտրով զբաղվող տնտեսավարող սուբյեկտին համանման գործունեություն), քանի որ ինքը չի նախաձեռնել այդ գործունեությունը, որևէ գույքային ներդրում չի կատարել և իր գործողությունների հետևանքների կրողը ոչ թե ինքն է, այլ իրեն հետ աշխատանքային պայմանագիր կնքած գործատուն է:

բ) գույք օգտագործել, ապրանքներ վաճառել, աշխատանքներ կատարել կամ ծառայություններ մատուցել **եկամուտ ստանալու նպատակով**, ընդ որում՝ գործունեության արդյունքում եկամտի կամ վնասի փաստացի ստացումը նշանակություն չի ունենում գործունեությունը ձեռնարկատիրական որակելու համար, եթե առկա է եղել եկամուտ ստանալու նպատակը:

Հայաստանի Հանրապետությունում առանց պետական գրանցման արգելվում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար անձը պետք է գրանցվի որպես տնտեսավարող սուբյեկտ՝ կարող է գրանցվել կամ որպես անհատ ձեռնարկատեր, կամ հիմնադրել իրավաբանական անձ՝ կազմակերպություն:

Տնտեսավարող սուբյեկտի գործունեությունն որպես փոքր և միջին ձեռնարկատիրություն որոկելու չափորոշիչները սահմանված են «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով (28 դեկտեմբերի 2000թ., ՀՕ-121), համաձայն որի Հայաստանի Հանրապետությունում փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտները դասակարգվում են՝

ա) գերփոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում 5 մարդը.

բ) փոքր՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝

- արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում - 50,
- շինարարության և էներգետիկայի բնագավառում - 25,
- գիտության և կրթության բնագավառում - 25,
- տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում - 15 մարդը.

գ) միջին՝ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր, որոնց աշխատողների միջին ցուցակային թվաքանակը չի գերազանցում՝

- արդյունաբերության և նյութական արտադրության այլ ճյուղերում - 100,

- շինարարության և էներգետիկայի բնագավառում - 50,
- գիտության և կրթության բնագավառում - 50,
- տրանսպորտի, առևտրի և ծառայությունների բնագավառում - 30 մարդը:

Փոքր կամ միջին ձեռնարկություն (այսուհետ՝ ՓՄՁ) համարվող առևտրային կազմակերպությունը կարող է որպես իրավաբանական անձ ստեղծվել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ ձևերով:

Իրավաբանական անձ է համարվում այն կազմակերպությունը, որը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Իրավաբանական անձը պետք է ունենա ինքնուրույն հաշվեկշիռ:

Իրավաբանական անձինք կարող են լինել իրենց գործունեությամբ շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կամ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ:

Իրավաբանական անձի գույքի կազմավորմանը մասնակցելու կապակցությամբ՝ նրա հիմնադիրները (մասնակիցները) այդ իրավաբանական անձի նկատմամբ ունեն կամ չունեն պարտավորական իրավունքներ:

Իրավաբանական անձանց թվին, որոնց նկատմամբ նրանց հիմնադիրները (մասնակիցները) ունեն պարտավորական իրավունքներ, պատկանում են տնտեսական ընկերակցությունները և ընկերությունները:

Տնտեսական ընկերակցություններ և ընկերություններ են համարվում իրենց հիմնադիրների (մասնակիցների)՝ բաժնեմասերի բաժանված կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ ունեցող առևտրային կազմակերպությունները:

Հիմնադիրների (մասնակիցների) ավանդների հաշվին ստեղծված, ինչպես նաև տնտեսական ընկերակցության կամ ընկերության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքը նրան է պատկանում սեփականության իրավունքով:

Տնտեսական ընկերակցությունները կարող են ստեղծվել լիակատար ընկերակցության կամ վստահության վրա հիմնված ընկերակցության (կոմանդիտային ընկերակցության) ձևով:

Լիակատար ընկերակցությունների մասնակիցներ ու վստահության վրա հիմնված ընկերակցությունների լիակատար ընկերներ կարող են լինել միայն անհատ ձեռնարկատերերը և (կամ) առևտրային կազմակերպությունները:

Տնտեսական ընկերությունները կարող են ստեղծվել սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության կամ բաժնետիրական ընկերության ձևով:

Տնտեսական ընկերությունների մասնակիցներ ու վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատուներ կարող են լինել քաղաքացիները և իրավաբանական անձինք:

Տնտեսական ընկերակցության կամ ընկերության գույքում ներդրված ավանդը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

1.1.

Լիակատար ընկերակցություն

Լիակատար է համարվում այն ընկերակցությունը, որի մասնակիցները (լիակատար ընկերներ), կանոնադրությանը համապատասխան, ընկերակցության անունից զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ և իրենց պատկանող գույքով պատասխանատվություն են կրում նրա պարտավորությունների համար:

Անձը կարող է լինել միայն մեկ լիակատար ընկերակցության մասնակից:

Լիակատար ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է պարունակի նրա բոլոր մասնակիցների անունները (անվանումները) և «լիակատար ընկերակցություն» բառերը կամ մեկ կամ մի քանի մասնակիցների անունը (անվանումը)՝ ավելացրած «և ընկերներ» ու «լիակատար ընկերակցություն» բառերը:

Լիակատար ընկերակցության կանոնադրությամբ սահմանվում են նրա անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, ընկերակցության բաժնեհավաք կապիտալի չափը և կազմը, բաժնեհավաք կապիտալում մասնակիցներից յուրաքանչյուրի բաժնեմասի չափը ու փոփոխման կարգը, նրանց ներդրած ավանդների կազմը և կարգը, ավանդներ ներդնելու պարտականությունները խախտելու համար մասնակիցների պատասխանատվությունը:

Լիակատար ընկերակցությունը կառավարվում է բոլոր մասնակիցների ընդհանուր համաձայնությամբ: Լիակատար ընկերակցության կանոնադրությամբ կարող են նախատեսվել մասնակիցների ձայների մեծամասնությամբ որոշում ընդունելու դեպքեր: Ընկերակցության յուրաքանչյուր մասնակից ունի մեկ ձայն, եթե նրա մասնակիցների ձայների քանակը որոշելու այլ կարգ նախատեսված չէ կանոնադրությամբ:

Լիակատար ընկերակցության յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի գործել ընկերակցության անունից, եթե կանոնադրությամբ նախատեսված չէ, որ նրա բոլոր մասնակիցները գործերը վարում են համատեղ, կամ գործերը վարելը հանձնարարված է առանձին մասնակիցների: Մասնակիցների կողմից ընկերակցության գործերը համատեղ վարելու դեպքում յուրաքանչյուր գործարք կնքելու և կատարելու համար պահանջվում է ընկերակցության բոլոր մասնակիցների համաձայնությունը:

Եթե ընկերակցության գործերը վարելը նրա մասնակիցները հանձնարարել են իրենցից մեկին կամ մի քանիսին, մնացած մասնակիցներն ընկերակցության անունից գործարքներ կնքելու և կատարելու համար պետք է ունենան այդ մասնակցի (մասնակիցների) լիազորագիրը:

Լիակատար ընկերակցության մասնակիցը պարտավոր է իր ավանդը ներդնել ընկերակցության բաժնեհավաք կապիտալում մինչև ընկերակցության գրանցումը:

Լիակատար ընկերակցության շահույթը և վնասները բաշխվում են նրա մասնակիցների միջև ընկերակցության բաժնեհավաք կապիտալում նրանց բաժնեմասերին համամասնորեն, եթե այլ բան նախատեսված չէ կանոնադրությամբ կամ մասնակիցների համաձայնությամբ:

Եթե ընկերակցության կրած վնասների հետևանքով նրա գուտ ակտիվների արժեքը պակասում է բաժնեհավաք կապիտալի չափից, ընկերակցության ստացած շահույթը մասնակիցների միջև չի բաշխվում այնքան ժամանակ, մինչև գուտ ակտիվների արժեքը գերազանցի բաժնեհավաք կապիտալի չափը:

Լիակատար ընկերակցության մասնակիցներն իրենց գույքով համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում ընկերակցության պարտավորությունների համար:

Լիակատար ընկերակցությունը կարող է լուծարվել նրա հիմնադիրների (մասնակիցների) որոշմամբ, դատարանի վճռով՝ պետական գրանցումն անվավեր ճանաչվելու դեպքում կամ առանց թույլտվության (լիցենզիայի) կամ օրենքով արգելված գործունեություն իրականացնելու, սնանկության հետևանքով և օրենսգրքով նախատեսված այլ դեպ-

քերում: Լիակատար ընկերակցությունը պետք է լուծարվի նաև այն դեպքում, երբ ընկերակցությունում մնում է միայն մեկ մասնակից, որը այդպիսին դառնալու պահից սկսած վեց ամսվա ընթացքում, իրավունք ունի սահմանված կարգով ընկերակցությունը վերակազմավորել տնտեսական ընկերության:

1.2.

Վստահության վրա հիմնված ընկերակցություն

Վստահության վրա հիմնված ընկերակցություն (կոմանդիտ ընկերակցություն) է համարվում այն ընկերակցությունը, որում ընկերակցության անունից ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և իրենց գույքով ընկերակցության պարտավորությունների համար պատասխանատվություն կրող մասնակիցների (լիակատար ընկերներ) հետ միասին կան մեկ կամ մի քանի մասնակից ավանդատուներ (կոմանդիտիստներ), որոնք իրենց ներդրած ավանդների գումարների սահմաններում կրում են ընկերակցության գործունեության հետ կապված վնասների ռիսկը և չեն մասնակցում ընկերակցության իրականացրած ձեռնարկատիրական գործունեությանը:

Անձը կարող է լիակատար ընկեր լինել միայն վստահության վրա հիմնված մեկ ընկերակցությունում, ընդ որում լիակատար ընկերակցության մասնակիցը չի կարող լիակատար ընկեր լինել վստահության վրա հիմնված ընկերակցությունում և հակառակը:

Վստահության վրա հիմնված ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է պարունակի բոլոր լիակատար ընկերների անունները (անվանումները) և «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերը կամ առնվազն մեկ լիակատար ընկերոջ անուն (անվանում)՝ ավելացրած «և ընկերներ» ու «վստահության վրա հիմնված ընկերակցություն» բառերը:

Վստահության վրա հիմնված ընկերակցության կանոնադրությամբ սահմանվում են նրա անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, ընկերակցության բաժնեհավաք կապիտալի չափը և կազմը, բաժնեհավաք կապիտալում լիակատար ընկերներից յուրաքանչյուրի բաժնեմասի չափը ու փոփոխման կարգը, նրանց ներդրած ավանդների կազմը և կարգը, ավանդներ ներդնելու պարտականությունները խախտելու համար նրանց պատասխանատվությունը, ավանդատուների կողմից ներդրվող ավանդների չափը:

Վստահության վրա հիմնված ընկերակցությունը կառավարում են լիակատար ընկերները: Ավանդատուներն իրավունք չունեն մասնակցել վստահության վրա հիմնված ընկերակցության կառավարմանը և գործերի վարմանը, առանց լիազորագրի հանդես գալ նրա անունից: Նրանք իրավունք չունեն վիճարկել ընկերակցության կառավարման և գործերի վարման հետ կապված լիակատար ընկերների գործողությունները:

Վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատուն պարտավոր է ավանդ ներդնել բաժնեհավաք կապիտալում: Ավանդի ներդրումը հավաստվում է ընկերակցության կողմից ավանդատուին տրվող՝ մասնակցության մասին վկայականով:

Վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատուն իրավունք ունի՝

- 1) ստանալ ընկերակցության շահույթի մասը, որը կանոնադրությամբ նախատեսված կարգով հասնում է բաժնեհավաք կապիտալում ունեցած նրա բաժնեմասին.
- 2) ծանոթանալ ընկերակցության տարեկան հաշվետվություններին և հաշվեկշիռներին.
- 3) ֆինանսական տարվա ավարտից հետո դուրս գալ ընկերակցությունից և կանոնադրությամբ նախատեսված կարգով ստանալ իր ավանդը.
- 4) բաժնեհավաք կապիտալում ունեցած իր բաժնեմասը կամ դրա մասը հանձնել այլ ավանդատուի կամ երրորդ անձի:

Վստահության վրա հիմնված ընկերակցությունը լուծարվում է մասնակից բոլոր ավանդատուների՝ նրանից դուրս գալու դեպքում: Սակայն լիակատար ընկերներն իրավունք ունեն լուծարելու փոխարեն վստահության վրա հիմնված ընկերակցությունը վերակազմավորել լիակատար ընկերակցության: Վստահության վրա հիմնված ընկերակցությունը պահպանվում է, եթե նրանում մնում են թեկուզև մեկ լիակատար ընկեր և մեկ ավանդատու:

Վստահության վրա հիմնված ընկերակցության լուծարման՝ ներառյալ սնանկության դեպքում, պարտատերերի պահանջները բավարարելուց հետո ընկերակցության մնացած գույքից ավանդատուներն իրենց ավանդներն ստանալու նախապատվության իրավունք ունեն լիակատար ընկերների նկատմամբ:

Դրանից հետո ընկերակցության մնացած գույքը բաշխվում է լիակատար ընկերների միջև՝ ընկերակցության բաժնեհավաք կապիտա-

լում նրանց բաժնեմասերին համամասնորեն, եթե այլ կարգ նախատեսված չէ կանոնադրությամբ կամ լիակատար ընկերների համաձայնությամբ:

1.3.

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆիրմային անվանումը պետք է պարունակի տարբերակող նշանակության հատուկ, հասարակ և (կամ) այլ անուն, ինչպես նաև՝ «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն» բառերը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավական վիճակը, ինչպես նաև նրա մասնակիցների իրավունքները և պարտականությունները սահմանված են «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (21 նոյեմբերի 2001 թ., ՀՕ-252):

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաժնետիրական ընկերության, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դատական կարգով լուծարվի, եթե նրա մասնակիցների թիվը չպակասի մինչև նշված քանակը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրությամբ սահմանվում են նրա անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, կանոնադրական կապիտալի չափը,

մասնակիցներից յուրաքանչյուրի բաժնեմասը, նրանց ներդրած ավանդների կազմը և կարգը, ավանդները ներդնելու պարտականությունները խախտելու համար պատասխանատվությունը, ընկերության կառավարման մարմինների կազմը և իրավասության ու նրանց որոշումների ընդունման կարգը:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է նրա մասնակիցների ավանդների արժեքից:

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը, որը չպետք է պակաս լինի փաստաթղթերը պետական գրանցման ներկայացնելու պահին սահմանված նվազագույն աշխատավարձի 50-ապատիկից (50,0 հազ. դրամից):

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հիմնադիրները պարտավոր են մինչև ընկերության գրանցումն ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը:

Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազման մասին և սահմանված կարգով գրանցել դրա նվազումը: Եթե ընկերության նշված ակտիվների արժեքը պակասում է կանոնադրական կապիտալի վերը նշված նվազագույն չափից, ընկերությունը ենթակա է լուծարման:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում թույլատրվում է նրա բոլոր պարտատերերին տեղեկացնելուց հետո: Վերջիններս այդ դեպքում իրավունք ունեն պահանջել վաղաժամկետ կատարելու կամ դադարեցնելու ընկերության համապատասխան պարտավորությունները և հատուցելու վնասները:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում ստեղծվում է գործադիր մարմին (կոլեգիալ և (կամ) միանձնյա), որն ընթացիկ ղեկավարություն է իրականացնում նրա գործունեության նկատմամբ և հաշվետու է նրա մասնակիցների ընդհանուր ժողովին: Ընկերության կառավարման միանձնյա մարմնի կազմում կարող են ընտրվել նաև ընկերությանը չմասնակցող անձինք:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը նրա մասնակիցների միաձայն որոշմամբ կարող է կամոլվին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել բաժնետիրական ընկերության:

1.4.

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Նման ընկերության մասնակիցները նրա պարտավորությունների համար համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում իրենց գույքով՝ ընկերության կանոնադրությամբ բոլորի համար միանման որոշված իրենց ավանդների արժեքի բազմապատիկի չափով:

Մասնակիցներից մեկի սնանկության դեպքում ընկերության պարտավորությունների համար նրա պատասխանատվությունը մյուս մասնակիցների միջև բաշխվում է նրանց ավանդներին համամասնորեն, եթե պատասխանատվության բաշխման այլ կարգ նախատեսված չէ ընկերության կանոնադրությամբ:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության ֆիրմային անվանումը պետք է պարունակի տարբերակող նշանակության հատուկ, հասարակ և (կամ) այլ անուն, ինչպես նաև՝ «լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերություն» բառերը:

Լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառվում են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասին օրենսդրությամբ սահմանված կանոնները:

1.5.

Բաժնետիրական ընկերություն

Բաժնետիրական ընկերություն է համարվում այն ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը բաժանված է որոշակի թվով բաժնետոմսերի: Բաժնետոմսեր թողարկելու իրավունք ունեն միայն բաժնետիրական ընկերությունները:

Բաժնետիրական ընկերության մասնակիցները (բաժնետերերը) պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Բաժնետիրական ընկերությունը կարող է ստեղծվել մեկ անձի կողմից կամ կազմված լինել մեկ անձից՝ մեկ բաժնետիրոջ կողմից ընկե-

րության բոլոր բաժնետոմսերը ձեռք բերելու դեպքում: Այդ մասին տեղեկությունները պետք է պարունակվեն ընկերության կանոնադրությունում, գրանցվեն և հրապարակվեն ի գիտություն բոլորի:

Բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանումը պետք է պարունակի տարբերակող նշանակության հատուկ, հասարակ և (կամ) այլ անուն, ինչպես նաև ներառի «բայ բաժնետիրական ընկերություն» կամ «փակ բաժնետիրական ընկերություն» բառերը:

Բաժնետիրական ընկերության իրավական վիճակը և բաժնետերերի իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով (27 հոկտեմբերի 2001թ., ՀՕ-232):

Բաժնետիրական ընկերությունը, որի մասնակիցներն առանց մյուս բաժնետերերի համաձայնության կարող են օտարել իրենց պատկանող բաժնետոմսերը, համարվում է **բայ բաժնետիրական ընկերություն**: Նման բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պայմաններով անցկայցել իր թողարկած բաժնետոմսերի բայ բաժանորդագրություն և դրանց ազատ վաճառք:

Բայ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է ամեն տարի, ի գիտություն բոլորի, հրապարակել իր տարեկան հաշվետվությունը և հաշվապահական հաշվեկշիռը:

Բաժնետիրական ընկերությունը, որի բաժնետոմսերը բաշխվում են միայն նրա հիմնադիրների կամ նախապես որոշված այլ անձանց միջև, համարվում է **փակ բաժնետիրական ընկերություն**: Նման ընկերությունն իրավունք չունի անցկայցել իր թողարկած բաժնետոմսերի բայ բաժանորդագրություն կամ անսահմանափակ թվով անձանց առաջարկել այլ կերպ ձեռք բերելու դրանք:

Փակ բաժնետիրական ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը, հակառակ դեպքում, այն մեկ տարվա ընթացքում ենթակա է վերակազմավորման բայ բաժնետիրական ընկերության, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո՝ դատական կարգով լուծարման, եթե մասնակիցների թիվը չնվազի մինչև նշված քանակը:

Բաժնետիրական ընկերության կանոնադրությամբ սահմանվում են նրա անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, ընկերության կողմից թողարկվելիք բաժնետոմսերի տեսակները, դրանց անվանական արժեքն ու քանակը, ընկերության կանոնադրական կապիտալի չափը, բաժնետերերի իրավունքները, ըն-

կերության կառավարման մարմինների կազմը և իրավասության ու նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը՝ ներառյալ այն հարցերը, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն կամ ձայների որակյալ մեծամասնությամբ:

Բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից: Ընկերության կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Կանոնադրական կապիտալի նվազագույն չափը չպետք է պակաս լինի բայց ընկերության համար՝ պետական գրանցման պահին գործող նվազագույն աշխատավարձի հազարապատիկ չափից (1 մլն.դրամ), փակ ընկերության համար՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկ չափից (100 հազ.դրամ):

Բաժնետիրական ընկերության հիմնադիրները պարտավոր են մինչև ընկերության գրանցումն ամբողջությամբ վճարել կանոնադրական կապիտալը:

Եթե երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը: Եթե ընկերության նշված ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ընկերությունը ենթակա է լուծարման:

Բաժնետիրական ընկերությունը բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել: Բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կամ առևտրային կոոպերատիվի:

1.6.

Կոոպերատիվներ

Կոոպերատիվ է համարվում քաղաքացիների և իրավաբանական անձանց անդամության վրա հիմնված ու իր անդամների գույքային փայլավճարների միավորման միջոցով մասնակիցների նյութական և այլ կարիքների բավարարման նպատակով ստեղծված կամավոր միավորումը:

Կոոպերատիվի կանոնադրությամբ սահմանվում են նրա անվանու-
մը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի կառավարման կարգը, կո-
պերատիվի անդամների փայավճարների չափը, դրանք վճարելու կարգը
և այդ պարտավորությունը խախտելու համար կոոպերատիվի անդամնե-
րի պատասխանատվությունը, կոոպերատիվի կառավարման մարմիննե-
րի կազմը, իրավասության ու նրանց որոշումների ընդունման կարգը՝ նե-
րառյալ այն հարցերով, որոնցով որոշումներն ընդունվում են միաձայն
կամ ձայների որակյալ մեծամասնությամբ, կոոպերատիվի անդամների
կողմից կոոպերատիվի կրած վնասները հատույելու կարգը:

Կոոպերատիվի անվանումը պետք է ցույցում պարունակի նրա գոր-
ծունեության հիմնական նպատակի մասին, ինչպես նաև ներառի «կո-
պերատիվ» բառը:

Կոոպերատիվի սեփականության ներքո գտնվող գույքը, կոպե-
րատիվի կանոնադրությամբ համապատասխան, բաժանվում է նրա
անդամների փայերի: Կոոպերատիվի անդամը պարտավոր է մինչև կո-
ոպերատիվի գրանցումն ամբողջությամբ մուծել փայավճարը, եթե այլ
բան նախատեսված չէ կոոպերատիվի կանոնադրությամբ:

Կոոպերատիվի կանոնադրությամբ կարող է սահմանվել, որ կո-
պերատիվին պատկանող գույքի որոշակի մասը կանոնադրությամբ
սահմանված նպատակներով օգտագործվող անբաժանելի ֆոնդ է: Ան-
բաժանելի ֆոնդերն օգտագործելու մասին որոշումը կոոպերատիվի
անդամներն ընդունում են միաձայն, եթե այլ բան նախատեսված չէ կո-
ոպերատիվի կանոնադրությամբ:

Կոոպերատիվի անդամները պարտավոր են տարեկան հաշվեկշռի
հաստատումից հետո՝ երկու ամսվա ընթացքում, լրացույցի վճարների
միջոցով փակել առաջացած վնասները: Այս պարտականությունը չկա-
տարելու դեպքում կոոպերատիվը, պարտատերերի պահանջով, կարող
է լուծարվել դատական կարգով:

Կոոպերատիվի անդամները նրա պարտավորությունների համար
համապարտ սուբսիդիար պատասխանատվություն են կրում կոոպե-
րատիվի յուրաքանչյուր անդամի լրացույցի վճարի չմուծված մասի
սահմաններում:

Կոոպերատիվի լուծարումից հետո մնացած գույքը բաշխվում է
նրա անդամների միջև՝ կոոպերատիվի կանոնադրությամբ համապա-
տասխան:

Կոոպերատիվն իր անդամների ընդհանուր ժողովի որոշմամբ, ինչ-
պես նաև օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով, կարող է կանո-
վին վերակազմակերպվել կամ լուծարվել:

2.

ՓՄՁ-ՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

ՓՄՁ-ի պետական գրանցումը և նրա գործունեության դադարեցումն իրականացվում են «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով (26 ապրիլի 2001թ., ՀՕ-169) սահմանված կարգով՝ ՀՀ արդարադատության նախարարության կազմում գործող պետական ռեգիստրի գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանման կողմից:

Պետական գրանցումն ստեղծվող իրավաբանական անձի իրավունակության ճանաչումն է պետության կողմից: ՓՄՁ-ն ստեղծված է համարվում նրա պետական գրանցման պահից, իսկ նրա գործունեությունը դադարած՝ գործունեության դադարման պետական գրանցման պահից, ընդ որում պետական գրանցման են ենթակա նաև կազմակերպության կանոնադրությունում կատարվող փոփոխություններն և լրացումները: ՓՄՁ-ն համարվում է գրանցված իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում օրենքով սահմանված տեղեկությունների գրառումը կատարելու պահից, ինչը հավաստվում է գրանցող մարմնի կողմից տրված համապատասխան վկայականով:

Իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրառվում են հետևյալ տեղեկությունները՝

- ա) անվանումը, ներառյալ՝ ֆիրմային անվանումը, կազմակերպական-իրավական ձևը.
- բ) իրավաբանական անձի պետական գրանցման համարը.
- գ) պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը.
- դ) պետական գրանցման վկայականի սերիան և համարը.
- ե) հիմնադրման տարին.
- զ) հիմնադրման եղանակը.
- է) իրավաբանական անձի կողը.
- ը) հիմնադիրների (մասնակիցների, անդամների, գործընկերների, բաժնետերերի) կազմը և տեղեկություններ նրանց վերաբերյալ (ֆիզիկական անձանց դեպքում՝ անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության (հաշվառման) վայ-

րը, իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը, գրանցման վկայականի տվյալները, գտնվելու վայրը)։

- բ) կանոնադրական կապիտալի (բաժնեհավաք կապիտալի, բաժնային ֆոնդի և այլն) չափը.
- ժ) կանոնադրական կապիտալում (բաժնեհավաք կապիտալում, բաժնային ֆոնդում և այլն) հիմնադիրների ներդրումների չափը.
- ժա) իրավաբանական անձի գտնվելու վայրը (փոստային հասցեն), այդ թվում՝ հեռախոսը և կապի այլ միջոցներ.
- ժբ) գործունեության ժամկետը, եթե ստեղծված է որոշակի ժամանակով.
- ժգ) տեղեկություններ լուծարման գործընթացում գտնվելու մասին.
- ժդ) գործունեության (գոյության) դադարման դեպքում՝ նշում այդ մասին.
- ժե) տեղեկություններ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի մասին (անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները)։

Պետական գրանցման համար իրավաբանական անձինք ներկայացնում են՝

- ա) հիմնադրի (հիմնադիրների) լիազորված անձի դիմումը.
- բ) իրավաբանական անձ հիմնադրելու մասին հիմնադրի (հիմնադիրների) ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) արձանագրությունը՝ ստորագրված նախագահի և քարտուղարի կողմից (բացառությամբ մեկ ֆիզիկական անձով հիմնադրվող իրավաբանական անձանց)։ Եթե հիմնադիրների կազմում առկա է իրավաբանական անձ, ապա անհրաժեշտ է ներկայացնել հիմնադիր իրավաբանական անձի կառավարման լիազորված մարմնի որոշումը.
- գ) կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ հաստատված ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից.
- դ) պետական տուրքի վճարման անդորրագիրը.
- ե) «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված տեղեկություն տրամադ-

րող անձինք՝ նաև իրավաբանական անձին հանձնվող գույքի օրինականության վերաբերյալ հայտարարություն՝ նշելով հանձնվող գույքի կազմը, չափը և ծագման աղբյուրները, եթե հանձնվող գույքի արժեքը գերազանցում է 25 միլիոն դրամը:

Օտարերկրյա հիմնադիր (մասնակից) իրավաբանական անձով իրավաբանական անձինք պետական գրանցման համար, բացի վերը նշված փաստաթղթերից, ներկայացնում են նաև քաղվածք՝ տվյալ երկրի առևտրային գրանցամատյանից, կամ օտարերկրյա ներդրողի իրավական կարգավիճակը հաստատող այլ համագոր փաստաթուղթ և նրա հիմնադիր փաստաթղթերը (կամ համապատասխան քաղվածքները)՝ վավերացված և հայերեն թարգմանված:

Իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման համար ներկայացվում են՝

ա) դիմում.

բ) իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ դրա համար կանոնադրությամբ լիազորված իրավաբանական անձի մարմնի որոշումը լուծարման հաշվեկշիռը հաստատելու մասին.

գ) տեղեկանքներ հարկային մարմիններից՝ պարտավորությունների բացակայության մասին.

դ) կնիքը հանձնելու մասին համապատասխան փաստաթուղթ.

ե) պետական գրանցման վկայականը.

զ) իր կողմից տեղեկանք՝ «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջների կատարման մասին՝ կազմակերպել իր գործունեությամբ առաջացած անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացումը և հանձնումը պետական կամ համայնքային արխիվ:

ՓՄՁ-ի պետական գրանցման, կանոնադրությունների փոփոխությունների պետական գրանցման, կորցրած պետական գրանցման վկայականի փոխարեն նորը տալու, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների հաշվառման, ինչպես նաև պետական միասնական գրանցամատյանի տեղեկություններից օգտվելու համար գանձվում է տուրք՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափերով:

3.

ՓՄՁ-ՆԵՐԻ ՈՐՊԵՍ ԸԱՐԿ ԿՃԱՐՈՂ ԵՎ ԱՊԱՇՈՎԱԴԻՐ ԸԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԸՆԶՎԱՌԿԵԼԸ

ՓՄՁ-ն պետական գրանցում ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում պարտավոր է որպես հարկ վճարող հաշվառման կանգնել հարկային մարմնում ու ստանալ` ՀՀ կառավարության 1995թ. հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում հարկ վճարողների հաշվառման համարների համակարգի սահմանման մասին» N 321 որոշմանը համապատասխան, հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ): Որպես ապահովադիր ՓՄՁ-ները հաշվառվում են այն հարկային տեսչություններում, որտեղ հաշվառվում են որպես հարկ վճարող:

Հարկային մարմնում հաշվառվելու նպատակով ՓՄՁ-ն դիմում է իր պետական գրանցման վայրի տարածքային հարկային տեսչություն և լրացնում է ՀՎՀՀ ստանալու համար քարտը, որում նշվում է` իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման վկայականի համարը և ամսաթիվը, գտնվելու վայրը (հասցեն), հեռախոսի համարները, դասակարգման հատկանիշները, կազմակերպական-իրավական ձևը, սեփականության ձևը, գործունեության տեսակները, պետական գրանցումը կատարող մարմնի լրիվ անունը, գործունեության հասցեները, վերադասի լրիվ անվանումը, բանկային հաշվի համարները:

Հարկային մարմնի կողմից ՓՄՁ-ի ՀՎՀՀ-ն և ապահովադրի ծածկագիրը տրամադրվում են նշված քարտը (դիմումը) լրացնելույ և տարածքային հարկային մարմին մուտքագրվելույ հետո` ոչ ուշ քան 3-օրյա ժամկետում:

ՀՎՀՀ-ն պարտադիր պետք է լինի իր կողմից կնքվող փաստաթղթերի, ներմուծման մաքսային փաստաթղթերի, հարկային մարմիններին ներկայացվող հաշվարկների, հաշվետվությունների, հայտարարագրերի, տեղեկությունների վրա: ՀՎՀՀ-ն (որը միաժամանակ նաև ՓՄՁ-ի որպես ապահովադիր ծածկագիրն է) միակն է, ենթակա չէ որևէ ընթացիկ փոփոխման և կազմված է ութանիշ թվից:

ՓՄՁ-ի վերը բերված քարտային տվյալներում փոփոխություններ տեղի ունենալու դեպքում նա պարտավոր է 10-օրյա ժամկետում դրա մասին գրավոր հայտնել իր հաշվառման վայրի հարկային տեսչություն:

4.

ԳՐԹՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆ

ՓՄՁ-ի կողմից իրականացվող գործունեության այն տեսակները, որոնց ցանկը սահմանված է «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով, ՓՄՁ-ն կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա:

Լիցենզիան՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն է և այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ է, որը տրվում է միայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության յուրաքանչյուր տեսակով զբաղվելու համար:

Լիցենզիան չի կարող այլ անձանց օգտագործման տրվել, օտարվել կամ գրավադրվել, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Լիցենզիայի գործողությունը չի տարածվում լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:

Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով զբաղվելու իրավունք ունեցող սուբյեկտները կարող են զբաղվել լիցենզավորման ենթակա գործունեությամբ՝ լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից:

Լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելու համար կարող են տրվել լիցենզիաների հետևյալ տեսակները՝

- 1) պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ.
- 2) բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաներ:

Պարզ ընթացակարգով տրվող լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից տրված գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված հսկողություն:

Պարզ լիցենզիան տրվում է առանց լիցենզավորող հանձնաժողովի որոշման:

Պարզ լիցենզիան տրվում է անժամկետ՝ հայտատուի կողմից օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց 3 օր հետո:

Մինչև լիցենզավորման ենթակա գործունեությամբ զբաղվելը պարզ լիցենզիա ստացած անձը պարտավոր է լիցենզավորող մարմիններ ուղարկել գրավոր հաղորդագրություն, որտեղ պետք է նշվեն լիցենզավորված իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, ինչպես նաև նրանց կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման վայրը (նշվում է, եթե օրենքի համաձայն լիցենզավորման ենթակա գործունեությունը պետք է իրականացվի միայն համապատասխան վայրում), լիցենզիայի վավերապայմանները, լիցենզավորման ենթակա գործունեությունն սկսելու օրը:

Պարզ լիցենզիա ստանալու համար հայտատուն լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- 1) լիցենզիա ստանալու մասին հայտը, նշելով՝
 - ա) իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը.
 - բ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,
 - գ) օրենքով նախատեսված այլ տեղեկատվություն,
 - դ) հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկատվություն.
- 2) պետական գրանցման վկայականի պատճենը.
- 3) օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր:

Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիան լիցենզավորող մարմնի կողմից լիցենզավորման կարգերին համապատասխան տրվող գործունեություն իրականացնելու թույլտվությունն է, որով սահմանվում են նաև տվյալ գործունեության իրականացման համար պարտադիր պահանջներ կամ պայմաններ, և դրանց պահպանման նկատմամբ իրականացվում է օրենքով սահմանված կարգով հսկողություն:

Բարդ լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

Բարդ լիցենզիան տրվում է անժամկետ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Օրենքով նախատեսված դեպքերում բարդ լիցենզիան կարող է տրվել մրցույթով, որն իրականացվում է լիցենզավորման կարգերին համապատասխան:

Բարդ լիցենզիաները տրվում են լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված լիցենզավորող հանձնաժողովների եզրակացությունների հիման վրա:

Բարդ լիցենզիա ստանալու համար հայտատուն լիցենզավորող մարմին է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

- 1) լիցենզիա ստանալու մասին հայտը, նշելով՝
 - ա) իրավաբանական անձի անվանումը և կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու և գործունեության իրականացման վայրերը
 - բ) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը, որը հայտատուն մտադիր է իրականացնել,
 - գ) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ տեղեկատվություն,
 - դ) հարկ վճարողի հաշվառման համարի վերաբերյալ տեղեկատվություն.
- 2) պետական գրանցման վկայականի պատճենը.
- 3) անձի մասնագիտական որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ որակավորում պահանջող գործունեության տեսակով զբաղվելու համար հայտ ներկայացվելու դեպքում.
- 4) օրենքով կամ լիցենզավորման կարգերով նախատեսված այլ փաստաթղթեր:

Լիցենզիա ստանալու համար վերը բերված անհրաժեշտ փաստաթղթերը կարող են լիցենզավորող մարմին հանձնվել առձեռն կամ փոստով:

Եթե օրենքով սահմանված ժամկետներում լիցենզիա ստանալու հայտը չի մերժվում, և հայտատուն օրենքով սահմանված կարգով և չափով վճարել է պետական տուրքը և վճարումը հավաստող փաստաթուղթը ներկայացրել է լիցենզավորող մարմին, ապա լիցենզավորող մարմինը պարտավոր է այդ ժամկետին հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուին տրամադրել լիցենզիա, և լիցենզիան

հայտատուին հանձնելու կամ ուղարկելու օրվանը հաջորդող օրվանից հայտատուն իրավունք ունի զբաղվելու տվյալ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով:

Արգելվում է առանց լիցենզիայի զբաղվել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով:

Առանց լիցենզիայի «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեությանը զբաղվելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Մասնավորապես՝ առանց լիցենզիայի լիցենզավորման ենթակա գործունեությանը զբաղվելը դիտվում է ապօրինի գործունեություն և գանձվում տուգանք՝ այդ գործունեության արդյունքում հարկային օրենսդրությանը սահմանված կարգով հաշվարկված իրացման շրջանառության (համախառն եկամտի) 50%-ի չափով :

Լիցենզիայի կամ դրա կրկնօրինակի տրման, լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման, լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզիաների գրանցամատյաններից այլ անձանց տեղեկությունների տրամադրման, որակավորման քննությանը մասնակցելու համար գանձվում է **պետական տուրք**՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Լիցենզավորման ենթակա գործունեության առանձին տեսակների իրականացման համար նախատեսված են տարեկան տուրքեր:

4.1.

Պետական տուրքերը, տեղական տուրքերը և տեղական վճարները

Հայաստանի Հանրապետությունում **պետական տուրքը** պետական մարմինների լիազորությունների իրականացմանը պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով (10 հունվարի 1998 թ., ՀՕ-186) սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար պետական կամ համայնքների բյուջեներ մուծվող պարտադիր վճար է: ՓՄՁ-ն հանդիսանում է պետական տուրք վճարող, եթե օգտվում է օրենքով սահմանված ծառայություններից կամ գործողություններից:

Պետական տուրքը գանձվում է, մասնավորապես՝

- դատարան տրվող (հայյա)դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռա-

բեկ բողոքների, դատարանների կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ տալու համար,

- նոտարական գործողությունների համար,
- պետական գրանցման համար,
- գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, լիցենզավորվող գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար:

Պետական տուրքը գանձվում է մինչև համապատասխան ծառայության մատուցումը կամ գործողության իրականացումը:

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի նկատմամբ կամ բազային տուրքի (բազային տուրքի չափը սահմանված է 1,0 հազ. դրամ) նկատմամբ:

Օրինակ՝ առևտրային կազմակերպության պետական գրանցման համար պետական տուրքը գանձվում է բազային տուրքի 12-ապատիկի չափով (կամ՝ 12,0 հազ. դրամ), կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների պետական գրանցման համար՝ բազային տուրքի 6-ապատիկի չափով (կամ՝ 6,0 հազ. դրամ), պետական գրանցման վկայականի կրկնօրինակը տալու համար՝ բազային տուրքի 24-ապատիկի չափով (կամ՝ 24,0 հազ. դրամ):

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ, արտոնագրեր (թույլտվություններ) տալու համար պետական տուրքը գանձվում է օրենքի 19-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերով: Տարեկան պետական տուրքերի վճարումը յուրաքանչյուր տարվա համար կատարվում է մեկ տարվա ընթացքում:

Տեղական տուրքերը և վճարները սահմանված են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով (9 հունվարի 1998թ., ՀՕ-185):

Տեղական տուրքերը համայնքներում սահմանվում են՝

- համայնքի տարածքում շինարարության, շենքերը (շինությունները) և քաղաքաշինական այլ (ներառյալ՝ ժամանակավոր) օբյեկտները ամրացնելու, վերականգնելու, արդիականացնելու (բացառությամբ՝ ներքին ընթացիկ վերանորոգման և հարդարման) և արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ սկսելու թույլտվության,

- համայնքի տարածքում շենքեր (շինություններ) և քաղաքաշինական այլ օբյեկտներ քանդելու աշխատանքները սկսելու թույլտվության,
- համայնքի տարածքում ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության,
- համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու (բացառությամբ՝ շուկաներում, տոնավաճառներում, հիմնական և ոչ հիմնական շինություններում վաճառքի) թույլտվության,
- համայնքի տարածքում բաղնիքներին (սաունաներին), հանրային սննդի, զվարճանքի օբյեկտներին՝ ժամը 24⁰⁰-ից հետո աշխատելու թույլտվության,
- համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության,
- համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության,
- համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու,
- համայնքի տարածքում (բացառությամբ՝ թաղային) մարդատար տաքսու (բացառությամբ՝ երթուղային) ծառայություն իրականացնելու թույլտվության համար:

Տեղական վճարները համայնքներում սահմանվում են՝

- համայնքի տարածքում շինարարության (շինության) արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար (տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար),
- տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար (տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար),
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար (մասնակիցներից վճար):

4.2.

Կարգավորման պարտադիր վճարներ

Կարգավորման պարտադիր վճարները օրենքով սահմանված Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարներ են:

Կարգավորման պարտադիր վճարներ վճարողներ են համարվում հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող և ծառայություն մատուցող անձինք, որոնց համար հանձնաժողովը սահմանում է կարգավորվող սակագներ: Հանձնաժողովը նաև սահմանում է վճարողների հաշվառման կարգը, հաստատում է վճարողների անվանական կազմը յուրաքանչյուր տարվա համար և իրականացնում է վճարողների հաշվառումը:

Վճարողները մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը կարգավորման պարտադիր վճարների հաշվետվությունները սահմանված ձևով ներկայացնում են հարկային մարմին:

Վճարողները օրենքով սահմանված կարգով հաշվարկված և հաստատված կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի 1/4 չափով վճարները վճարում են յուրաքանչյուր եռամսյակի առաջին ամսվա երեսուհից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

Հանրային ծառայությունների ոլորտում մեկից ավելի կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց կողմից վճարման ենթակա կարգավորման պարտադիր վճարները օրենքով սահմանված կարգով հաշվարկվում և պետական բյուջե են վճարվում յուրաքանչյուր գործունեության համար առանձին:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետությունում հաշվառված վճարողների կազմի և վճարողների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի (ինչպես նաև վճարողների եռամսյակային վճարների չափի) վերաբերյալ տեղեկատվությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 15-օրյա ժամկետում, ներկայացնում է Հարկային Պետական Ծառայություն:

Ստացված տեղեկատվությունը Հարկային Պետական Ծառայությունը 3-օրյա ժամկետում տրամադրում է վճարողների հաշվառման վայրի համապատասխան հարկային մարմնին:

Պատասխանատվությունը

Կարգավորման պարտադիր վճարի վճարումները սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վճարողը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված վճարի գումարի 0.15%-ի չափով (քայքայ ոչ ավելի, քան 365 օրվա համար):

Վճարողի կողմից հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունը սահմանված ժամկետից 2 ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար վճարողից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված կարգավորման պարտադիր վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով (քայքայ ոչ ավելի, քան այդ վճարի ընդհանուր գումարն է):

Օրենքով սահմանված հաշվետվությունները չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու համար վճարողներից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով պետական բյուջե չմուծված կամ պակաս մուծված կարգավորման պարտադիր վճարի գումարի 10%-ի չափով:

Նախորդ ժամանակաշրջանների համար ներկայացված կարգավորման պարտադիր վճարի հաշվետվություններում վճարողների կողմից սխալներն ինքնուրույն հայտնաբերվելու դեպքում վճարողները կարող են հարկային մարմին ներկայացնել ճշգրտված հաշվետվություններ, որոնց հիման վրա հարկային մարմինը կատարում է այդ ժամանակաշրջանների համար պարտավորությունների վերահաշվարկ:

Հարկային մարմինների կողմից վճարողների մոտ իրականացվող ստուգումների ընթացքում վճարողի կողմից հարկային մարմիններ ներկայացված ստուգվող ժամանակաշրջանին վերաբերող հաշվարկների ճշտում չի իրականացվում:

Վճարողները պակաս ցույց տրված կարգավորման պարտադիր վճարի գումարը, ինչպես նաև հաշվարկված տույժերը և տուգանքները պետական բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

Օրենքով սահմանված կարգով չվճարված կարգավորման պարտադիր վճարի գումարի վճարումն ապահովվում է դատական կարգով՝ հարկային մարմինների ներկայացրած հայցի հիման վրա:

5.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴԿՄԱՆ ՌԵԺԻՄ

Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Հարկերը վճարվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ պետական կամ համայնքների բյուջեներ:

ՓՄՁ-ների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունը՝ ըստ հարկման ռեժիմների, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝

- ընդհանուր հարկման ռեժիմում (այն ներառում է ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, շահութահարկը) հարկվող գործունեություն և հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն (այն պայմանավորված է օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների իրականացման հետ):
- պարզեցված հարկի ռեժիմում (որը փոխարինում է ընդհանուր հարկման ռեժիմին, մասնավորապես՝ ԱԱՀ-ին և շահութահարկին) հարկվող գործունեություն և հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն:

Եթե բացառապես հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն իրականացնող ՓՄՁ-ն այլընտրանք չունի՝ նա պարտավոր է գործունեության այդ մասով վճարել հաստատագրված վճար, ապա գործունեության մնացած տեսակներով զբաղվելու դեպքում նա ունի ընտրության հնարավորություն՝ կամ ընդհանուր հարկման ռեժիմ, կամ պարզեցված հարկի ռեժիմ (եթե բավարարում է պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված պայմաններին):

5.1.

Ավելացված արժեքի հարկը

Ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի (14 մայիսի 1997թ., ՀՕ-118) համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝

ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Ապրանքի արտադրության և իրացման կամ ծառայության մատուցման բոլոր փուլերում մաս առ մաս վճարվող ԱԱՀ-ի գումարը՝ վերջին հաշվով, գանձվում է այդ ապրանքը վերջնական սպառողից, որը, սակայն, պետության առջև ԱԱՀ-ի վճարման անմիջական պարտականություն չի կրում՝ այդ պարտականությունը նա կրում է անուղղակիորեն՝ ապրանքը իրացնող կամ ծառայությունը մատուցող անձի միջոցով:

ԱԱՀ-ով հարկվող օբյեկտ է համարվում ՀՀ տարածքում իրականացվող ԱԱՀ-ով հարկվող բոլոր գործարքների (գործառնությունների) ամբողջ արժեքը, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

ԱԱՀ-ով հարկվող գործարքներ (գործառնություններ) են համարվում՝

- ա) որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը: Ընդ որում, ԱԱՀ-ով հարկվման առումով ապրանքների մատակարարում չհամարվող ցանկացած գործարք (գործառնություն) համարվում է ծառայությունների մատուցում.
- բ) անհատույց կամ մասնակի հատուցմամբ ապրանքների հատկացումը կամ ծառայությունների մատուցումը այլ անձանց.
- գ) «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ապրանքների ներմուծումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Ապրանքների մատակարարման վայր է համարվում ապրանքների գտնվելու տեղը, որտեղից դրանք փաստացի մատակարարվում են: Ապրանքները համարվում են մատակարարված ՀՀ-ում, եթե դրանք առաքվել կամ հանձնվել են գնորդին (պատվիրատուին) ՀՀ տարածքում կամ արտահանվել են Հայաստանի Հանրապետությունից: Ներմուծված ապրանքները համարվում են մատակարարված Հայաստանի Հանրապետությունում դրանց ներմուծման պահից:

Ծառայությունները համարվում են մատուցված Հայաստանի Հանրապետությունում, եթե ծառայությունների մատուցման վայրը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Ծառայությունների մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ ծառայություն մատուցող անձը իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, իսկ այդպիսի

վայրի բացակայության կամ որոշման անհնարինության դեպքում՝ նշված անձի գտնվելու վայրը (իրավաբանական հասցեն): Նշվածից բացառություն են կազմում հետևյալ դեպքերը.

- անշարժ գույքի հետ կապված ծառայությունների համար (այդ թվում՝ վարձակալության, առք ու վաճառքի գործակալների և փորձագետների ծառայությունների, շինարարության նախապատրաստման և իրականացման ծառայությունների) մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ գտնվում է անշարժ գույքը կամ նախատեսվում է դրա կառուցումը.
- տրանսպորտային ծառայությունների համար մատուցման վայր է համարվում այն տեղը, որտեղից սկսվում է բեռների, փոստի, ուղևորների և ուղեբեռների փոխադրումը (միջազգային փոխադրումների մատուցման վայրը ՀՀ տարածքում չի գտնվում).
- օժանդակ տրանսպորտային ծառայությունների (ապրանքների բեռնումը, բեռնաթափումը, բեռների մշակումը, պահպանումը և այլ ծառայություններ), շարժական գույքի գնահատման, նորոգման, տեղակայման և համանման այլ ծառայությունների մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ այդ ծառայությունները փաստացի մատուցվել են.
- արտոնագրերի, լիցենզիաների, հեղինակային իրավունքի, ապրանքանշանների և համանման այլ իրավունքների՝ այլ անձանց փոխանցման, գովազդային, խորհրդատվական, ինժեներական, իրավաբանական, հաշվապահական, փորձագիտական, թարգմանչական և համանման այլ ծառայություններ, ինչպես նաև տվյալների մշակման, ծրագրային ապահովման իրականացման, տեղեկատվության հաղորդման ծառայություններ, շարժական գույքի վարձակալության (բացառությամբ բոլոր տեսակների փոխադրամիջոցների վարձակալության) ծառայություններ օտարերկրյա իրավաբանական անձանց կամ օտարերկրյա ֆիզիկական անձանց՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված անձանց կողմից (կամ հակառակը) մատուցման դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ ծառայությունն ստացող անձն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն կամ ունի մշտական հաստատություն, որին մատուցվում են նշված ծառայությունները, իսկ դրանց բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը.

- փոխադրամիջոցների վարձակալության դեպքում ծառայության մատուցման վայր է համարվում այն վայրը, որտեղ վարձատուն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն կամ դրա բացակայության դեպքում՝ նրա իրավաբանական հասցեն կամ բնակության վայրը:

ԱԱՀ-ով չեն հարկվում (հարկման օբյեկտ չեն համարվում)՝

- պետական տուրքի գումարը.
- ՀՀ կառավարության որոշմամբ տվյալ կոնկրետ հարկ վճարողի կողմից՝ ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման անհատույց գործարքները, իսկ մասնակի հատույցմամբ գործարքների իրականացման դեպքում՝ օրենքով սահմանված կարգով որոշվող հարկվող շրջանառության և ստացված հատույցման տարբերությունը.
- հրապարակային պայմանագրերով սահմանված երաշխիքային ժամանակահատվածում իրացված ապրանքների իրացնողի կողմից անհատույց մատուցվող սպասարկման ծառայությունները, այդ ծառայությունների շրջանակներում սահմանված որակին չհամապատասխանող ապրանքների, դրանց կոմպլեկտավորող տարրերի անհատույց փոխարինումը, այն ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը, որոնց արժեքը ներառված է հրապարակային պայմանագրերի համաձայն մատակարարվող ապրանքների և մատուցվող ծառայությունների արժեքում (այդ գործարքների մասով հարկվող շրջանառություն չի առաջանում և ձեռքբերումների գծով մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի հաշվանցման ենթակա գումարների վերահաշվարկներ չեն կատարվում).
- սահմանված կարգով պետության կամ լիազորված մարմնի կողմից հաստատված սակագների կիրառման հետ կապված՝ պետական բյուջեից տրվող սուբսիդիաները, սուբվենցիաները, դրամաշնորհները:

Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է **ԱԱՀ-ից ազատելու** դեպքերը: ԱԱՀ-ից ազատելը նշանակում է, որ հարկվող շրջանառության նկատմամբ ԱԱՀ չի հաշվարկվում, իսկ այդ գործարքների հարկվող շրջանառության մասով ձեռք բերված ապրանքների և ստացված ծա-

ռալությունների գծով մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները կամ միացվում են դրանց ձեռքբերման արժեքին, կամ արտադրության ու շրջանառության ծախսերին:

ԱԱՀ-ի, մասնավորապես, ազատված են.

- հանրակրթական դպրոցները, մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնները, երաժշտական, նկարչական, արվեստի և գեղարվեստի դպրոցները, մարզադպրոցները, պրոֆտեխնիկական ուսումնարանները, որակավորման և վերաորակավորման միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ ուսման վարձի մասով.
- դպրոցական գրելու և նոտայի տետրերի, նկարչական պլոմմերի, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների իրացումը, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների իրացումը.
- գիտահետազոտական աշխատանքները.
- անասնաբուժական դեղամիջոցների իրացումը, գյուղատնտեսական արտադրանքի արտադրությունում օգտագործվող թունաքիմիկատների, պարարտանյութերի, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը՝ գյուղատնտեսական արտադրանք արտադրողներին.
- արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը.

Ուշադրություն՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-420-Ն) համաձայն, արտադրողի կողմից Հայաստանի Հանրապետությունում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումը, ինչպես նաև անասնաբուժական դեղամիջոցների իրացումը 2009թ. հունվարի 1-ից չեն հանդիսանում ԱԱՀ-ի ազատված:

- նախադպրոցական հիմնարկներում երեխաներին պահելու, տուն-ինտերնատների, մանկատների, արատներ ունեցող երեխաներ կամ հաշմանդամներ խնամող հաստատությունների,

ծերանոցներում գտնվող անձանց խնամքի հետ կապված ծառայությունները, ինչպես նաև խնամվողների կողմից այնտեղ պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը.

- թերթերի և ամսագրերի իրացումը.
- դոնորային արյան, մայրական կաթի, պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, բժշկական տեխնիկայի և պարագաների, բուժօգնության, բուժսպասարկման (այդ թվում կանխարգելիչ և ախտորոշման) ծառայությունների, բուժկանխարգելիչ ձեռնարկություններում ու կազմակերպություններում բուժման հետ կապված և այդ բուժօգնության շրջանակներում հիվանդների կողմից պատրաստված ապրանքների և կատարված ծառայությունների իրացումը.
- միջազգային ֆինանսական կազմակերպությունների վարկային կամ շնորհային ծրագրերի նախապատրաստման միջոցների հաշվին ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ՀՀ կառավարության սահմանած կարգով.
- օտարերկրյա պետությունների, միջազգային միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների, միջազգային, օտարերկրյա և ՀՀ հասարակական (ներառյալ՝ բարեգործական), կրոնական և նմանատիպ բնույթի այլ կազմակերպությունների, առանձին բարերարների կողմից ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը մարդասիրական օգնության և բարեգործական ծրագրերի (գործունեության) շրջանակներում, ինչպես նաև նման ծրագրերի իրականացման հետ անմիջականորեն կապված և դրանց համար զգալի նշանակություն ունեցող ապրանքների մատակարարումն ու ծառայությունների մատուցումը Հայաստանի Հանրապետության ԱԱՀ վճարողների կողմից:

Ուշադրություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով) ուղղակիորեն նշված չլինելու դեպքում ծրագրի (գործունեության) տարբերակումն ըստ մարդասիրական օգնության և բարեգործական բնույթի, ինչպես նաև ԱԱՀ-ից ազատվող ապրանքների և ծառայությունների շրջանակները որոշում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը.

- ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի իրացումը.
- Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող մշակութային արժեքները:

Առանձին գործարքների (դրանք սահմանված են օրենքի 16-րդ հոդվածով) իրացման շրջանառության նկատմամբ կիրառվում է **ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափ**, այսինքն հարկ չի հաշվարկվում: Սակայն, ի տարբերություն հարկից ազատման դեպքի՝ այդ գործարքների մասով ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների դիմաց մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները հաշվանցվում (պակասեցվում) են անձի այլ հարկային պարտավորությունների հաշվին: ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափը կիրառվում է, օրինակ, Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանից դուրս «արտահանում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով արտահանվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ:

ԱԱՀ-ի դրույթաչափը սահմանվում է 20%՝ ապրանքների ու ծառայությունների հարկվող շրջանառության նկատմամբ: Ապրանքների ու ծառայությունների լրիվ արժեքով հատույցման գումարի մեջ (ներառյալ 20% դրույթաչափը) ԱԱՀ-ի գումարը որոշվում է 16,67% հաշվարկային դրույթաչափով:

ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (իրացման շրջանառությունը) որոշվում է հետևյալ կարգով՝

- 1) ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքերում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց արժեքը դրամական արտահայտությամբ (ներառյալ՝ այդ արժեքին օրենքով միացվող այլ վճարումները)՝ առանց ԱԱՀ-ի, որը գնորդը պետք է վճարի մատակարարին որպես հատույցում.

Ուշադրություն՝ *Շրջանառելի՝ բազմակի օգտագործման տարայի արժեքը չի ներառվում ԱԱՀ-ով հարկվող շրջանառության մեջ, բացառությամբ ապրանքների արտահանման դեպքերի, ինչպես նաև այն դեպքի, երբ տարան իրացնում է անմիջական արտադրողը կամ ներմուծողը:*

- 2) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների համար ներմուծման պահին ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց՝ օրենքով սահմանված կարգով որոշվող մաքսային արժեքի և գանձվող մաքսատուրքի ու ակցիզային հարկի գումարը.
- 3) ԱԱՀ վճարող անձանց կողմից մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով վերանշակման կամ նորոգման նպատակով ՀՀ տարածքից արտահանված ապրանքների ներմուծման դեպքում ԱԱՀ-ով հարկվող շրջանառություն է համարվում դրանց վերանշակման կամ նորոգման արժեքը, որը որպես հատուցում պետք է վճարվի օտարերկրյա իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններին կամ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, իսկ այդ արժեքի որոշման անհնարինության դեպքում՝ ապրանքների վերանշակումից կամ նորոգումից հետո ներմուծման մաքսային արժեքի և դրանց արտահանման ժամանակ հայտարարագրված մաքսային արժեքի տարբերությունը.
- 4) հանձնարարության, կոմիսիայի և գործակալության հիմունքներով ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման դեպքում հարկվող շրջանառություն է համարվում միջնորդավճարը (գանձույթ, պարգևավճար և հատուցման համանման այլ ձևեր)՝ առանց ԱԱՀ-ի, եթե օրենքով կամ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ.
- 5) ապրանքների անհատույց մատակարարման, ծառայությունների անհատույց մատուցման, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանց դիմաց տվյալ գործարքների (գործառնությունների) համար սովորականի համեմատ կիրառվում են իրական արժեքից էականորեն ցածր գներ (մասնակի հատուցում), հարկման օբյեկտ է համարվում այդպիսի կամ նույնանման գործարքների համար համեմատելի հանգամանքներում որպես հարկվող շրջանառություն ընդունվող՝ օրենքին համապատասխան որոշվող մեծությունը (գործարքի արժեքը, վճարի, վարձատրության, պարգևի կամ այլ դրամական հատուցման մեծությունը), իսկ դրա բացակայության դեպքում՝ գործարար շրջանակներում համեմատելի հանգամանքներում նույնանման գործարք-

ների համար սովորաբար որպես հարկման օբյեկտ ընդունվող մեծությունը (գործարքի իրական արժեքը)։

- 6) փոխանակման գործարքների (գործառնությունների) հարկվող շրջանառությունը որոշվում է ապրանքների մատակարարման կամ ծառայությունների մատուցման համար օրենքով սահմանված կարգով՝ հիմք ընդունելով այդ ապրանքների մատակարարման ու ծառայությունների մատուցման պահին դրանց սովորաբար կիրառվող գինը՝ առանց ԱԱՀ-ի։

ԱԱՀ-ով հարկվող գործարք (գործառնություն) իրականացնելու դեպքում ԱԱՀ վճարողը դուրս է գրում **հարկային հաշիվ**։

Հարկային հաշիվներ դուրս չեն գրվում՝

- ԱԱՀ վճարող չհանդիսացող անձանց կողմից.
- այն ապրանքների և ծառայությունների համար, որոնք օրենքով ազատված են ԱԱՀ-ից.
- օրենքի համաձայն հարկման օբյեկտ չհանդիսացող կամ գրոյական դրույթաչափով հարկվող գործարքների (գործառնությունների) համար։

Վերը նշված դեպքերում հարկային հաշվի փոխարեն լրացվում (կազմվում) են ընդհանուր կարգով սահմանված այլ հաշվարկային (այդ թվում՝ բեռնաառաքման) և վճարային փաստաթղթեր։

Ուշադրություն. *ԱԱՀ վճարող չհանդիսացող անձանց կողմից, ինչպես նաև հարկման օբյեկտ չհանդիսացող կամ ԱԱՀ-ի գրոյական դրույթաչափով կամ ԱԱՀ-ից ազատված հարկվող գործարքների (գործառնությունների) համար հարկային հաշիվներ դուրս չեն գրվում։ Հարկային հաշիվ դուրս գրելու դեպքում անձինք պարտավոր են հարկային հաշվում առանձնացված ԱԱՀ-ի գումարը վճարել բյուջե և այդ դեպքում ԱԱՀ-ի ճշգրտված հաշվարկներ չեն կարող ներկայացվել։*

Հարկային հաշվի մեջ պարտադիր նշվում են հետևյալ տվյալները և վավերապայմանները՝

- ա) հաշվի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը.
- բ) ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի անվանումը և իրավաբանական հասցեն, ֆիզիկական անձի անունը և ազգանունը, բնակության վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

- զ) ապրանքներ կամ ծառայություններ ստացող անձի անվանումը և իրավաբանական հասցեն.
- դ) ապրանքների անվանումը և քանակը կամ ծառայությունների տեսակը և ծավալը.
- ե) ապրանքների գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինը և հատուցման ընդհանուր գումարը՝ առանց ԱԱՀ-ի.
- զ) հաշվարկված ԱԱՀ-ի գումարը (առանձին տողով).
- է) ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջներով նախատեսված այլ տեղեկություններ և վավերապայմաններ:

Առևտրի և սպասարկման ոլորտներում գործունեություն իրականացնող անձի կողմից տրված ապրանքների (մատուցված ծառայությունների) գնման չեկերը (կտրոնները) չեն դիտվում որպես հարկային հաշիվ:

Ուշադրություն. *Օրենքով սահմանված կարգի խախտումով հարկային հաշիվների լրացման համար վճարողներից զանձվում է տուգանք՝ այդ փաստաթղթերում հաշվարկված ԱԱՀ-ի 10%-ի չափով:*

Հայաստանի Հանրապետություն ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից ԱԱՀ-ի հաշվարկումը և գանձումը հիմնավորվում է մաքսային ձևակերպման ժամանակ լրացվող մաքսային հայտարարագրերով և վճարային փաստաթղթերով (վճարման հանձնարարագիր, անդորրագիր կամ վճարումը հաստատող այլ փաստաթղթեր):

ՓՄՁ-ն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ, իր հաշվառման վայրի հարկային մարմին սահմանած կարգով ներկայացնում է Տեղեկություններ՝ հաշվետու ժամանակաշրջանում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվների և իր կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով դուրս գրված հարկային հաշիվների վերաբերյալ: Ընդ որում, այդ տեղեկություններում ներառվում են տեղեկություններ միայն այն հարկային հաշիվների վերաբերյալ, որոնցում ներառված հարկվող շրջանա-

ռության արժեքը գերազանցում է 100,0 հազ.դրամը (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի):

Հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ներառման ենթակա՝ ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով մատակարարների կողմից դուրս գրված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի այն գումարները, որոնք չեն արտացոլվել ներկայացված տեղեկություններում կամ որոնց վերաբերյալ տեղեկություններ չեն ներկայացվել, ենթակա չեն հաշվանցման այդ հաշվետու ժամանակաշրջանում, սակայն կարող են հաշվանցվել այդ տեղեկությունները ներկայացնելու հաշվետու ժամանակաշրջանում, եթե այդ տեղեկությունները չեն վերաբերում հարկային մարմինների կողմից ստուգվող կամ արդեն իսկ ստուգված ժամանակաշրջաններում ձեռք բերված ապրանքների և ստացված ծառայությունների գծով հարկային հաշիվներին:

Ուշադրություն՝ Հարկային մարմիններին ներկայացվող տեղեկություններում ապրանքների մատակարարման կամ ձեռքբերման և ծառայությունների մատուցման կամ ստացման գծով ԱԱՀ-ի գումարները չներառելու (չներկայացնելու) դեպքում տեղեկությունները ներկայացնող անձը վճարում է տուգանք՝ սխալ ներկայացված յուրաքանչյուր տեղեկության (հարկային հաշվի) համար 5,000 դրամի չափով:

Ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման գործարքների հարկային հաշիվներում (մաքսային հայտարարագրերում) առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման համար սահմանվում են մի շարք պայմաններ: Համաձայն օրենքի, մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարների հաշվանցման համար անհրաժեշտ է, որպեսզի՝

- ձեռքբերումը կատարված լինի արտադրական և այլ առևտրային նպատակներով.
- ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը ձեռք բերվի միայն հաշվետու ժամանակաշրջանում.
- ձեռքբերումների գծով ստացված հարկային հաշիվները լրացվեն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված վավերապայմաններին համապատասխան.
- այդ ձեռքբերումների դիմաց վճարումները կատարված լինեն քանկային փոխանցմամբ:

Պետք է նկատի ունենալ, որ ԱԱՀ-ից ազատված ձեռքբերումների գծով ստացված հարկային հաշիվներում առանձնացված ԱԱՀ-ի գումարները չեն կարող օգտագործվել հաշվանցման համար, այսինքն հաշվանցել կարելի է միայն այն ձեռքբերումների գծով վճարված ԱԱՀ-ի գումարները, որոնք կատարվել են ԱԱՀ-ով հարկվող գործարքների իրականացման համար: Եթե իրականացվում է և ԱԱՀ-ով հարկվող, և հարկումից ազատված գործունեություն, ապա հարկ վճարողը պետք է վարի դրանց առանձնացված հաշվառում, այդ թվում նշված գործունեությունների համար ձեռք բերումների մասով:

Այն դեպքում, երբ ձեռք բերումների մասով հնարավոր չէ իրականացնել առանձնացված հաշվառում, ապա հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը որոշվում է հետևյալ կերպ՝ նախ որոշվում է ընդհանուր գործարքների մեջ հարկվող գործարքների տեսակարար կշիռը, ապա հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը հաշվարկվում է այդ տեսակարար կշռին համապատասխան:

ԱԱՀ-ի հաշվարկները ներկայացվում և վճարումները բյուջե կատարվում են հետևյալ ժամկետներում.

- այն հարկ վճարողների համար, որոնց ԱԱՀ-ով հարկվող գործարքներից (գործառնություններից) ստացված հասույթը նախորդ տարում չի գերազանցել 60 մլն դրամը, հաշվետու ժամանակաշրջան է համարվում եռամսյակը: Եռամսյակը ավարտվելուց հետո, մինչև այդ եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը պետք է ներկայացվի ԱԱՀ-ի հաշվարկ և հաշվարկով արտացոլված գումարը վճարվի բյուջե.
- այն հարկ վճարողների համար, որոնց ԱԱՀ-ով հարկվող գործարքներից (գործառնություններից) ստացված հասույթը նախորդ տարում գերազանցել է 60 մլն. դրամը, հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Ամիսը ավարտվելուց հետո, մինչև այդ ամսին հաջորդող ամսվա 20-ը պետք է ներկայացվի ԱԱՀ-ի հաշվարկ և հաշվարկով արտացոլված գումարը վճարվի բյուջե:

5.2.

Ակցիզային հարկը

Ակցիզային հարկը որոշ տեսակի ապրանքների ներմուծման կամ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ ապրանքներն արտադրողների կողմից դրանց օտարման համար «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով պետական բյուջե վճարվող անուղղակի հարկ է:

Հայաստանի Հանրապետությունում ակցիզային հարկ վճարում է այն ՓՄՁ-ն, որը հանդիսանում է ներքոհիշյալ ապրանքները ներմուծող կամ արտադրող (ներառյալ՝ շշալցնող կամ այլ կերպ տարայավորող)։

- գարեջուրը, խաղողի և այլ գինիները, գինեմյուսը, սպիրտը և սպիրտային խմիչքները,
- ծխախոտի արդյունաբերական փոխարինիչները, սիգարները, սիգարեթները և սիգարետները (ծխախոտով կամ դրա փոխարինիչներով),
- բենզինը, հում նավթը և նավթամթերքները, նավթային գազերը և գազանման այլ ածխաջրածինները (բացառությամբ՝ բնական գազի):

Ենթակցիզային հիմնական արտադրատեսակների ակցիզային հարկի դրույթաչափերն են՝

Ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի միավորը	Ակցիզային հարկի դրույթաչափը (դրամ)
2203	Գարեջուր	1 լիտր	70
2204	խաղողի և այլ գինիներ, գինեմյուս	բացթողման գնի (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի), իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	10% (բայց ոչ պակաս, քան 1Լ համար 100 դր.)
2205	Վերմուտ և խաղողի այլ գինիներ, որոնք պարունակում են բուսական և արոմատիկ էքստրակտներ	1 լիտր	500

2206	հմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (փանձի սիդր) մեղրաըմպելիք)	1 լիտր	180
2207	Էթիլային սպիրտ	1 լիտր (100% սպիրտի վերահաշվարկով)	600
2208	Սպիրտային խմիչքներ	բացթողման գնի (առանց ԱԱՀ-ի և ակցիզային հարկի), իսկ ապրանքների ներմուծման դեպքում՝ մաքսային արժեքի	30% (բայց ոչ պակաս, քան 1լ համար 380 դր.)
2403	Ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կիլոգրամ	1500
2709	Հում նավթ և նավթամթերքներ	1 տոննա	27000
2711 (բացառությամբ 2711 11 և 2711 21)	Նավթային գազեր և գազաման այլ ածխաջրածիններ (բացառությամբ՝ բնական գազի)	1 տոննա	1000

Ակցիզային հարկով հարկվող օբյեկտ է համարվում՝

- «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ենթասակցիզային ապրանքների ներմուծումը Հայաստանի Հանրապետության տարածք,
- Հայաստանի Հանրապետության տարածքում արտադրողների (ներառյալ՝ շշալցնողների կամ այլ կերպ տարայավորողների) կողմից ենթասակցիզային ապրանքների օտարումը (այդ թվում՝ անհատույց):

Ենթասակցիզային ապրանքների համար հարկման բազա է համարվում ապրանքների քանակը (ծավալը)՝ արտահայտված օրենքով սահմանված չափման բնախրային միավորներով, որի նկատմամբ օրենքով սահմանված դրույքաչափերով և կարգով հաշվարկվում է ակցիզային հարկի գումարը:

Ենթասակցիզային հետևյալ ապրանքներն ենթակա են ակցիզային դրոշմանիշներով պարտադիր դրոշմավորման՝ Կառավարության 26.10.1999թ. «Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հա-

յաստանի Հանրապետություն ներմուծվող ակցիզային հարկով հարկ-
ման ենթակա որոշ ապրանքների ակցիզային նոր նմուշի դրոշմանիշնե-
րով դրոշմավորման մասին» N 662 որոշմանը համապատասխան.

Արտադրանքի ծածկագիրը՝ ըստ USQ ԱԱ	Ապրանքի անվանումը
2204, 2205, 2206	խաղողի և այլ գինիներ
2207	էթիլային սպիրտ
2208	սպիրտային խմիչք
2402	ծխախոտի արտադրանք

Դրոշմավորման ենթակա ապրանքներ արտադրող անձինք ակցի-
զային դրոշմանիշերը ձեռք են բերում հարկային տեսչություններից՝
մինչև այդ ապրանքների սահմանված կարգով իրացումը:

Հայաստանի Հանրապետությունում արտադրված դրոշմավորման
ենթակա էթիլային սպիրտի արտադրանքի համար նախատեսված ակ-
ցիզային յուրաքանչյուր դրոշմանիշի ձեռքբերման համար վճարվում է
100 դրամ, ոգելից խմիչքի արտադրանքի համար 50 դրամ, ծխախոտի
արտադրանքի համար 25 դրամ:

Ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գումար-
ըը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում արտադրվող
ենթաակցիզային ապրանքների արտադրողների համար պետական
բյուջե վճարման ենթակա ակցիզային հարկի կանխավճար:

Ակցիզային դրոշմանիշեր ձեռք բերելու համար հարկային տեսչու-
թյուններ ներկայացվում են՝

- ա) սահմանված ձևով դիմում՝ 2 օրինակիչ.
- բ) ակցիզային դրոշմանիշերի ձեռքբերման համար վճարված գու-
մարը հաստատող փաստաթղթերի բնօրինակը և դրա պատճեն-
ըը (բնօրինակը վերադարձվում է, իսկ պատճենը պահվում է
հարկային տեսչությունում).
- գ) հաշվարկ ակցիզային դրոշմանիշերի օգտագործման վերա-
բերյալ.
- դ) պարտադիր՝ օդի արտադրողների (ներառյալ՝ շշալցում իրա-
կանացնողների) կողմից որպես հումք ձեռք բերված սպիրտի
ձեռքբերման հաշվարկային փաստաթղթերի օրինակները.
- ե) լիցենզիայի և տարեկան պետական տուրքի վճարման անդոր-
րագրի ու համապատասխանության սերտիֆիկատի (պարտա-
դիր լինելու դեպքում) պատճենները:

Հարկային տեսչություններն ակտիվացին դրոշմանիշերը տրամադրում են նշված բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրվան հաջորդող 7 աշխատանքային օրվա ընթացքում: Ակտիվացին դրոշմանիշեր չեն տրամադրվում, եթե դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ ակտիվացին հարկի գծով գերավճարը քիչ է պահանջվող դրոշմանիշերի համար վճարման ենթակա գումարից կամ արտադրական հզորությունները չեն համապատասխանում պահանջվող դրոշմանիշերի քանակին: Այս դեպքում հայտը կարող է բավարարվել մասնակի՝ գերավճարի գումարին կամ արտադրական հզորություններին համապատասխան:

Հայաստանի Հանրապետությունում ենթաակտիվացին ապրանքներ արտադրողների կողմից Հայաստանի Հանրապետությունում ձեռք բերված կամ ներմուծված ակտիվացին հարկով հարկված հումքի դիմաց օրենքին համապատասխան վճարված ակտիվացին հարկի գումարը՝

- ա) այդ հումքից պատրաստված՝ ենթաակտիվացին ապրանքների արտահանման դեպքում ենթակա է վերադարձման՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
- բ) պակասեցվում է դրանց համար դուրս գրված հաշվարկային փաստաթղթերի հիման վրա՝ հաշվետու ժամանակաշրջանում վճարման ենթակա ակտիվացին հարկի ընդհանուր գումարից՝ ենթաակտիվացին ապրանքների իրացմանը համամասնորեն:

Ուշադրություն. Հայաստանի Հանրապետությունում ենթաակտիվացին ապրանքներ արտադրողների կողմից ձեռք բերված կամ ներմուծված ակտիվացին հարկով հարկված հումքի դիմաց վճարված ակտիվացին հարկի գումարի՝ այդ հումքից պատրաստված ենթաակտիվացին ապրանքների համար հաշվարկված ակտիվացին հարկի գումարը գերազանցող մասը հաշվանցման կամ վերադարձման ենթակա չէ:

Հայաստանի Հանրապետությունում արտադրվող ենթաակտիվացին ապրանքների համար հարկ վճարող (հարկի վճարման պարտավորություն կրող) ՓՄՉ-ի համար ակտիվացին հարկի գծով հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր ամիսը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար՝ մինչև դրան հաջորդող ամսվա 15-ը, վճարվում է ակտիվացին հարկը և համապատասխան տարածքային հարկային տեսչություն է ներկայացվում սահմանված ձևով ակտիվացին հարկի Հաշվարկ:

Հարկ վճարողի կողմից ակտիվացին հարկի գծով սխալների ինքնուրույն հայտնաբերման և սահմանված կարգով դրանց ճշգրտման

արդյունքներով կարող են ներկայացվել ճշգրտված հաշվարկներ, ընդ որում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար ակցիզային հարկի ճշգրտված մեկից ավելի յուրաքանչյուր հաշվարկի ներկայացման դեպքում հարկ վճարողներից գանձվում է տուգանք՝ 200 հազար դրամի չափով:

5.3.

Շահութահարկը

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի որոշման և վճարման հետ կապված հարաբերությունները, շահութահարկ վճարողների շրջանակը, շահութահարկի դրույքաչափերը, հաշվարկման և վճարման կարգը կարգավորվում է «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որն ընդունվել է 1997 թվականի սեպտեմբերի 30-ին (ՀՕ-155):

Շահութահարկը որոշելիս ՓՄՁ-ները հաշվառումն իրականացնում են հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենսդրությամբ սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա, եթե «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով չեն նախատեսվում դրանց կիրառման առանձնահատկություններ:

Հաշվապահական հաշվառումը կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ է՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով:

Հաշվապահական հաշվառումը վարվում է՝ Հայաստանի Հանրապետության դրամով, կրկնակի գրանցման եղանակով և անընդհատ (կազմակերպության պետական գրանցման պահից մինչև նրա վերակազմակերպումը կամ լուծարումը):

Անալիտիկ (վերլուծական) հաշվառման և սինթետիկ (ընդհանրացված) հաշիվների տվյալները պետք է համապատասխանեն միմյանց:

Բոլոր տնտեսական գործառնությունների արդյունքները պետք է հաշվապահական հաշվառման հաշիվներում գրանցվեն ժամանակին, որ դրանք արտացոլվեն այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, որին վերաբերում են:

Ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության վրա ազդող իրադարձությունների և կազմակերպության իրականացրած գործառնությունների համակարգված ֆինանսական ներկայացումն է:

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝ հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

Հաշվապահական հաշվառման գրանցումները կատարվում են սկզբնական հաշվառման փաստաթղթերի հիման վրա, որոնք արձանագրում են տնտեսական գործառնության կատարումը:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը պետք է ունենան հետևյալ պարտադիր վավերապայմանները (ռեկվիզիտները)՝ փաստաթղթի անվանումը, հերթական համարը, կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը, գործառնության մասնակիցների (մասնակցի) անվանումը (անունը, ազգանունը), տնտեսական գործառնության բովանդակությունը, տնտեսական գործառնության չափման միավորները (դրամական և բնաիրային արտահայտությամբ), պատասխանատու անձանց պաշտոնները և նրանց ստորագրությունները:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերում կարող են ներառվել լրացուցիչ վավերապայմաններ՝ կախված գործառնության բնույթից և տվյալների մշակման համակարգից:

Սկզբնական հաշվառման փաստաթղթերը կազմվում են գործառնության կատարման պահին, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա գործառնության ավարտից անմիջապես հետո:

Հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կազմակերպությունն անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում:

Հաշվապահական հաշվառման սկզբունքները և կանոնները նախատեսում են շահութահարկ վճարողի կողմից **հաշվապահական հաշվառման քաղաքականության** (հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և ընթացակարգերի ամբողջություն) և չափման հիմունքների ձևավորում:

Հաշվապահական հաշվառման սկզբունքները և կանոնները (ինչպես նաև դրանցում կատարվող փոփոխությունները) ձևավորվում են շահութահարկ վճարող կազմակերպության ղեկավարի կողմից՝ համապատասխան կարգադրական փաստաթղթերով (հրաման, որոշում, կարգադրություն և այլն):

Շահութահարկ վճարողները շահութահարկի հաշվարկի ներկայացման ժամկետում իրենց հաշվառման վայրի հարկային մարմնին գրավոր տեղեկացնում են հաշվետու տարում իրենց ընտրած հաշվապահական հաշվառման սկզբունքների և կանոնների (եթե իրավական ակտերով իրենց վերապահված է նման ընտրության իրավունք), ինչպես նաև դրանց փոփոխությունների մասին:

Յուրաքանչյուր տարում կիրառվում է հաշվապահական հաշվառման նույն քաղաքականությունը՝ փոփոխություններ կատարվում են, երբ տեղի են ունեցել փոփոխություններ հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ, կամ երբ այդ փոփոխությունը նպաստում է ֆինանսական հաշվետվություններում դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը:

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հարկման նպատակով ներառում է տեղեկություններ հետևյալի վերաբերյալ՝

- հիմնական միջոցների ամորտիզացիոն ժամկետները (ամորտիզացիոն ժամկետների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում այդ ժամկետները ընդունվում են հիմնական միջոցների տվյալ խմբի (դասի) համար օրենքին համապատասխան որոշվող ամորտիզացիոն նվազագույն ժամկետներին հավասար),
- ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետները (ամորտիզացիոն ժամկետների վերաբերյալ տեղեկությունների բացակայության դեպքում այդ ժամկետները ընդունվում են ոչ նյութական ակտիվների տվյալ խմբի (դասի) համար օրենքին համապատասխան որոշվող ամորտիզացիոն նվազագույն ժամկետներին հավասար),
- դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ստեղծման մասին:

Հարկվող շահույթը որոշելիս եկամուտների և ծախսերի **հաշվառումն իրականացվում է հաշվեզրման եղանակով**, այսինքն՝ ելնելով հարկատուի կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բե-

րելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից (անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից) և հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

- եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված, եթե համապատասխան գումարը ենթակա է հարկատուին անվերապահ վճարման (հատուցման) կամ հարկատուն կատարել է գործարքից (կամ պայմանագրից) բխող պարտավորությունները, եթե նույնիսկ այդ իրավունքի բավարարման պահը հետաձգվել է, կամ վճարումներն իրականացվում են մաս-մաս.
- հարկատուի կողմից ծառայություններ մատուցվելու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված գործարքից բխող ծառայությունների մատուցումն ավարտելու (այդ թվում նաև՝ ըստ փուլերի) պահից.
- տոկոսների տեսքով եկամուտներ ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված պարտքի ժամկետը լրանալու պահից (եթե պարտքի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան).
- գույքը վարձակալության տալու դիմաց եկամուտներ ստանալու դեպքում եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված վարձակալության պայմանագրի ժամկետը լրանալու պահից (եթե վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջան, ապա հաշվետու ժամանակաշրջաններում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան):

ՓՄՁ-ների համար շահութահարկով **հարկվող օբյեկտ** է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող շահույթը:

Հարկվող շահույթը որոշելիս ակտիվները և պարտավորությունները (այդ թվում՝ արտարժույթը և արտարժույթով արտահայտված ակտիվները և պարտավորությունները) հաշվի են առնվում սկզբնական (ձեռքբերման) արժեքով (բացառությամբ՝ օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքների):

Միաժամանակ, հարկվող շահույթը որոշելիս հաշվի են առնվում միայն օրենքով սահմանված պահուստների (պահուստաֆոնդերի) ստեղծման հետևանքով առաջացող եկամուտները և նվազեցումները:

Հարկվող շահույթը դա համախառն եկամտի և օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է: Ընդ որում՝ նվազեցումների միևնույն գումարը համախառն եկամտից կարող է հանվել միայն մեկ անգամ:

Հարկվող շահույթ = Համախառն եկամուտ – Նվազեցումներ > 0

Համախառն եկամուտը դա՝ հաշվետու տարում բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտների թվին են դասվում, մասնավորապես՝ ապրանքների, արտադրանքի, ծառայությունների իրացումից հասույթը, այլ պաշարների (հումք և նյութեր, կիսապատրաստուկներ, արագամաշ առարկաներ), հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների իրացումից հասույթը (առանց անուղղակի հարկերի), սահմանված կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները և նախկինում դուրս գրված դեբիտորական պարտքերի մարման գումարները, պարտավորությունների զեղչումից կամ ներումից ստացված եկամուտները, տուժանքները (տույժ, տուգանք), պատճառված վնասի (կրած կորստի) հատուցումից և անվավեր ճանաչված գործարքներից ստացվող եկամուտները, պասիվ այլ եկամուտները (տոկոսներ, ռոյալթիներ և այլն), հաշվետու տարում հայտնաբերված և դրան անմիջապես նախորդող 3 տարիներում պակաս ցույց տրված եկամուտը և (կամ) ավել ցույց տրված նվազեցումը և այլն:

Եկամուտների թվին չեն դասվում և, հետևաբար, շահութահարկ չի վճարվում՝ օրինակ համատեղ գործունեության նպատակով միավորվող միջոցներից, հարկային արտոնությունների գումարներից, արտարժույթի և արտարժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով իրականացված հիմնական միջոցների վերագնահատման դրական արդյունքից:

Օրենքով սահմանված են **նվազեցումների** հետևյալ տեսակները՝ **ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ**:

Նվազեցումներ = Ծախսեր + Կորուստներ + Այլ նվազեցումներ

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է դրա ստացման հետ կապված **անհրաժեշտ և փաստաթղթերով հիմնավորված ծախսերի** չափով:

Ծախսերը համարվում են **անհրաժեշտ**, եթե անմիջականորեն և րացառապես կապված են ապրանքների արտադրության, ծառայու-

թյունների մատուցման, շուկայում առաջխաղացման և (կամ) ապրանքների (ծառայությունների) իրացման, խորհրդատվական և իրավաբանական ծառայությունների, ուղեկցման, երաշխիքային հսկողության և շահագործման ընթացքում բացահայտված թերությունների վերացման, արտադրության (շինարարության) նախապատրաստման, յուրացման և կոնսերվացման, գույքի պահպանման, կադրերի պատրաստման և վերապատրաստման հետ, ինչպես նաև եկամտի ստացման հետ կապված և դրա համար անհրաժեշտ այլ ծախսեր:

Ծախսը համարվում է **փաստաթղթերով հիմնավորված**, եթե ձեռքբերումը (ծախսումը) հաշվարկային փաստաթղթերով հիմնավորված է, այսինքն համապատասխանում է ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ՀՀ կառավարության 25.08.1998թ. «Ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգը հաստատելու մասին» N 525 որոշմամբ սահմանված պահանջներին:

Հաշվարկային փաստաթուղթը հարկ վճարողի իրականացրած գործարքը հաստատող՝ հարկման հիմք հանդիսացող (ծախսերը հիմնավորող) հաշվարկային փաստաթուղթ է, որում արտացոլված են (ներառված են ըստ էության) հետևյալ վավերապայմանները՝

- ա) հաշվարկային փաստաթղթի հերթական համարը և դուրսգրման ամսաթիվը.
- բ) ակտիվներ վաճառող (տրամադրող) կամ ծառայություն մատուցող հարկ վճարողի՝
 - իրավաբանական անձի, իրավաբանական անձի հիմնարկի, մասնաճյուղի կամ ներկայացուցչության լրիվ անվանումը, կնիքը կամ դրոշմակնիքը (եթե ՀՀ օրենսդրությամբ հարկ վճարողին պարտադրված է այն ունենալ), եթե գործարքի արժեքը գերազանցում է 50 հազար դրամը, գտնվելու վայրը (հասցեն), ղեկավարի (սահմանված դեպքերում այլ պաշտոնատար անձի կամ անձանց) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը և ստորագրությունը,
 - ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի, իսկ չափահաս և (կամ) ՀՀ քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի սերիան և համարը, բնակության (հաշվառման) վայրի հասցեն, ստորագրությունը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ հարկ վճարողի ՀՎՀՀ-ն.

- զ) ակտիվներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի՝
- իրավաբանական անձի, իրավաբանական անձի հիմնարկի, մասնաճյուղի կամ ներկայացուցչության լրիվ անվանումը, կնիքը կամ դրոշմակնիքը (եթե ՀՀ օրենսդրությամբ հարկ վճարողին պարտադրված է այն ունենալ), եթե գործարքի արժեքը գերազանցում է 50 հազար դրամը, գտնվելու վայրը (հասցեն), ղեկավարի (սահմանված դեպքերում՝ այլ պաշտոնատար անձի կամ անձանց) պաշտոնը, անունը (անվան սկզբնատառը), ազգանունը և ստորագրությունը,
 - ֆիզիկական անձի անունը, ազգանունը, անձնագրի, իսկ չափահաս և (կամ) ՀՀ քաղաքացի չհանդիսանալու դեպքում՝ անձը հաստատող այլ փաստաթղթի սերիան և համարը, բնակության (հաշվառման) վայրի հասցեն, ստորագրությունը, իսկ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ նաև «անհատ ձեռնարկատեր» նշումը:
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում հարկ վճարողի հաշվառման համար ունենալը պարտադիր լինելու դեպքում՝ նաև հարկ վճարողի ՀՎՀՀ-ն.
- դ) ակտիվների անվանացանկն ու քանակը և (կամ) ծառայությունների տեսակն ու ծավալը,
- ե) ակտիվների միավորի գինը և ընդհանուր արժեքը կամ մատուցվող ծառայությունների սակագինն ու հատուցման ենթակա ընդհանուր գումարը:

Ձեռք բերված ապրանքների կամ ստացած ծառայությունների դիմաց տրված հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններն ընդունվում են որպես ծախսերը հիմնավորող փաստաթղթեր՝ դրանցում նշված համապատասխան գումարի չափով, բայց ոչ ավելի, քան հաշվետու տարում 1 միլիոն դրամի (հսկիչ-դրամարկղային բոլոր կտրոններում նշված համապատասխան գումարների հանրագումարը) չափով: Այդ դեպքում ակտիվներ կամ ծառայություններ ստացող հարկ վճարողի վերը նշված համապատասխան տվյալները լրացվում են նրա կողմից ինքնուրույնաբար՝ ակտիվները մուտքագրելույ (ծառայություններ

րի ընդունումը ձևակերպելու) առաջ՝ անմիջականորեն կտրոնի վրա կամ դրան կցված փաստաթղթում:

Միակ բացառությունը օրենքով սահմանված է օրապահիկի և դաշտային բավարարման գծով կատարված ծախսերի համար, որոնք ՀՀ կառավարության սահմանած չափով կարող են նվազեցվել համախառն եկամտից՝ առանց հիմնավորող փաստաթղթերի:

Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝ նյութական ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումները, հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ և ընթացիկ բնույթի ծախսերը, աշխատողների հավաքագրման ծախսերը, աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումները, սուբսիդիական վճարները, չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը և այլ պարտադիր վճարները, գովազդային, մարքեթինգի, ներկայացուցչական, գործուղման, կադրերի պատրաստման (վերապատրաստման) ծախսերը, դատական, ատոդիտորական, իրավաբանական, խորհրդատվական, տեղեկատվական և կառավարման ծառայությունների ծախսերը և այլն:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով՝ ամորտիզացիոն նվազագույն ժամկետներում:

Հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարը հաշվարկվում է՝ ելնելով հիմնական միջոցների տվյալ խմբի համար ստորև բերված ամորտիզացիոն հետևյալ նվազագույն ժամկետներից՝

Հիմնական միջոցների խումբը	Ամորտիզացիոն նվազագույն ժամկետը (տարի)
Շենքերի, շինությունների և փոխանցող հարմարանքների համար	20 տարի
Հյուրանոցների, պանսիոնատների, հանգստյան տների, առողջարանների, կրթական և ուսումնական հաստատությունների, շենքերի և շինությունների համար	10 տարի
Հոսքային գծերի, ռորոպարեխնիկայի համար	3 տարի
Հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար	1 տարի
Այլ հիմնական միջոցների, այդ թվում՝ բանող անասունների, բազմամյա տնկիների և հողերի բարելավմանն ուղղված կապիտալ ներդրումների համար	5 տարի

Գյումրի քաղաքում գործունեություն իրականացնող կազմակերպությունների համար Գյումրի քաղաքում գտնվող շենքերի, շինությունների, փոխանցվող հարմարանքների, հոսքային գծերի, ռոբոտատեխնիկայի և Գյումրի քաղաքում տեղակայված այլ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է 1 տարի՝ Գյումրի քաղաքում գտնվելու (տեղակայվելու) ժամանակաշրջանում: Ընդ որում, եթե Գյումրի քաղաքում գտնվող հիմնական միջոցների նկատմամբ կիրառվել է այդ ամորտիզացիոն նվազագույն ժամկետը, և այդ հիմնական միջոցները տեղափոխվել են Գյումրի քաղաքից դուրս (առանց այլ անձանց օտարման), ապա հարկատուն պետք է վճարի արագացված ամորտիզացիայից օգտված լինելու հետևանքով պակաս վճարված շահութահարկը և շահութահարկը (այդ թվում՝ կանխավճարները) ուշ վճարելու համար սահմանված տույժերը:

Մինչ 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է 1 տարի:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է ՓՄՁ-ն՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջինների որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է 10 տարի, սակայն ոչ ավելի ՓՄՁ-ի գործունեության ժամկետից:

Հարկվող շահույթը որոշելու նպատակով ՓՄՁ-ն իր հայեցողությամբ կարող է ընտրել հիմնական միջոցների ամորտիզացիոն այլ ժամկետ, սակայն տվյալ խմբի համար նվազագույն ամորտիզացիոն ժամկետներից ոչ պակաս:

Ամորտիզացիոն մասհանումների տարեկան մեծությունը հաշվարկվում է որպես հիմնական միջոցի սկզբնական արժեքի (իսկ օրենքով սահմանված կարգով վերագնահատման իրականացման դեպքում՝ վերագնահատված արժեքի) և հիմնական միջոցի տվյալ խմբի կամ ոչ նյութական ակտիվի համար սահմանված նվազագույն ամորտիզացիոն ժամկետի հարաբերություն: Ընդ որում՝ համախառն եկամտից նվազեցման ենթակա են հիմնական միջոցների համար հաշվարկված ամորտիզացիոն մասհանումների գումարները՝ այդ հիմնական միջոցների շահագործման (գործունեության մեջ օգտագործման) ժամանակահատվածին համապատասխան:

Տարվա ընթացքում նոր հիմնական միջոցներ մուտքագրվելու դեպքում հաշվետու տարում դրանց գծով ամորտիզացիոն մասհանումները հաշվարկվում են այդ հիմնական միջոցները շահագործման հանձնելու

պահից սկսած՝ հիմնական միջոցների շահագործման հանձնման-ընդունման ակտի հիման վրա: Հիմնական միջոցների շահագործումից հանման ակտի հիման վրա շահագործումից հանված (այդ թվում՝ ժամանակավորապես) հիմնական միջոցների գծով այդ ժամանակաշրջանի համար ամորտիզացիոն մասհանումներ չեն կատարվում:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է հիմնական (այդ թվում վարձակալված, անհատույց օգտագործման վերջված, ամրակցված) միջոցների վրա կատարված **ընթացիկ ծախսերի** չափով՝ տվյալ տարում ամբողջությամբ:

Մեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող հիմնական միջոցի վրա կատարված **կապիտալ բնույթի ծախսերը** ավելացվում են տվյալ ամսվա 1-ի դրությամբ այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքին (մնացորդային արժեքին՝ հիմնական միջոցի սկզբնական (ձեռքբերման) արժեքի և ամորտիզացիոն մասհանումների տարբերություն՝ հաշվի առած օրենքով սահմանված կարգով իրականացված վերագնահատման արդյունքները) և այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է ընդհանուր կարգով, հաշվի առած հետևյալ առանձնահատկությունները՝

- ա) եթե կապիտալ բնույթի ծախսերը չեն գերազանցում հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը, ապա այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է *ամորտիզացիոն մնացորդային ժամկետում*.
- բ) եթե կապիտալ բնույթի ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը և հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է 5 տարույ պակաս, ապա այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է *մնացորդային ամորտիզացիոն ժամկետում (բայց ոչ պակաս տվյալ հիմնական միջոցի համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից)*.
- գ) եթե կապիտալ բնույթի ծախսերը գերազանցում են հիմնական միջոցի՝ ընթացիկ տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվեկշռային (մնացորդային) արժեքը և հիմնական միջոցի ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանված է 5 տարույ ոչ պակաս, ապա այդ հիմնական միջոցը ամորտիզացվում է *մնացորդային ամորտիզացիոն ժամկետում (բայց ոչ պակաս, քան 5 տարվա ընթացքում)*.

Վարձակալված (անհատույց օգտագործման վերցված, ամրակցված) հիմնական միջոցի վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը վարձակալը (փոխառուն) ամորտիզացնում է ընդհանուր կարգով (այդ հիմնական միջոցի մնացորդային ամորտիզացիոն ժամկետում), եթե տվյալ հիմնական միջոցի վրա այդ ծախսերի կատարման պարտականությունը պայմանագրով կրում է վարձակալը (փոխառուն): Ընդ որում՝ պայմանագրի լուծման (փաստացի դադարեցման) դեպքում չամորտիզացված մնացորդն չի նվազեցվում համախառն եկամտից:

Այն հիմնական միջոցների (մասնավորապես՝ հողամասերի) վրա կատարված կապիտալ բնույթի ծախսերը, որոնց համար ամորտիզացիոն մասհանումների կատարումը օրենսդրությամբ նախատեսված չէ, ամորտիզացվում են ընդհանուր կարգով՝ այլ հիմնական միջոցների համար սահմանված ամորտիզացիոն նվազագույն ժամկետից ելնելով:

Հիմնական միջոցների (այդ թվում՝ վարձակալված) վրա կատարված ծախսերն ըստ ընթացիկ և կապիտալ բնույթի տարբերակման հայտանիշները և չափերը սահմանված են ՀՀ կառավարության 11.04.2000թ. N 161 որոշմամբ:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից ծախսերի գծով նվազեցումները կատարվում են հետևյալ ձևով՝

- ա) արտադրանքի արտադրության և ծառայությունների մատուցման հետ անմիջականորեն կապված ծախսերի (նյութական, աշխատանքի վարձատրության, սոցիալական ապահովագրության, արտադրական նշանակության հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումներ (այդ թվում՝ ֆինանսական վարձակալության վերցված հիմնական միջոցների գծով), նորոգում և այլն) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են տվյալ արտադրանքի և ծառայությունների իրացմանը համապատասխան.
- բ) այլ ակտիվների (այդ թվում՝ հիմնական միջոցներ, ոչ նյութական ակտիվներ) մնացորդային արժեքի չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այդ ակտիվների իրացմանը համապատասխան.
- գ) հարկատուի գործունեության հետ կապված վարչական ծախսերի, արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերի, ոչ արտադրական բնույթի այլ ծախսերի, գործառնական այլ ծախսերի և ինվեստիցիոն ծախսերի, ֆինանս-

սակաճ գործունեության հետ կապված ծախսերի (ժամանակաշրջանի ծախսեր) չափով համախառն եկամտից նվազեցումները կատարվում են այն տարվա ընթացքում, որին դրանք վերաբերում են (որի ընթացքում դրանք կատարվել են):

Վարչական ծախսերն են՝ կառավարման ապարատի աշխատավարձի, պարտադիր սոցիալական ապահովագրության, գործուղումների, նյութական և տրանսպորտային սպասարկման, կառավարման տեխնիկական միջոցների և ոչ արտադրական (ընդհանուր տնտեսական) նշանակության հիմնական միջոցների նորոգման, պահպանման և շահագործման, ներկայացուցչական, դատական, աուդիտորական, խորհրդատվական և տեղեկատվական ծառայությունների, կադրերի պատրաստման և վերապատրաստման, աշխատուժի հավաքագրման հետ կապված ծախսերը, գրասենյակային, փոստային, հեռախոսային, հեռագրային և նմանատիպ այլ ծառայությունների հետ կապված ծախսերը:

Արտադրանքի և ծառայությունների իրացման հետ կապված ծախսերն են, մասնավորապես՝ փաթեթավորման, պահպանման, բեռնման, տեղափոխման, ուղեկցման, գովազդի, մարքետինգի ծախսերը:

Ոչ արտադրական բնույթի այլ ծախսերն են, մասնավորապես՝ գյուտարարական և ռաջիոնալիզատորական, գիտահետազոտական, նախագծային և փորձակոնստրուկտորական աշխատանքների ծախսերը:

Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների դասակարգումը (հասկացությունը) սահմանված է ՀՀ կառավարության 03.06.2002թ. N 677 որոշմամբ: Այդ որոշման դրույթները տարածվում են անմիջականորեն կազմակերպության կատարած, ինչպես նաև իր կողմից պատվիրված գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների վրա: Այդ աշխատանքների գծով վարվում է առանձնացված հաշվառում:

Գործառնական այլ ծախսերն են, մասնավորապես՝ կոնսերվացված արտադրական հզորությունների և օբյեկտների պահպանման, կարճաժամկետ արժեթղթերի իրացման, հումքի, նյութերի իրացման հետ կապված ծախսերը:

Ինվեստիցիոն ծախսերն են, մասնավորապես՝ երկարաժամկետ ակտիվների իրացման և այլ օտարման ծախսերը:

Ֆինանսական գործունեության հետ կապված ծախսերն են, մասնավորապես՝ վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների հաշվարկված տոկոսներ, վարկերի, դրամական և այլ գույքային փոխառությունների ստացման հետ կապված ծախսեր, գույքի ֆինանսա-

կան վարձակալության դիմաց տոկոսներ և վարձակալության հետ կապված այլ ծախսեր, արժեթղթերի թողարկման և տարածման հետ կապված ծախսեր:

Ծախսերի որոշ տեսակներ նորմավորվող են, այսինքն դրանք թույլատրվում է նվազեցնել համախառն եկամտիչ ՀՀ կառավարության 27.11.1998թ. «Հարկման նպատակով համախառն եկամտիչ իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին» N 753 որոշմամբ սահմանված չափերով:

Համախառն եկամտիչ նվազեցվող հետևյալ ծախսերի համար սահմանված են առավելագույն չափեր՝

- վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու ծախսերը՝ համախառն եկամտի 0.5%-ը չգերազանցող գումարը,
- Հայաստանից դուրս գովազդի ծախսերը՝ համախառն եկամտի 3%-ը կամ հաշվետու տարում Հայաստանից դուրս արտահանված ապրանքների (ծառայությունների) արժեքի 20%-ը չգերազանցող գումարներից առավելագույնը,
- Հայաստանից դուրս կադրերի պատրաստման ծախսերը՝ համախառն եկամտի 4%-ը (բայց ոչ ավելի, քան տվյալ տարում փաստացի վերապատրաստում անցած յուրաքանչյուր աշխատողի հաշվով 3,0 մլն. դրամը) չգերազանցող գումարը,
- Հայաստանից դուրս կադրերի վերապատրաստման ծախսերը՝ համախառն եկամտի 1%-ը (բայց ոչ ավելի, քան տվյալ տարում փաստացի պատրաստում անցած յուրաքանչյուր աշխատողի հաշվով 1,0 մլն. դրամը) չգերազանցող գումարը,
- հատուկ սննդի համար կատարված ծախսերը՝ յուրաքանչյուր աշխատողին աշխատանքի և դրան հավասարեցված պարտականությունների համար վճարված եկամուտների 20%-ը (բայց որ ավելի, քան 200,0 հազ. դրամ) չգերազանցող գումարը,
- արտահագուստի և այլ հանդերձանքի համար կատարված ծախսերը՝ աշխատանքի ու դրան հավասարեցված պարտականությունների համար աշխատողներին վճարված եկամուտների 10%-ը (բայց ոչ ավելի, քան յուրաքանչյուր աշխատողի հաշվով 200,0 հազ. դրամը) չգերազանցող գումարը,
- աշխատակիցներին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ փոխհատուցումների համար կատարված ծախսերը՝ աշխա-

տանքի ու դրան հավասարեցված պարտականությունների համար աշխատողներին վճարված եկամուտների 5%-ը չգերազանցող գումարը,

- Հայաստանից դուրս գործուղման ծախսերը՝ համախառն եկամտի 5%-ը չգերազանցող գումարը : Ընդ որում, գործուղվողի գործուղման մեջ գտնվելու յուրաքանչյուր օրվա համար օրապահիկի ծախսը՝ 25,0 հազ. դրամը, իսկ ՀՀ կառավարության կողմից այլ գումար սահմանված լինելու դեպքում՝ սահմանված նվազագույն գումարը,

Ուշադրություն՝ *Օրապահիկի ծախսերի նվազագույն գումարները սահմանված են ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը հաստատելու մասին» N 2335-Ն որոշմամբ.*

- Հայաստանի տարածքում գործուղման (բացառությամբ՝ հիմնական աշխատանքի վայրից այլ վայր մեկնելու և նույն օրը վերադառնալու, հիմնական աշխատանքի վայրից մինչև 30կմ հեռավորությամբ գտնվող այլ վայր գործուղվելու դեպքերի) օրապահիկի ծախսերը՝ գործուղվողի գործուղման մեջ գտնվելու յուրաքանչյուր օրվա համար 8,0 հազ. դրամը չգերազանցող գումարը,
- Հայաստանից դուրս մարքետինգի ծախսերը՝ համախառն եկամտի 2%-ը կամ հաշվետու տարում Հայաստանից դուրս արտահանված ապրանքների (ծառայությունների) արժեքի 15%-ը կամ ներմուծված ապրանքների արժեքի 5%-ը չգերազանցող գումարներից առավելագույնը,
- ներկայացուցչական ծախսերը՝ համախառն եկամտի 0.5%-ը (բայց ոչ ավելի, քան 5,0 մլն. դրամը) չգերազանցող գումարը,
- առողջապահական հիմնարկների, ծերերի և հաշմանդամների տների, մանկական նախադպրոցական հիմնարկների, վերականգնողական ճամբարների, մշակութային, կրթական և մարզական հիմնարկների, բնակարանային ֆոնդի օբյեկտների պահպանման համար՝ համախառն եկամտի 0.2%-ը չգերազանցող գումարը:

Կորուստները դասակարգվում են հետևյալ տեսակների՝

- բնական կամ փաստացի այլ կորուստներ.
- պատահական կորուստներ:

Գույքի բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, որոնք բացահայտվում են գույքի մթերման, պահպանման և իրացման պրոցեսում: Բնական կորուստներին չեն դասվում գույքի պահպանման և տեղափոխման ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

Բնական կամ այլ փաստացի կորուստները համախառն եկամտից նվազեցվում են նորմաների (չափերի) սահմաններում, դրանց տեղի ունենալու կամ հայտնաբերվելու տարվա ընթացքում, իսկ նորմաների (չափերի) բացակայության դեպքում այդ կորուստները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Կորուստները պետք է բավարարեն հիմնավորվածության պայմաններին, այսինքն՝ համախառն եկամտից նվազեցման ենթակա են միայն փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստները: Բնական կամ փաստացի այլ կորուստների նորմաներ (չափեր) սահմանված չլինելու կամ դրանք գերազանցող կորստի դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է այդ կորստի չափով՝

- վնաս պատճառողի կողմից կորուստն ամբողջությամբ կամ մաս-մաս կամովին հատուցելու դեպքում՝ կորստի ամբողջական կամ մաս-մաս հատուցման տարում, կամ՝
- վնաս պատճառած անձին չպարզելու հետևանքով նախաքննության մարմնի կողմից քրեական գործը կասեցնելու կամ կարճելու մասին որոշում ընդունելու դեպքում՝ վերջինիս ընդունման տարում, կամ՝
- անձին մեղավոր կամ անմեղ ճանաչելու դատավճիռ կայացնելու դեպքում՝ վերջինիս ուժի մեջ մտնելու տարում:

Հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցվում է գույքի պատահական կորուստների չափով՝ դրանց տեղի ունենալու կամ այն հայտնաբերվելու տարվա ընթացքում:

Որպես պատահական կորուստ ընդունվում է գույքի (շենքեր, շինություններ և այլ հիմնական միջոցներ, ապրանքանյութական պաշ-

արներ և այլ նյութական արժեքներ) փաստաթղթերով հիմնավորված փաստացի կորուստը (ոչնչացումը, վնասումը կամ որակական հայտանիշների անկումը), որը տեղի է ունենում հրդեհի, ջրհեղեղի, երկրաշարժի կամ այլ տարերային աղետի, նավաբեկման, պատերազմի, մարտական գործողությունների, զինված հարձակման, զանգվածային անկարգությունների, ապստամբության կամ նման այլ արտակարգ իրադարձությունների, ինչպես նաև օրենսդրության փոփոխության (գործունեության տեսակի արգելում, ազգայնացում և այլն) հետևանքով (ներառյալ՝ տարերային աղետների հետևանքների կանխման կամ վերացման հետ կապված ծախսերը):

Այլ նվազեցումների թվին են դասվում, մասնավորապես՝

- անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրման համար ՀՀ կառավարության սահմանած կարգով՝ պահուստին (պահուստաֆոնդին) կատարվող մասհանումները, իսկ այդ պարտքերի դուրսգրման դեպքում՝ այդ նպատակով ստեղծված պահուստին (պահուստաֆոնդին) կատարված մասհանումները գերազանցող գումարը,
- ՀՀ կառավարության սահմանած կարգով դուրս գրված անհուսալի կրեդիտորական պարտքերի մարման գումարները:

Շահութահարկի հաշվարկման նպատակով գործում է դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրս գրման ՀՀ կառավարության 19.12.2002թ. N 2052-Ն որոշմամբ հաստատված կարգը: Այն տարածվում է այլ անձանց հետ պայմանագրերից, աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունից, վնաս պատճառելու հետևանքով կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով առաջացած պարտավորությունների վրա: Կարգը չի տարածվում՝ պետական կամ համայնքների բյուջեների նկատմամբ հարկային պարտավորությունների, տուրքերի և պարտադիր այլ վճարների գծով առաջացած պարտքերի վրա, առհաշիվ անձանց հետ փոխհաշվարկների գծով առաջացած պարտքերի վրա (բացառությամբ՝ դատական կարգով նրանց պարտատեր կամ պարտապան ճանաչելու դեպքերի):

Ուշադրություն՝ Կազմակերպությունները մինչև հաշվետու տարվա համար շահութահարկի հաշվարկի ներկայացման օրը, սակայն ոչ ուշ, քան մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը (նե-

րառյալ), իրենց հաշվառման վայրի հարկային մարմին գրավոր տեղեկանք են ներկայացնում հաշվետու տարվա ընթացքում անհուսալի ճանաչված պարտքերի վերաբերյալ (բացառությամբ՝ յուրաքանչյուր դեբիտորի մասով 100,0 հազ. դրամը չգերազանցող պարտքի):

Այլ նվազեցումների թվին են դասվում նաև՝

- հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող 3 տարիներում ավել ցույց տրված եկամուտը կամ պակաս ցույց տրված նվազեցումը.
- ոչ առևտրային կազմակերպություններին, գրադարաններին, քանգարաններին, հանրակրթական դպրոցներին, տուն-գիշերօթիկներին, ծերանոցներին և մանկատներին, ինչպես նաև հոգեբուժական և հակաթոքախտային դիսպանսերներին և հիվանդանոցներին փոխանցված (տրամադրված) միջոցների (ապրանք, դրամական միջոցներ), նրանց մատուցված ծառայությունների արժեքը, բայց ոչ ավելի, քան համախառն եկամտի 0.25%-ը,
- նախորդ տարիներին առաջացած վնասները (բացառությամբ՝ կազմակերպությունների միացման, միաձուլման և վերակազմավորման ձևով վերակազմակերպման դեպքերի)

Ուշադրություն՝ Վնասը օրենքով նախատեսված նվազեցումների գերազանցումն է համախառն եկամտի նկատմամբ: Ընդ որում, նախորդ տարիներին գործունեությունից վնաս ունենալու դեպքում այն փոխանցվում է վնասի ստացման տարվան հաջորդող 5 տարիներ:

- հարկատուի մոտ վարձու աշխատող յուրաքանչյուր հաշմանդամի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 150%-ը (նվազեցումը կատարվում է աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով ծախսերից անկախ): Այդ նվազեցումը իրականացնելիս, որպես վարձու աշխատող հաշմանդամներ, բացի հիմնական գործունեության մեջ ներգրավված հաստիքային աշխատող հաշմանդամներից, ներառվում են նաև համատեղության կարգով այլ կազմակերպություններից աշխատանքի ընդունված հաշմանդամները և քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրերի հիման վրա աշխատանքներ կատարող հաշմանդամները:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված են **շահութահարկի վճարումից ազատման արտոնություն** գյուղատնտեսական

արտադրանքի արտադրությամբ զբաղված հարկատուների համար՝ իրենց կողմից գյուղատնտեսական արտադրանքի իրացումից ստացված եկամտի, ինչպես նաև հիմնական միջոցների, այլ ակտիվների իրացումից ստացված և այլ եկամուտների մասով, եթե վերջիններիս տեսակարար կշիռը համախառն եկամտի մեջ չի գերազանցում 10 %-ը.

Ուշադրություն՝ Գյուղատնտեսական արտադրանք են համարվում կենդանիների կամ բույսերի կենսաբանական վերափոխման միջոցով վերջնական կամ միջանկյալ սպառման համար ստացվող՝

- հացահատիկային և հացահատիկատրոսային մշակաբույսերը.
- տեխնիկական մշակաբույսերը.
- պալարապտղային, բանջարային, բոստանային մշակաբույսերը և փակ գրունտի արտադրանքը.
- դաշտային մշակման կերային մշակաբույսերը.
- կերարտադրության այլ արտադրանքը.
- պարտեզների, խաղողի այգիների, բազմամյա տնկիների և ծաղկաբուծության արտադրանքը.
- ծառերի և թփերի սերմերը, պտուղներում եղած սերմերը.
- ծառերի և թփերի սածիլները, տնկիները.
- անասնաբուծության արտադրանքը.
- խոզաբուծության արտադրանքը.
- ոչխարաբուծության և այծաբուծության արտադրանքը.
- թռչնաբուծության արտադրանքը.
- ձիաբուծության, էշաբուծության և ջորիաբուծության արտադրանքը.
- եղջերվաբուծության և ուղտաբուծության արտադրանքը.
- ճագարաբուծության, մորթատու գազանաբուծության և որսորդական տնտեսության արտադրանքը.
- ձկնաբուծության, մեղվաբուծության, շերամաբուծության, արհեստական սերմնավորման արտադրանքը:

Գյուղատնտեսական արտադրանքի գծով ստացված եկամտի ճշգրիտ հաշվարկման անհնարինության դեպքում այն հաշվարկվում է՝ հիմնվելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված կադաստրային գուտ եկամտի տվյալների վրա:

Հայաստանի Հանրապետությունում **շահութահարկի դրույքաչափը** սահմանված է 20%:

$$\text{Շահութահարկ} = \text{Հարկվող շահույթ} \times 20\%$$

Շահութահարկը որոշվում է յուրաքանչյուր տարվա արդյունքներով և ենթակա է վճարման պետական բյուջե մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա **ապրիլի 25-ը ներառյալ**:

Շահութահարկ վճարողները հաշվետու տարվա ընթացքում պարտավոր են կատարել **շահութահարկի ամսական վճարումներ՝ շահութահարկի կանխավճարի և նվազագույն շահութահարկի ամսական գումարի առավելագույնի չափով**: Շահութահարկի ամսական վճարման գումարները վճարվում են յուրաքանչյուր ամիս՝ տվյալ ամսվա 25-ից (իսկ եթե դա համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվանից) ոչ ուշ:

Շահութահարկի կանխավճարների գումարը որոշվում է նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 1/16-րդ չափով, եթե նախորդ տարվա շահութահարկի գումարը գերազանցել է 500,0 հազ. դրամը: Տվյալ հաշվետու տարվա սկզբից՝ մինչև նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարի հայտնի դառնալը, շահութահարկի կանխավճարները յուրաքանչյուր անգամ կատարվում են նախորդ տարվա վերջին կանխավճարի գումարից ոչ պակաս չափով: Նախորդ տարվա փաստացի շահութահարկի գումարը հայտնի դառնալուց հետո շահութահարկի հաշվարկի ներկայացմանը հաջորդող առաջին կանխավճարային մուծման ժամանակ կատարվում է մինչև հաշվարկի ներկայացումը տվյալ տարվա ընթացքում կատարված կանխավճարների գումարների ճշտում՝ տարվա սկզբից աճող հանրագումարով և նախորդ տարվա շահութահարկի փաստացի գումարի 1/16-ի չափով: Հաշվետու տարվա ավարտից հետո հաշվարկվում է շահութահարկի գումարը՝ դրան հաշվանցելով տվյալ հաշվետու տարվա համար կատարված կանխավճարների գումարը:

Նվազագույն շահութահարկի ամսական գումարները հաշվարկվում են նախորդ ամսվա ընթացքում ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս ապրանքների (բացառությամբ՝ հիմնական միջոցների, արժեթղթերի և ֆոնդային ապրանքների), արտադրանքի իրացումից և ծառայությունների մատուցումից հաշվեգրման եղանակով հաշվարկված եկամտից (առանց անուղղակի հարկերի) և նույն ժամանակահատվածում այդ եկամտի 50%-ը չգերազանցող մասով՝ շահութահարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների տարբերության նկատմամբ 1% դրույթչափով:

Նվազագույն շահութահարկի ամսական գումարները վճարվում են նաև այն դեպքերում, եթե հարկատուն նախորդ տարում ունեցել է հարկա-

յին վնաս կամ նախորդ տարվա գործունեության արդյունքներով հաշվարկված շահութահարկի գումարը չի գերազանցել 500,0 հազ. դրամը:

Նվազագույն շահութահարկի ամսական գումարների հաշվարկման բազայում չեն ներառվում, մասնավորապես՝

- ա) ռոյալթիները,
- բ) ապահովագրական հատույունները,
- գ) անհատույ ստացվող ակտիվները,
- դ) պարտավորությունների զեղչումից (ներումից) ստացվող եկամուտները,
- ե) գույքային սանկցիաները (տույժեր, տուգանքներ),
- զ) գույքագրման և ստուգումների ժամանակ բացահայտված գույքի ավելցուկը,
- է) զբոսաշրջության բնագավառում գործունեություն իրականացնող զբոսաշրջային օպերատորների համար՝ նաև զբոսաշրջային փաթեթով նախատեսված՝ այլ անձանց կողմից մատուցվող ծառայությունների (զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջումների բավարարմանն ուղղված տեղաբաշխման, հյուրանոցային, տեղափոխման, էքսկուրսային, սննդի կազմակերպման և մատուցման, մշակութային, մարզական բնույթի միջոցառումների, հանգստի, զվարճանքի կազմակերպման և այլ ծառայությունների) արժեքը, եթե այդ ծառայությունների մատուցումը հիմնավորվում է սկզբնական (հաշվարկային) փաստաթղթերով, որոնք բավարարում են ծախսերը հիմնավորող փաստաթղթերի նկատմամբ սահմանված պահանջներին,
- ը) եկամուտների ստացման համար վճարած անուղղակի հարկերը (ակցիզային հարկ, ԱԱՀ):

Նվազագույն շահութահարկի տարեկան հանրագումարի և հաշվետու տարվա փաստացի շահութահարկի դրական տարբերությունը նվազեցվում է հետագա տարիների շահութահարկից:

ՓՄՁ-ները յուրաքանչյուր տարվա արդյունքներով իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնում են.

- շահութահարկի հաշվարկ.
- հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրությամբ սահմանված ձևերով հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ՝ հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ից ոչ ուշ:

Նախորդ հաշվետու տարիների համար հարկային մարմին ներկայացված շահութահարկի հաշվարկներում ՓՄՁ-ի կողմից սխալներ հայտնաբերելու դեպքում (որոնք չեն բխում հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից) կազմակերպությունը կարող է հարկային մարմին ներկայացնել **շահութահարկի ճշտված հաշվարկ**, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

ՓՄՁ-ի կողմից հարկային մարմնին շահութահարկի ճշտված հաշվարկ ներկայացնելու դեպքում կատարվում է նաև հաշվարկված շահութահարկի կանխավճարների ամսական գումարների վերահաշվարկ՝ այն տարվանը հաջորդող տարվանից սկսած, որի համար ներկայացվել է ճշտված հաշվարկ, ինչպես նաև վերահաշվարկված և չվճարված շահութահարկի կանխավճարների ամսական գումարների նկատմամբ տույժերի վերահաշվարկ:

Եթե նախորդ հաշվետու տարիների համար ներկայացված շահութահարկի հաշվարկներում կատարվել են հաշվապահական հաշվառման մեջ տրվող գրանցումներից բխող սխալներ, ապա ՓՄՁ-ն կարող է հաշվապահական հաշվառման մեջ տալ համապատասխան գրանցումներ և այդ մասին գրավոր տեղյակ պահել իր հաշվառման վայրի հարկային մարմին, որպեսզի հետագայում հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների ժամանակ նրա նկատմամբ չկիրառվեն հարկվող շահույթը թաքցնելու կամ պակաս ցույց տալու, ինչպես նաև շահութահարկի հաշվարկներում հարկային վնասն ավելի ցույց տալու համար օրենսդրությամբ սահմանված տուգանքները:

Հարկային մարմինների կողմից կազմակերպությունների մոտ իրականացված ստուգումների ընթացքում հարկային օրենսդրությամբ կազմակերպության կողմից հարկային մարմիններ ներկայացված ստուգվող տարիներին վերաբերող շահութահարկի հաշվարկների ճշտում չի իրականացվում (շահութահարկի ճշտված հաշվարկներ չեն ներկայացվում): Շահութահարկի ճշտված հաշվարկներ չեն ներկայացվում նաև հարկային մարմինների կողմից կատարված՝ շահութահարկի գծով բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության ստուգմամբ ընդգրկված տարիների համար: Ստուգված տարիների համար շահութահարկի գծով պարտավորությունները կարող են ճշտվել միայն կազմակերպության կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Հայաստանում գանձվող շահութահարկը նվազեցվում (պակասեցվում) է շահութահարկի այն գումարի չափով, որը գանձվել է ՓՄՁ-ից օտարերկրյա պետություններում դրանց օրենսդրությանը համապատասխան, իրենց պետության տարածքում ստացված շահույթից: Ընդ որում՝ նվազեցվող շահութահարկի գումարը չի կարող գերազանցել օտարերկրյա պետություններում ստացված շահույթի ՀՀ-ում վճարման ենթակա շահութահարկի գումարին: Եթե նվազեցման ենթակա գումարը գերազանցում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով առաջացած շահութահարկի պարտավորությանը, ապա գերազանցող գումարը նվազեցվում է հաջորդ տարիների շահութահարկի գումարից:

Նման նվազեցումների իրականացման համար հիմք են հանդիսանում ՓՄՁ-ի կողմից օտարերկրյա պետություններում վճարված հարկի գումարների վերաբերյալ համապատասխան տեղեկանքները (կամայական ձևով կազմված, սակայն վճարված հարկի գումարների վերաբերյալ տեղեկություններ պարունակող), որոնք պետք է վավերացված լինեն այդ պետությունների հարկ գանձող համապատասխան մարմինների կողմից:

6. ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԵԺԻՄԸ

ՓՄՁ-ի ձեռնարկատիրական գործունեությունը (բացառությամբ՝ հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից) կարող է հարկվել ԱԱՀ-ին և շահութահարկին փոխարինող պարզեցված հարկով: Այսինքն, ՓՄՁ-ն հարկման ռեժիմների ընտրության հնարավորություն ունի՝ կամ ընդհանուր հարկման և հաստատագրված վճարներով հարկման ռեժիմ, կամ պարզեցված հարկի և հաստատագրված վճարներով հարկման ռեժիմ:

Պարզեցված հարկի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունը ընդունվում է 60%, իսկ շահութահարկինը՝ 40%: ՓՄՁ-ի պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով կասեցվում են ԱԱՀ-ի և շահութահարկի արտոնությունները, հաշվի չեն առնվում համախառն եկամտից նվազեցումները:

6.1.

Պարզեցված հարկը

Տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար ՓՄՁ-ն իր հաշվառման վայրի հարկային մարմին այդ տարվա հունվարի 1-ից 25-ը (ներառյալ) ներկայացնում է Հայտարարագիր՝ պարզեցված հարկ վճարող համարվելու համար օրենքով սահմանված պայմաններին բավարարելու և պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելու վերաբերյալ: Այդ դեպքում կազմակերպությունը համարվում է պարզեցված հարկ վճարող ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով (բացառությամբ՝ հաստատագրված վճարման հարկվող գործունեության տեսակների): Նոր ստեղծված (պետական գրանցում ստացած) հարկատուն՝ օրենքով սահմանված պայմաններին բավարարելու դեպքում, պետական գրանցում ստանալու օրվանից համարվում է պարզեցված հարկ վճարող, եթե նա պետական գրանցման օրվանից 1-ամսյա ժամկետում (բայց ոչ ուշ, քան պետական գրանցման եռամսյակի վերջին օրը) իր հաշվառման վայրի հարկային մարմին է ներկայացնում պարզեցված հարկ վճարող համարվելու համար Հայտարարագիր :

ՓՄՁ-ները պարզեցված հարկ վճարող չեն կարող համարվել՝

- ա) եթե նրանց կողմից նախորդ տարվա ընթացքում ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության ընդհանուր գումարը (առանց ԱԱՀ-ի) գերազանցել է 50,0 մլն. դրամը.
- բ) եթե ունեն ենթասկզիզային ապրանքների արտադրություն.
- գ) եթե ունեն նախորդ տարվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված և չիրացված 1,0 մլն. դրամը գերազանցող այնպիսի ապրանքների մնացորդ, որոնց համար ԱԱՀ-ը վճարված չի եղել ներմուծման պահին.
- դ) եթե տվյալ տարվա հունվարի 1-ին ունեն 100,0 հազար և ավելի դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ (այդ թվում՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարը).
- ե) եթե բանկ, գրավատուն, վարկային կամ ավանդավորական կազմակերպություն են, արժեթղթերի շուկայի մասնագիտաց-

ված մասնակից են, արտարժույթի առք ու վաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող են, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակխաղերի կազմակերպման գործունեություն իրականացնող են, հանքագործական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության, իրավունքի, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն իրականացնող են, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն իրականացնող են.

- զ) եթե ունեն գյուղատնտեսական արտադրանքի արտադրություն.
- է) եթե համատեղ գործունեության պայմանագրի կողմ են հանդիսանում.
- ը) եթե նրա կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է պարզեցված հարկ վճարողին կամ եթե նրա կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը) պատկանում է այն անձին, որին միաժամանակ պատկանում է պարզեցված հարկ վճարող առևտրային այլ կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնեմասը).
- թ) եթե նրան է պատկանում պարզեցված հարկ վճարողի կանոնադրական կապիտալի 50 % և ավելի փայաբաժին:

ՓՄՁ-ն կարող է իր ցանկությամբ կամավոր ձևով վերադառնալ ընդհանուր հարկման դաշտ՝ ներկայացնելով Դիմում ընդհանուր հարկման ռեժիմին անցնելու մասին: Այդ դեպքում նա համարվում է ընդհանուր հարկման ռեժիմին անցած դիմումը ներկայացնելու եռամսյակյին հաջորդող ամսվա 1-ից:

Պարզեցված հարկով հարկման ռեժիմից **դուրս գալը** կատարվում է նաև պարտադրաբար՝ պարզեցված հարկ վճարող դադարելու օրենքով սահմանված հիմքերի առաջացման դեպքերում՝

- ա) պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում թույլ է տվել ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին վերաբերող՝ «Վարչական իրա-

վախասխտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 170⁷, 170⁸, 170⁹ կամ 170¹² հոդվածների մեկից ավելի խախտման դեպքեր.

- բ) տվյալ եռամսյակի առաջին ամսվա 1-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները գերազանցել են 100,0 հազ. դրամը.
- գ) իրականացնում է վերը թվարկված օրենքով սահմանված այնպիսի գործունեության տեսակներ, որոնց մասով չի կարող համարվել պարզեցված հարկ վճարող
- դ) եռամսյակի ընթացքում իր կողմից Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծել է 250,0 հազ. դրամը գերազանցող արժեք ունեցող այնպիսի ապրանքներ, որոնց համար ԱԱՀ-ը վճարված չի եղել ներմուծման պահին.
- ե) հանդիսացել է համատեղ գործունեության պայմանագրի կողմ.
- զ) տվյալ տարվա սկզբից ունեցել է 50,0 մլն. դրամից ավելի իրացման շրջանառություն.
- է) տվյալ տարվա որևէ պահին խանութի, կրպակի (տաղավարի) միջոցով առևտրական գործունեության մասով ունեցել է 15,0 մլն. դրամը գերազանցող՝ իրեն պատկանող ապրանքային մնացորդ (հաշվարկված ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով):

Հարկվող օբյեկտ է համարվում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը):

Վարձակալության դեպքում վարձատուի իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) վարձավճարն է, իսկ փոխառության դեպքում՝ տոկոսները: Իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) ներառում է նաև ռոյալթիները:

Անհատույց (մասնակի հատուցմամբ), ինչպես նաև փոխանակման գործարքների (գործառնությունների) համար իրացման շրջանառությունը (իրացումից հասույթը) որոշվում է այդ գործարքների (գործառնությունների) համար սովորաբար կիրառվող (իրական) գներից ելնելով:

Ուշադրություն. *Հարկվող օբյեկտը թաքցնելու (պակաս ցույց տալու) դեպքում զանձվում է թաքցված (պակաս ցույց տրված) հարկվող*

օբյեկտի համար նախատեսված (հաշվարկված) պարզեցված հարկի գումարը և տուգանք՝ այդ գումարի չափով:

Գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կատարվող հաշվարկները՝

ա) խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով պարզեցված հարկը կազմում է՝

Պարզեցված հարկ = Իրացման շրջանառություն × 3.5%,

բ) վարձակալության մասով պարզեցված հարկը կազմում է՝

Պարզեցված հարկ = Իրացման շրջանառություն × 10%,

գ) այլ գործունեության մասով պարզեցված հարկը կազմում է՝

Պարզեցված հարկ = Իրացման շրջանառություն × 5%:

Պարզեցված հարկ վճարողի պարզեցված հարկով հարկվող գործունեության հետ կապված ծախսերը հաշվի չեն առնվում պարզեցված հարկը հաշվարկելիս, միաժամանակ, փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի նկատմամբ չի կիրառվում 3% դրույքաչափով եկամտահարկ հաշվարկելու պարտավորությունը:

Քանի որ պարզեցված հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և շահութահարկին, ապա այդ հարկատեսակների համար սահմանված են առանձնահատկություններ՝ հարկման ռեժիմների փոփոխման դեպքերում:

ա) **ԱԱՀ-ի հաշվառումը՝ պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելիս.**

Պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելու դեպքում մինչ այդ իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարները գերազանցող՝ մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված (մաքսային մարմին վճարված) ԱԱՀ-ի գումարների մնացորդը միացվում է ծախսերին (պարզեցված հարկ վճարող համարվելու առաջին եռամսյակում):

բ) **ԱԱՀ-ի հաշվառումը՝ ընդհանուր կարգով հարկման ռեժիմին անցնելիս.**

Հարկման ընդհանուր ռեժիմին անցնելու դեպքում իրացման շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից չեն հաշվանցվում պարզեցված հարկով հարկման ռեժիմում մատակարարների հարկային հաշիվներում առանձնացված (մաքսային մարմին վճարված) ԱԱՀ-ի գումարները:

զ) **Շահութահարկի հաշվառումը՝ պարզեցված հարկով հարկ-
ման ռեժիմին անցնելիս (և հակառակը).**

Պարզեցված հարկին անցնելիս՝

- մինչ այդ ստացած հարկային վնասը «ստեղծվում է» և կարող է նվազեցվել համախառն եկամտից հետագայում նորից հարկման ընդհանուր ռեժիմին անցնելուց,
- կատարված ուղղակի ծախսերը, որոնց դիմաց դեռևս չեն ստացվել եկամուտներ (այսինքն՝ դեռևս որպես ծախսումներ որակվողները), կարող են նվազեցվել համախառն եկամտից հարկման ընդհանուր ռեժիմին անցնելուց:

Պարզեցված հարկով հարկման ժամանակ կատարված ծախսերը հարկման ընդհանուր ռեժիմին անցնելուց հարկ վճարողի համախառն եկամտից ենթակա չեն նվազեցման:

Պարզեցված հարկի հաշվետու ժամանակաշրջանը **եռամսյակն է:**

Պարզեցված հարկ վճարողները մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ) հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում պարզեցված հարկի Հաշվարկը: Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար պարզեցված հարկի ներկայացված Հաշվարկներում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում հարկ վճարողը կարող է հարկային մարմին ներկայացնել ճշգրտված Հաշվարկներ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Ճշգրտված Հաշվարկներ չեն ներկայացվում այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որում կատարվել է պարզեցված հարկի գծով ստուգում՝ այդ ժամանակաշրջանի համար պարզեցված հարկի գծով պարտավորությունները կարող են ճշգրտվել միայն ներկայացված Դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Պարզեցված հարկի գումարը վճարվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը (ներառյալ):

Պարզեցված հարկ վճարողները՝ **վարում են եկամուտների և ծախսերի հաշվառում** (գործունեության յուրաքանչյուր տեսակի համար՝ եկամուտների և ծախսերի հաշվառման առանձին գիրք), իսկ առաքվող (տեղափոխվող) ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր, արտադրանքի (ապրանքների) և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր չեն վարում:

7.

ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ԿՃԱՐՆԵՐԸ

Հաստատագրված վճարը սահմանված է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և ՓՄՁ-ի համար փոխարինում է ԱԱՀ-ին և շահութահարկին: Հաստատագրված վճարի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ը կազմում է 60%: Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մասով՝ կասեցվում են ԱԱՀ-ի և շահութահարկի արտոնությունները, հաշվի չեն առնվում շահութահարկի գծով նվազեցումները:

ՓՄՁ-ի համար հաստատագրված վճարի հարկվող օբյեկտ են գործունեության հետևյալ տեսակները՝

- առևտրի իրականացման վայրից դուրս գտնվող՝ Երևան քաղաքում՝ 7մ², այլ վայրերում՝ 10մ² առևտրական տարածքը չգերազանցող կրպակների միջոցով իրականացվող առևտրական գործունեությունը և բնակելի տարածքից անմիջական վաճառքը,
- առևտրի իրականացման վայրի կազմակերպման գործունեությունը,

Ուշադրություն. *Կազմակերպիչները յուրաքանչյուր ամսվա արդյունքներով մինչև հաջորդ ամսվա 15-ը ներառյալ ՀՀ կառավարության 01.04.2002թ. N 298 որոշմամբ սահմանված կարգով ներկայացնում են Տեղեկություններ՝ առևտրի իրականացման վայրում առևտուր իրականացնողների մասին (տեղեկություններ չներկայացնելու դեպքում գանձվում է տուգանք՝ 500,0 հազ. դրամի չափով):*

- հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունը,
- ավտոտրանսպորտային գործունեությունը,
- վարսավիրական ծառայությունների մատուցման գործունեությունը,
- ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեությունը,
- բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեությունը,

- ավտոկանգառների գործունեությունը,
- արդյունագործական ձկնորսության գործունեությունը,
- խաղատների գործունեության կազմակերպումը,
- դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործումը,
- համակարգչային խաղերի կազմակերպումը,
- տեսամագնիտոֆոնների (տեսաժապավենների) վարձույթը,
- վիճակխաղերի կազմակերպումը,
- բաղնիքների (ցնցուղարանների) կազմակերպումը,
- ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեությունը,

Ուշադրություն. Նշված գործունեություն իրականացնողները յուրաքանչյուր ամսվա արդյունքներով մինչև հաջորդ ամսվա 15-ը (ներառյալ) ՀՀ կառավարության 14.04.2004թ. N 484-Ն որոշմամբ սահմանված կարգով ներկայացնում են Տեղեկություններ՝ ամսվա ընթացքում գազալցման տվյալ կայանի (կետի) միջոցով իրացված գազի ֆիզիկական ծավալների մասին՝ արտահայտված խորանարդ մետրերով (տեղեկություններ չներկայացնելու կամ իրացման ծավալները թերհայտարարագրելու դեպքում գանձվում է տուգանք՝ 500,0 հազ. դրամի չափով):

- բիլիարդ խաղի կազմակերպումը:

Ուշադրություն. Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն հաստատագրված վճարի ռեժիմից դուրս են գալիս որոշակի գործունեության տեսակներ, որտեղ հարկ վճարողների համար պարտադրվում է ՀԳՄ-ների կիրառումը: Մասնավորապես՝ ներկայումս լուսանկարչական լաբորատորիաների գործունեություն իրականացնողները ՀԳՄ-ների պարտադիր կիրառման հետ կապված չեն համարվում հաստատագրված վճար վճարողներ:

ՓՄՁ-ն մինչև հաստատագրված վճարով հարկվող գործունեություն սկսելը իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին է ներկայացնում Հայտարարություն 2 օրինակից՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների վերաբերյալ: Հարկային մարմնի կողմից հաշվառվելուց և կնքվելուց հետո Հայտարարության մեկ օրինակը վերադարձվում է հարկ վճարողին, որը փակցվում է հաստատագրված

վճարով հարկվող գործունեության իրականացման վայրում՝ առավել տեսանելի տեղում:

Հաստատագրված վճարներով հարկման բազան՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների որոշակի արտադրյալն է (դրամական արտահայտությամբ)՝

$$\text{Հարկման բազա} = \text{Բազմապատիկ մեծություն} \times \\ \times \text{Ելակետային տվյալ(ներ)} \times \text{Ուղղիչ գործակից(ներ):}$$

Ելակետային տվյալների կամ ուղղիչ գործակիցների փոփոխությունների (բացառությամբ՝ գործունեություն ժամանակավոր դադարեցման) դեպքում հարկ վճարողն այդ մասին գրավոր տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմնին՝ ներկայացնելով նոր Հայտարարություն (2 օրինակից), իսկ նախկին Հայտարարությունը վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում հարկ վճարողի կողմից:

Օրենքով գործունեության առանձին տեսակների համար նախատեսվում են՝

- սահմանային չափեր (սահմանային չափերի համապատասխան ցուցանիշներների վերաբերյալ ներկայացվում են տեղեկություններ (հայտարարություն) ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի կողմից սահմանված ձևով).
- համամասնություններ (համամասնությունների վերաբերյալ ներկայացվում է տեղեկանք ՀՀ ԿԱ ՀՊԾ-ի կողմից սահմանված ձևով):

Գործունեության **ժամանակավոր** դադարեցման դեպքում հարկ վճարողն այդ մասին նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման, բնակության) վայրի հարկային մարմնին՝ ներկայացնելով **Դիմում-Հայտարարություն** (նշելով դադարեցման ժամանակահատվածը):

Դիմում-Հայտարարության մեջ գործունեության դադարեցման ժամանակահատվածը նշված չլինելու (միայն գործունեության դադարեցման սկիզբը նշված լինելու) դեպքում գործունեությունը վերսկսելիս հարկ վճարողը նախապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմնին՝ ներկայացնելով Նոր Հայտարարություն (Նախկին Հայտարարությունը վերադարձվում է կամ ոչնչացվում հարկ վճարողի կողմից):

Գործունեության **դադարեցման (կասեցման)** դեպքում հարկ վճարողը գրավոր **Դիմում-Հայտարարություն** ներկայացնելու միջոցով նա-

խապես տեղեկացնում է իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմնին, իսկ նրա մոտ առկա **Հայտարարությունը** վերադարձվում է հարկային մարմնին կամ ոչնչացվում հարկատուի կողմից:

Ուշադրություն. Հարկային մարմնին գործունեության դադարեցման (կասեցման) մասին Դիմում-Հայտարարություն ներկայացնելու դեպքում գործունեության այն տեսակների մասով, որոնց համար ամսվա ընթացքում գործունեության իրականացման օրացույցային օրերը և դրանց թիվը չեն հանդիսանում ելակետային տվյալ (հանրային սննդի, ավտոտրանսպորտային գործունեություն, ավտոտեխսպասարկման կայանների (կետերի) գործունեություն, բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ վաճառքի գործունեություն, համակարգչային խաղերի կազմակերպում, տեսամազնիտոֆոնների (տեսաժապավենների) վարձույթ, բաղնիքների (ցնցուղարանների) կազմակերպում, ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեություն և բիլիարդ խաղի կազմակերպում) հաստատագրված վճարի հաշվարկը կասեցվում է ՓՄՁ-ի կողմից Դիմում-Հայտարարության մեջ նշված օրվանից, որը չի կարող Դիմում-Հայտարարության ներկայացման հաջորդ օրվանից ավելի շուտ լինել:

Հաստատագրված վճարի վճարումը կատարվում է յուրաքանչյուր ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը (ներառյալ):

Հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մասով շահութահարկի կանխավճարային մուծումներ չեն կատարվում:

Հաստատագրված վճար վճարող ՓՄՁ-ները օրենսդրությամբ սահմանված դեպքերում վարում են Կառավարության 31.07.1997թ. N 314 որոշմամբ սահմանված առաքվող (տեղափոխվող) ապրանքների գրանցման (հաշվառման) և 31.07.1997թ. N 315 որոշմամբ սահմանված արտադրանքի (ապրանքների) և դրանց գների (հատույթի) գրանցման (հաշվառման) գրքեր:

8. ԳՈՒՅՔԱԿԱՐԿ

Գույքահարկը սեփականության իրավունքով անձին պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Գույքահարկ վճարողներ են հանդիսանում ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և դրանց կողմից ՀՀ-ից դուրս ստեղծված կազմակերպությունները, որոնց ՀՀ տարածքում պատկանում է հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ ՀՀ պետական մարմինների, ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկների:

Գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում՝

- շենքերը և շինությունները (մասնավորապես՝ անհատական բնակելի տունը, բնակարանը, այգետնակը (ամառանոցը), ավտոտնակը, արտադրական և հասարակական նշանակության շինություններն),
- փոխադրամիջոցները (մասնավորապես՝ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը, ջրային փոխադրամիջոցը, մոտոցիկլետը):

Շինությունների դասակարգումն ըստ նպատակային նշանակության որոշվում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից և արտացոլվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականում:

Անկախ սեփականության իրավունքի առկայությունից՝ գույքահարկ հաշվարկվում և վճարվում է նաև նոր կառուցված, ձեռք բերված և անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված այն շինությունների համար, որոնք դեռևս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից

այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների (այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցների) համար:

Շինությունների հարկման բազան օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրալային արժեքն է (արտահայտված դրամներով):

Անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների գնահատումը (վերագնահատումը) կատարվում է 3 տարին մեկ անգամ և կադաստրային արժեքները հիմք են ընդունվում հետագա 3 տարիների գույքահարկը հաշվարկելու համար:

Ուշադրություն. *(Վերա)գնահատման տարիների միջև ընկած ժամանակահատվածում շինության ավարտվածության աստիճանի, հարկայնության, նպատակային նշանակության փոփոխությունների, ինչպես նաև սեփականության իրավունքով շինություն ձեռք բերելու դեպքերում գնահատված կադաստրային արժեքները հիմք են ընդունվում մինչև շինությունների հաջորդ գնահատումը:*

Փոխադրամիջոցների հարկման բազան դրանց քաշող շարժիչի հզորությունն է (արտահայտված ձիաուժերով կամ կիլովատերով): Եթե փոխադրամիջոցի վրա առկա են մեկից ավելի քաշող շարժիչներ, ապա հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը:

Հասարակական և արտադրական նշանակության շինությունների և ավտոտնակների գույքահարկի տարեկան գումարը (2005 թվականի հունվարի 1-ից) հաշվարկվում է **հարկման բազան** (հասարակական և արտադրական նշանակության շինությունների, ավտոտնակների կադաստրային արժեքը) բազմապատկելով **տարեկան դրույքաչափով** (հասարակական և արտադրական նշանակության շինությունների համար՝ 0.3%, ավտոտնակների համար՝ 0.2%) :

Հարկվող օբյեկտ համարվող մնացած շինությունների գույքահարկը (2005 թվականի հունվարի 1-ից) հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Շարկման բազան (կադաստրային արժեք)	Տարեկան դրույքաչափ
մինչև 3,0 մլն. դրամը ներառյալ	հարկման բազայի 0%
3,0 մլն. դրամից մինչև 10,0 մլն. դրամը (ներառյալ)	100 դրամ՝ գումարած հարկման բազայի 3,0 մլն. դրամը գերազանցող գումարի 0.1%
10,0 մլն. դրամից մինչև 20,0 մլն. դրամը (ներառյալ)	7100 դրամ՝ գումարած հարկման բազայի 10,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.2%
20,0 մլն. դրամից մինչև 30,0 մլն. դրամը (ներառյալ)	27100 դրամ՝ գումարած հարկման բազայի 20,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.4%
30,0 մլն. դրամից մինչև 40,0 մլն. դրամը (ներառյալ)	67100 դրամ՝ գումարած հարկման բազայի 30,0 մլն. դրամը գերազանցող մասի 0.6%
40,0 մլն. դրամից ավելի	127,100 դրամ՝ գումարած հարկման բա- զայի 40,0 մլն. դրամը գերազանցող մասի 1.0%

Փոխադրամիջոցների գույքահարկը հաշվարկվում է՝

- 1) Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար՝ հետևյալ տարեկան դրույքաչափերով՝
 - ա) մինչև 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
 - 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,
 - 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ,
 - 251 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաև 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ.
 - բ) 10 և ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների և բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝
 - 1-ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,
 - 201 և ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:

Մինչև 3 տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100%-ով: 3 տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10%-ի չափով (քայքայ ոչ ավելի, քան հարկի գումարի 50%-ը): Ընդ որում՝ վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում և չի վճարվում:

- 2) Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:
- 3) Ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:

Փոխադրամիջոցների հարկման բազան կիրվատերով արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է՝ համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

Գույքահարկի պարտավորությունն առաջանում է հարկվող օբյեկտի (կամ դրա մի մասի) նկատմամբ սեփականության իրավունքի ծագման (սեփականության իրավունքի պետական գրանցման) ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Կազմակերպությունները գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն՝ ելնելով հարկման բազայից և օրենքով սահմանված գույքահարկի դրույքաչափերից, հաշվի առնելով օրենքով սահմանված արտոնությունները:

Ուշադրություն՝ *Գույքահարկ վճարող կազմակերպություններին հաշվառող մարմին են հանդիսանում.*

- 2004թ. հունվարի 1-ից Երևան քաղաքի թաղային համայնքները (2004թ. ընթացքում հարկային մարմինների հետ համատեղ),

- 2005թ. հունվարի 1-ից ՀՀ քաղաքային համայնքները (2005թ. ընթացքում հարկային մարմինների հետ համատեղ),
- 2006թ. հունվարի 1-ից ՀՀ բոլոր գյուղական համայնքները, իսկ մինչև վերոնշյալ ժամկետները, ինչպես նաև համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների մասով առանց ժամկետների սահմանափակման՝ հարկային մարմինները:

Կազմակերպությունների գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում հաշվետու տարվա եռամսյակը: Եռամսյակային հաշվարկները մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը ներառյալ ներկայացվում են՝

- համայնքի վարչական սահմաններում գտնվող շինությունների համար՝ դրանց գտնվելու վայրի հաշվառող մարմին, ընդ որում առանձնացված ըստ համայնքների՝ յուրաքանչյուր համայնքում գտնվող շինության համար ներկայացվում է առանձին հաշվարկ:
- փոխադրամիջոցների համար՝ կազմակերպությունների պետական գրանցման (ըստ իրավաբանական հասցեի) վայրի տարածքը սպասարկող հաշվառող մարմին,
- համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող շինությունների համար՝ կազմակերպության հաշվառման վայրի տարածքը սպասարկող հարկային մարմին:

Հաշվարկված գումարները յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ վճարվում են՝

- համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ շինության գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ ՀՀ պետական բյուջե,
- հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության ըստ իրավաբանական հասցեի գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե:

Գույքահարկից ազատվում են գծային ինժեներատրանսպորտային շինությունները, ջրամբարները, պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկվող օբյեկտ համարվող շինությունները: Գույքահարկ վճարողներին արտոնություններ տրամադրելու իրավունք ունի նաև համայնքի ավագանին՝ տվյալ տար-

վա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 %-ի չափով: Գույքահարկի այլ արտոնություններ կա-րող են սահմանվել առանձին օրենքներով:

Ուշադրություն` *Գույքահարկ վճարողը պարտավոր է գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին ներկայացնել հարկային արտո-նությունների իր իրավունքը հաստատող համապատասխան փաս-տաթղթերը:*

Եթե գույքահարկով հարկվող օբյեկտի համար հաշվետու ժամանա-կաշրջանում գույքահարկի պարտավորության փաստացի ամփսնե-րի թիվը պակաս է տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ամփսների թվից, ապա տվյալ հարկվող օբյեկտի մասով օրենքով սահմանված գույքահարկի արտոնությունները հաշվի են առնվում գույքահարկի պարտավորության փաստացի ամփսների թվին համամասնորեն:

9. ՀՈՂԻ ՀԱՐԿԸ

Հողի սեփականատեր, պետական սեփականություն հանդիսացող հողերի մշտական կամ ժամանակավոր օգտագործող հանդիսացող ՓՄՁ-ները հողի հարկ են վճարում «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Վարձակալության պայմաններով օգտագործման (հողի սեփականատերերի, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական և ժամանակավոր օգտագործողների կողմից իրենց հո-ղերը վարձակալության պայմաններով) տրամադրված հողամասերի համար հողի հարկը գանձվում է վարձատուից:

Վճարողների հաշվառումն ու հողի հարկի հաշվարկունը կատար-վում է յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ի դրությամբ: Հարկային մար-միններն իրականացնում են վճարողների հաշվառում, վերահսկողու-թյուն են սահմանում հարկի ճիշտ հաշվարկման և ժամանակին վճար-ման նկատմամբ:

Ուշադրություն` *Մինչև ՀՀ հողային օրենսգրքի (ՀՕ-185) ուժի մեջ մտնելը (15.06.2001թ) հողի սեփականության իրավունքի և հողօգտա-*

գործման հետ կապված հարցերը կարգավորվել են «Սեփականության մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքով, համաձայն որոնց՝

- մշտական էր համարվում այն հողօգտագործումը, որի համար որոշակի ժամկետ չի սահմանվում: Պետական սեփականություն հանդիսացող հողերը մշտական օգտագործման էին տրամադրվում մասնավորապես՝ պետական ձեռնարկություններին, հիմնարկներին, հասարակական ու կրոնական կազմակերպություններին և պաշտպանության կարիքների համար՝ այդ սուբյեկտների գործունեության ամբողջ ժամանակահատվածում:
- պետական սեփականության հողերը մասնավորապես՝ ձեռնարկություններին, հիմնարկներին ու կազմակերպություններին սահմանված կարգով ժամանակավոր օգտագործման էին տրամադրվում կարճատև՝ մինչև երեք տարի, և երկարատև՝ երեքից տաս տարի ժամկետով:

ՀՀ նոր հողային օրենսգրքի (ՀՕ-185) 118-րդ հոդվածով օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահից մինչ այդ հողամասերի նկատմամբ մշտական և ժամանակավոր (կարճատև և երկարատև) օգտագործման իրավունք ունեցող անձինք, այդ թվում՝ մասնավորեցված (սեփականաշնորհված) իրավաբանական անձինք, օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացված հողամասերի նկատմամբ ձեռք են բերել վարձակալության իրավունք՝ տվյալ հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասարեցված տարեկան վարձավճարով: Նշված անձինք այդ հողամասերի գծով դադարել են համարվել հողի հարկ վճարողներ: Նշված դրույթները չեն տարածվում օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան պետական և համայնքային հիմնարկներին, համատիրություններին և ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրած հողամասերի վրա, որոնք իրենց անհատույց (մշտական) օգտագործման տրամադրված հողամասերի համար կրում են հողի հարկի պարտավորություններ, եթե օրենքով սահմանված կարգով չեն օգտվում հողի հարկի արտոնություններից:

Հողամասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքները հաստատող փաստաթղթեր են համարվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական և հողային օրենսգրքերով ու «Գ-ույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված փաստաթղթերը:

Հողի հարկի տարեկան դրույքաչափը սահմանված է.

Գյուղատնտեսական նշանակության հողերի համար դրանց կադաստրային գնահատմամբ որոշված (ԿԳՈ) հաշվարկային գուտեկամտի (ՀՁԵ) 15%-ի չափով:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար՝

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, կապի, տրանսպորտի զբաղեցված հողատարածքների համար՝ համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի (ԿԳԱ) նկատմամբ բնակավայրերի ներսում 1%-ի, իսկ բնակավայրերից դուրս 0.5%-ի չափով,
- ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար՝ տվյալ հողատեսքի ԿԳԱ 1%-ի չափով:

Հարկման ենթակա մակերեսների մեջ մտնում են նաև շենքերով ու շինություններով զբաղեցված հողերը, դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները, ինչպես նաև օբյեկտների սանիտարապահական, տեխնիկական և մյուս գոտիները:

Հողի հարկը հաշվարկվում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքի ձեռքբերման (սեփականության իրավունքի կամ մշտական օգտագործման պայմանագրի պետական գրանցման) ամսվան հաջորդող ամսից և դադարում է հողամասի սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից: Հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնության իրավունք ձեռք բերած հարկ վճարողը հարկի վճարումից արտոնության չափով ազատվում է այն ամսից, երբ ծագել է արտոնության իրավունքը, իսկ հաշվետու տարվա ընթացքում հողի հարկի գծով արտոնության իրավունքը դադարելու դեպքում հողի հարկն ամբողջությամբ հաշվարկվում է այդ իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսից:

Կազմակերպությունները հողի հարկը հաշվարկում են ինքնուրույն և ոչ ուշ, քան մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը համայնքների վարչական սահմաններում գտնվող հարկման ենթակա յուրաքանչյուր հողամասի հողի հարկի հաշվարկները ներկայացնում են հողամասի գտնվելու վայրի տարածքը սպասարկող հարկային տեսչություն, իսկ հաշվարկած հարկի գումարները եռամսյակը մեկ անգամ, մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը վճարում են հողամասի գտնվելու վայրի համայնքի բյուջե: Համայնքների վարչական սահմաններից դուրս գտվող՝ հարկվող օբյեկտ համարվող հողամասե-

րի հողի հարկի հաշվարկները կազմակերպությունը ներկայացնում է իր գտնվելու (պետական գրանցման) վայրի հարկային տեսչություն, իսկ հաշվարկած հարկի գումարները վճարում է պետական բյուջե: Լրացուցիչ (նոր) ձեռք բերված (հատկացված) հողամասի համար հողի հարկի հաշվարկները կազմակերպությունը ներկայացնում է սեփականության կամ օգտագործման իրավունքի ծագման պահից սկսած մեկ ամսվա ընթացքում: Ընդ որում, այդ հաշվարկները ներկայացվում են առանձին՝ հաշվարկի վրա կատարելով «Նոր հատկացված հողերի համար» նշում:

Հաշվետու տարվա առաջին և երկրորդ եռամսյակների (մինչև տարեկան հաշվարկի ներկայացումն ընկած վճարման ժամկետների) համար կազմակերպությունների կողմից հողի հարկը հաշվարկվում և վճարվում է յուրաքանչյուր եռամսյակում նախորդ տարվա համար հաշվարկված հարկի գումարի 1/4-ի չափով, հաշվի առնելով նոր հատկացված հողերի համար հաշվարկված հարկի գումարը: Երրորդ եռամսյակի համար, երբ արդեն ներկայացվել է հաշվարկը, հարկի չափը որոշվում է որպես տվյալ տարվա համար հաշվարկված հարկի գումարի 3/4-ի (9 ամսվա հարկի գումարի) և առաջին կիսամյակի համար վերը նշված կարգով հաշվարկված հարկի գումարների տարբերություն: Չորրորդ եռամսյակի համար հարկի չափը որոշվում է տվյալ տարվա համար հաշվարկված հարկի գումարից հանելով 9 ամսվա համար հաշվարկված հարկի գումարը:

Հողի հարկի հաշվարկների գծով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքով ճշտված հաշվարկների ներկայացում սահմանված չէ:

10.

ՓՄՁ-ՆԵՐՈՒՆՈՂԵՍ ԸԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ ԵՎ ԱՊԱՇՆՎԱԴԻՐ

Հայաստանի Հանրապետության առանձին հարկատեսակների մասին օրենքներով սահմանված դեպքերում հարկի վճարման պարտավորությունը կարող է դրվել **հարկային գործակալի** վրա:

Հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող (հատկացնող կամ բնամթերային ձևով տրամադրող) այն անձն է, որի

վրա օրենքի համաձայն, դրված է հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս (հատկացնելիս կամ տրամադրելիս) նրանց եկամուտներից հարկերը (այդ թվում՝ անուղղակի) հաշվարկելու, պահելու (գանձելու) և Հայաստանի Հանրապետության և համայնքների բյուջեներ վճարելու պարտավորությունը: Հարկային օրենսդրությանը համաձայն, ՓՄՁ-ները հարկային գործակալի պարտավորություններ կարող են ունենալ ավելացված արժեքի հարկի, ոչ ռեզիդենտի շահութահարկի և ֆիզիկական անձանց եկամտահարկի գծով:

Ապահովադիրը դա այն անձն է, ով օրենքով սահմանված կարգով ու չափերով սոցիալական վճարումներ է կատարում և փոխանցում (վճարում) Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե:

10.1.

Ավելացված արժեքի հարկ

Սահմանված կարգով ՀՀ-ում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող չգրանցված օտարերկրյա անձանց կողմից Հայաստանի Հանրապետությունում ԱԱՀ-ով հարկվող գործարքներ իրականացնելիս (ներառյալ այդ անձանց սեփականությունը հանդիսացող ապրանքներ ներմուծելիս) պայմանագրային հարաբերությունների կողմ (ներառյալ կոնտրագենտ) հանդիսացող ՓՄՁ-ները այդ գործարքների գծով օտարերկրյա անձանց փոխարեն կրում են ԱԱՀ-ի գծով հարկային պարտավորություն՝ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և ժամկետներում: Այդ գործարքների գծով ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը որոշվում է ընդհանուր սահմանված կարգով:

Նշված դեպքերում հարկային պարտավորություն կրելիս ՓՄՁ-ն Հայաստանի Հանրապետությունում չգրանցված օտարերկրյա անձի անունից կարող է օրենքով սահմանված կարգով դուրս գրել հարկային հաշիվներ, որոնցում, որպես ապրանք առաքող կամ ծառայություն մատուցող անձի՝ հարկ վճարողի հաշվառման համար, նշում է իր համապատասխան հաշվառման համարը: Նշված կարգով դուրս գրված հարկային հաշիվները համարվում են դուրս գրված մատակարարի կողմից:

10.2.

Ոչ ռեզիդենտի շահութահարկ

ՓՄՁ-ի կողմից հայաստանյան աղբյուրներից օտարերկրյա կազմակերպությանը (ոչ ռեզիդենտին) եկամուտներ վճարվելու (ընամթերային ձևով հատկացվելու) դեպքում՝ այդ կազմակերպության փոխարեն, եկամտի վճարման աղբյուրի մոտ առաջանում է **ոչ ռեզիդենտի շահութահարկի** պահման և պետական բյուջե փոխանցման պարտավորություն, այսինքն ՓՄՁ-ն տվյալ դեպքում հանդիսանում է հարկային գործակալ:

Հայաստանյան աղբյուրից ստացված եկամուտներ են համարվում ՀՀ տարածքում ոչ ռեզիդենտի իրականացրած ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները, ոչ ռեզիդենտի (ռեզիդենտից կամ ոչ ռեզիդենտից) ստացած պասիվ և այլ եկամուտները:

ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ են համարվում, մասնավորապես՝

- ա) ՀՀ-ում արտադրանքի, ապրանքների իրացումից և ծառայությունների մատուցումից ստացված եկամուտը՝ անկախ վճարման վայրից.
- բ) ՀՀ-ում միջնորդական գործունեությունից ստացված եկամուտը.
- գ) կառավարման, ֆինանսական և ապահովագրական ծառայություններից ստացված եկամուտները, եթե դրանք համարվում են ծախս՝ վճարող ստորաբաժանման կամ վայրի համար:

Պասիվ եկամուտներ են համարվում՝ ոչ ռեզիդենտի կողմից իր գույքի կամ այլ ակտիվների ներդրմամբ (տրամադրելով) ՀՀ տարածքում բացառապես այլ անձանց գործունեությունից ստացված եկամուտները, այսինքն՝

- տոկոսները.
- ռոյալթիները.
- Հայաստանում գտնվող գույքը վարձակալության տալուց ստացված եկամուտը.
- Հայաստանում գտնվող գույքի և այլ ակտիվների օտարումից ստացված գույքի արժեքի և այլ ակտիվների հավելաճը.
- այլ պասիվ եկամուտները:

Այլ եկամուտներ են համարվում վերը չնշված եկամուտները, որոնք մասնավորապես ստացված են կառավարման ծառայությունների դի-

մայ, գույքը արդյունավետ օգտագործելու կամ տրամադրված իրավունքներից արդյունավետ օգտվելու համար անհրաժեշտ օգնություն ցույց տալու դիմաց, բեռների փոխադրման (ֆրախտի) դիմաց և այլն:

Որպես հարկային գործակալ շահութահարկը պահվում (գանձվում) է հետևյալ չափերով՝

Եկամտի տեսակը	Շահութահարկի չափը
ապահովագրական հարուցում, վերապահովագրական վճար և փոխադրման (ֆրախտի) դիմաց սրացված եկամուտ	5%
շահաբաժին, փոկոս, ռոյալթի, գույքը վարձակալության փախույց սրացված եկամուտ, գույքի արժեքի հավելած և այլ եկամուտ	10%

Ոչ ռեզիդենտի արտաքին տնտեսական գործունեության հետ կապված եկամուտը Հայաստանի Հանրապետությունում հարկման ենթակա չէ: Արտաքին տնտեսական գործունեություն է համարվում բացառապես օտարերկրյա կազմակերպության (ոչ ռեզիդենտի) անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստանի Հանրապետություն ներկրելու հետ կապված (ապրանքների մաքսային փաստաթղթերի առկայության և տվյալ գործառնությունում ձեռնարկատիրական գործակալ-միջնորդների բացակայության դեպքում) գործունեությունը, որի դեպքում ՓՄՁ-ն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելը:

Եթե հայաստանյան աղբյուրներից օտարերկրյա կազմակերպությանը վճարվող եկամուտները Հայաստանի Հանրապետությունում գտնվող նրա ստորաբաժանման գործունեության արդյունք են, ապա ստորաբաժանումը հարկային գործակալին ներկայացնում է Հայաստանի Հանրապետության համապատասխան հարկային տեսչության մարմնում հաստատված տեղեկանք՝ հարկային տեսչության մարմիններում հաշվառված լինելու և հարկատուի հաշվառման համար (ՀՎՀՀ) ունենալու մասին և ազատվում է աղբյուրի մոտ շահութահարկի պահումից (գանձումից), այսինքն տվյալ դեպքում եկամուտը վճարող ՓՄՁ-ն չի իրականացնում հարկային գործակալի գործառույթ:

ՓՄՁ-ի կողմից եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (գանձված) շահութահարկի գումարը եկամտի վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ ենթակա է վճարման պետական բյուջե: Միաժամանակ, տվյալ եռամսյակին հաջորդող եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից

ոչ ուշ ՓՄՁ-ն իր գրանցման (հաշվառման) վայրի տարածքային հարկային մարմին պարտավոր է ներկայացնել սահմանված ձևով **Ամփոփ հաշվարկ** պահված և բյուջե փոխանցված շահութահարկի գումարների մասին:

10.3. Եկամտահարկ

ՓՄՁ-ն ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս, որպես հարկային գործակալ, այդ եկամուտներից պետք է հաշվարկի, պահի (գանձի) և բյուջե փոխանցի եկամտահարկ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքին (30 դեկտեմբերի 1997 թ., ՀՕ-183) համապատասխան:

Եկամուտները կարող են վճարվել ինչպես դրամական (կանխիկ կամ անկանխիկ), այնպես էլ բնամթերային (ոչ դրամական) ձևով: Բնամթերային ձևով եկամուտներ վճարելիս այդ եկամուտները հաշվի են առնվում պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում՝ ազատ (շուկայական) գներով՝ ՀՀ կառավարության 02.07.2001թ. N 590 որոշմամբ սահմանված կարգով:

Ֆիզիկական անձանց եկամուտներ հաշվարկելիս ՓՄՁ-ն՝ հարկային գործակալի պարտականությունը կատարելու համար, պետք է հաշվի առնի այդ անձանց ինքնուրույնը (ՀՀ քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ, անհատ ձեռնարկատեր):

Անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ՀՀ քաղաքացուն յուրաքանչյուր ամսում հաշվարկված համախառն եկամտից հարկային գործակալը կատարում է նվազեցումներ օրենքով սահմանված **նվազեցվող եկամուտների, անձնական նվազեցման**, ինչպես նաև **պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի** (ԱՎՈՄ-ի 3 %-ի) չափով՝ որոշելով ամսական հարկվող եկամտի գումարը:

Համախառն եկամուտը հաշվետու ամսում ֆիզիկական անձի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Եկամուտ են համարվում, մասնավորապես, ՓՄՁ-ի կողմից ֆիզիկական անձին վճարող հետևյալ եկամուտները.

ա) աշխատանքի վարձատրությունը և դրան հավասարեցված այլ վճարումները.

- բ) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձևից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների և տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առևտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առևտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար վճարվող հատուցումը (ռոյալթի)։
- գ) փոխառության դիմաց վճարվող տոկոսը և այլ հատուցումը (տոկոս)։
- դ) մրցույթների և մրցությունների, ինչպես նաև վիճակախաղերի, իրային և դրամական շահումները (մրցանակները)։
- ե) նվիրատվության և օգնության կարգով տրվող գույքը և դրամական միջոցները։
- զ) ապահովագրական հատուցումները։
- է) ֆիզիկական անձից ձեռք բերված գույքի դիմաց վճարվող եկամուտը։
- ը) վարձակալության դիմաց վճարվող վարձավճարը և այլ հատուցումը, քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից դիմաց վճարվող եկամուտը։
- թ) ֆիզիկական անձանց համար կատարված ապահովագրավճարները, բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների։

Նվազեցվող եկամուտների տեսակները սահմանված են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 9, 10 և 11 հոդվածներով, և նվազեցումը կատարում է եկամուտը վճարող հարկային գործակալը, այսինքն՝ այդ եկամուտներից (կամ դրանց նվազեցվող չափից) չի հաշվարկվում եկամտահարկ։

Այսպես, գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող ՀՀ քաղաքացույց գյուղատնտեսական արտադրանք ձեռք բերելու դեպքում այդ քաղաքացուն վճարվող եկամուտները հանդիսանում են համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ։

Ուշադրություն. Հարկային գործակալի կողմից նշված նվազեցումը կատարվում է, եթե ՀՀ քաղաքացին հարկային գործակալին ներկայացրել է սահմանված ձևի տեղեկանք գյուղատնտեսական արտադրանքի արտադրությամբ զբաղվելու մասին:

Կամ, օրինակ, նվազեցվող եկամուտներ են հանդիսանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում փոխհատույման վճարները (քայառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատույման վճարների), աշխատանքից ազատման դեպքում վճարվող արձակման նպաստի գումարը, արժեթղթերի վաճառքի դիմաց և շահաբաժինների տեսքով ֆիզիկական անձանց վճարվող եկամուտները:

Անձնական նվազեցումը սահմանված է ամսական 20000 դրամ գումարով, և ՀՀ քաղաքացու համար կատարվում է եկամուտը վճարող յուրաքանչյուր հարկային գործակալի կողմից:

Այսպիսով՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ՀՀ քաղաքացու յուրաքանչյուր ամսում հաշվարկված աշխատանքի վարձատրության (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերով) և դրան հավասարեցված եկամուտների գումարից ամսական հարկվող եկամտի գումարը հարկային գործակալը որոշում է հետևյալ բանաձևով՝

$$\begin{aligned} & \text{Հարկվող եկամուտ} = \\ & = \text{Համախառն եկամուտ} - \text{Նվազեցումներ} > 0 \end{aligned}$$

Ամսական հարկվող եկամտի գումարից եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով՝

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
Մինչև 80.000 դրամ	Հարկվող եկամտի 10%
80.000 դրամից ավելի	8.000 դրամին գումարած 80.000 դրամը գերազանցող գումարի 20%

Օրինակ՝ ՓՄՁ-ն աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող ՀՀ քաղաքացու 2006 թ. մարտի 1-ին հաշվարկում է փետրվար ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով, որից հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով.

- *համախառն եկամուտ*՝ 70,0 հազ. դրամ,
- *պարտադիր սույխալական ապահովագրության վճար*՝ 2,1 հազ. դրամ,
- *անձնական նվազեցում*՝ 20,0 հազ. դրամ,
- *հարկվող եկամուտ (70,0 – 2,1 – 20,0)*՝ 47,9 հազ. դրամ:

Հարկվող եկամտից հարկը կազմում է 4,79 հազ. դրամ (47,9 × 10%):

2006թ. մարտի 6-ին հարկային գործակալի կողմից այդ քաղաքացուն հաշվարկվում է փետրվար ամսվա պարգևատրում՝ 40,0 հազ. դրամ գումարով և կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի ու հարկի հաշվարկ՝ ելնելով փետրվար ամսվա համար հարկային գործակալի կողմից այդ քաղաքացուն հաշվարկված եկամուտների ընդհանուր գումարից հետևյալ կարգով.

- *համախառն եկամուտ (70,0 + 40,0)*՝ 110,0 հազ. դրամ,
- *պարտադիր սույ. ապահովագրության վճար*՝ 3,3 հազ. դրամ,
- *անձնական նվազեցում*՝ 20,0 հազ. դրամ,
- *հարկվող եկամուտ (110,0 – 3,3 – 20,0)*՝ 86,7 հազ. դրամ,
- *հարկ (8,0 + (86,7 – 80,0) × 20%)*՝ 9,34 հազ. դրամ:

Հաշվանցելով աշխատավարձից հաշվարկված հարկի գումարը, որոշվում է պարգևատրման գումարից պահման ենթակա հարկի գումարը՝ 4,55 հազ. դրամ (9,34 – 4,79):

Եկամտահարկի պահումը (զանձումը) իրականացվում է յուրաքանչյուր վճարման դեպքում: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ վճարման դեպքում կատարվում է աճողական կարգով հարկվող եկամտի և հարկի հաշվարկ՝ ելնելով տվյալ վճարման վայրում ընթացիկ հարկային ամսում հարկային գործակալի կողմից ՀՀ քաղաքացուն կատարված վճարումների ընդհանուր գումարից և անձնական նվազեցումների չափից: Ընդ որում, քաղաքացիաիրավական պայմանագրերով կատարված աշխատանքի դիմաց հաշվարկված եկամուտներից հարկային գործակալը՝ հարկվող եկամուտը որոշելիս, անձնական նվազեցում կատարում է այն ամիսների համար, որ ամիսներին դրանք փաստացի վճարվել են:

Օրինակ՝ *Կազմակերպությունը քաղաքացիաիրավական պայմանագրով իր մոտ աշխատանք կատարող ՀՀ քաղաքացուն 2005թ. դեկտեմբերի 30-ին՝ 2005թ. դեկտեմբերի 20-ի կատարողական ակտի համաձայն, հաշվարկում և վճարում է 2005թ. սեպտեմբերի 9-ից մին-*

չև 2005թ. դեկտեմբերի 9-ը կատարված աշխատանքի դիմաց վարձատրություն՝ 250,0 հազ. դրամ գումարով, որից հարկվող եկամուտը հաշվարկվում է հետևյալ կարգով.

- համախառն եկամուտ՝ 250,0 հազ. դրամ
- անձնական նվազեցում՝ 20,0 հազ. դրամ
- հարկվող եկամուտ (250,0 – 20,0)՝ 230,0 հազ. դրամ

Հարկվող եկամտից հարկը կազմում է 38,0 հազ. դրամ
($(230,0 - 80,0) \times 20\% + 8,0$):

Նույն օրինակում, եթե կազմակերպությունը ՀՀ քաղաքացուն աշխատանքների կատարման յուրաքանչյուր ամսում հաշվարկում և վճարում է եկամուտներ (օրինակ, սեպտեմբերի 30-ին՝ 20,0 հազ. դրամ, հոկտեմբերի 31-ին՝ 20,0 հազ. դրամ, նոյեմբերի 30-ին՝ 20,0 հազ. դրամ), ապա անձնական նվազեցումը կատարվում է նաև նշված ամիսների համար, և դեկտեմբեր ամսվա հարկվող եկամուտը և եկամտահարկը հաշվարկվում է հետևյալ կարգով.

- համախառն եկամուտ՝ 190,0 հազ. դրամ
- անձնական նվազեցում՝ 20,0 հազ. դրամ
- հարկվող եկամուտ (190,0 – 20,0)՝ 170,0 հազ. դրամ

Հարկվող եկամտից հարկը կազմում է 26,0 հազ. դրամ՝
($(170,0 - 80,0) \times 20\% + 8,0$):

Եկամուտների առանձին տեսակներ՝ ոռոյաթիներ, փոխառության դիմաց տոկոսներ, վարձակալական վճարներ և ՀՀ քաղաքացիներից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտներ (քաղաքացիանք գյուղատնտեսական մթերքի և արժեթղթերի ձեռքբերման դիմաց վճարված եկամուտների, որոնք նվազեցվող եկամտատեսակներ են), հարկվում են առանձին՝ 10% դրույքաչափով, ընդ որում հարկումը հարկային գործակալի կողմից կատարվում է առանց որևէ նվազեցում (այդ թվում, անձնական) կատարելու:

Օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց (այսուհետ՝ օտարերկրացի) եկամուտներ վճարելիս հարկային գործակալը եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկի պահում չի իրականացնում.

- եթե հայաստանյան աղբյուրներից վճարվող եկամուտները ձեռնարկատիրական գործունեության արդյունք են (այսինքն, այդ

օտարերկրացիին հանդիսանում է ՀՀ պետական գրանցում ստացած անհատ ձեռնարկատեր)։

- եթե վճարված եկամուտները կապված են օտարերկրացու կողմից իրականացված արտաքին տնտեսական գործունեության հետ (դա՝ օտարերկրացու անունից իրականացված, նրան պատկանող ապրանքները Հայաստան ներկրելու հետ կապված գործունեությունն է, որի դեպքում Հայաստանի հարկային ռեզիդենտն ապրանքների սեփականատեր է դառնում մինչև Հայաստանի պետական սահմանը հատելը)։

Օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպության և օտարերկրացու միջև կնքված պայմանագրի համաձայն օտարերկրացիին իրականացնում է ապրանքների անմիջական մատակարարում Աբենքից (Հունաստան) դեպի Երևան (Հայաստան)։ Մաքսային հայտարարագրից հետևում է, որ այդ ապրանքները ներմուծվել են կազմակերպության կողմից։ Պայմանագրի համաձայն օտարերկրացու կողմից կազմակերպությանը փաստացի մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների գծով ներկայացված հաշիվ-ապրանքագրի (invoice) հիման վրա կազմակերպությունը օտարերկրացուն վճարում է 10000 ԱՄՆ-ի դոլար, որից՝

- 8000 ԱՄՆ-ի դոլար՝ ապրանքների դիմաց,
- 1300 ԱՄՆ-ի դոլար՝ ապրանքների տեղափոխման համար,
- 500 ԱՄՆ-ի դոլար՝ ապրանքների բեռնման-բեռնաթափման համար,
- 200 ԱՄՆ-ի դոլար՝ մինչև ՀՀ տարածք ներկրման մաքսային ձևակերպումների համար։

Տվյալ դեպքում այդ գործունեությունից օտարերկրացու ստացած եկամուտները (10000 ԱՄՆ-ի դոլար) համարվում են արտաքին տնտեսական գործունեությունից ստացված եկամուտներ և ՀՀ-ում հարկման ենթակա չեն։

Հայաստանյան աղբյուրներից օտարերկրացուն եկամուտներ վճարելիս, հարկային գործակալը պարտավոր է հաշվարկել, պահել (գանձել) և բյուջե փոխանցել եկամտահարկ։ Ընդ որում, եկամտահարկը հաշվարկվում է եկամտի ամբողջական գումարից՝ առանց որևէ նվազեցում կատարելու։

Այսպիսով՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող օտարերկրացու յուրաքանչյուր ամսվա հարկվող եկամտի որոշման բանաձևը ունի հետևյալ տեսքը՝

Հարկվող եկամուտ = Համախառն եկամուտ

Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտների գումարից եկամտահարկը հաշվարկվում է վերը բերված ամսական սանդղակի դրույքաչափերով, իսկ եկամտի ներքոնշված տեսակները հարկվում են հետևյալ դրույքաչափերով.

Եկամտի տեսակը	Եկամտահարկի չափը
ապահովագրական հատուցում և փոխադրման (ֆրախտի) դիմաց եկամուտ	5%
տոկոս, ռոյալթի, գույքը վարձակալության փախուղիմաց եկամուտ, գույքի արժեքի հավելած և հայաստանյան աղբյուրներից վճարվող այլ եկամուտներ	10%

Օտարերկրացուն եկամուտներ վճարելու դեպքում հարկային գործակալը պարտավոր է եկամտի վճարման եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ իր հաշվառման վայրի հարկային մարմնին գրավոր ներկայացնել սահմանված ձևով Տեղեկություն՝ տվյալ եռամսյակում այդ անձին վճարված եկամուտների և պահված եկամտահարկի մասին:

Ուշադրություն. *Տեղեկությունները ներկայացվում են հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ, քան որում յուրաքանչյուր չներկայացված տեղեկության համար օրենքով սահմանված է տուգանք՝ 25000 դրամի չափով:*

Եթե ՓՄՉ-ն եկամուտ է վճարում **անհատ ձեռնարկատիրոջը**, որի հետ կնքված է քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիր (կամ կազմվել է՝ դրան ըստ էության փոխարինող հաշիվ-ապրանքագիրը), որտեղ նշված են անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, պետական գրանցման վկայականի համարը, անձնագրի տվյալները, ՀՀ-ում բնակության հասցեն, ապա եկամտահարկ հաշվարկելու և պահելու պարտավորություն չի առաջանում, այսինքն տվյալ դեպքում հարկային գործակալի գործառույթ օրենքով նախատեսված չէ:

Այն դեպքում, երբ հարկային գործակալը փաստաթղթերով չհիմնավորված (միակողմանի գնման ակտով շուկայից ապրանք ձեռք բերելիս) եկամուտ է վճարում, այսինքն՝ բացակայում է անհատ ձեռնարկատիրոջ հետ վերը նշված ձևով կնքված գրավոր պայմանագիրը կամ ֆիզիկական անձի հետ կնքված քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և Հայաստանում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով), ՓՄՁ-ն պարտավոր է վճարվող եկամտի գումարից՝ առանց հաշվի առնելու որևէ նվազեցում, հաշվարկել, պահել (գանձել) և բյուջե փոխանցել 3 % դրույքաչափով եկամտահարկ:

Հարկային գործակալը պահված (գանձված) եկամտահարկի գումարը պարտավոր է վճարել ՀՀ պետական բյուջե ֆիզիկական անձանց եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 5-ից ոչ ուշ:

Հարկային գործակալը եռամսյակը մեկ՝ հաջորդ եռամսյակի երկրորդ ամսվա 1-ից ոչ ուշ սահմանված ձևով իր գտնվելու (հաշվառման) վայրի հարկային մարմին է ներկայացնում **Հաշվարկ**՝ անցաց եռամսյակի յուրաքանչյուր ամսում ֆիզիկական անձանց վճարված եկամուտների և պահված եկամտահարկի գումարների մասին: Ընդ որում, նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված **Հաշվարկներում** սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող են հարկային մարմին ներկայացվել ճշտված հաշվարկներ, որի հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ: Սակայն, հարկային գործակալի կողմից **Ճշտված հաշվարկներ** չեն կարող ներկայացվել հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգման կամ արդեն իսկ ստուգված ժամանակահատվածների համար:

Ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին 3 ամսվա համար, իսկ հարկերի սահմանված չափից ավելի պահված (գանձված) գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող 3 օրացույցային տարվա համար: Սահմանված չափից ավելի գանձված գումարները վերադարձնելու մասին ֆիզիկական անձի գրավոր դիմում տալը կասեցնում է նշված ժամկետի ընթացքը:

Հարկային գործակալը, հարկ վճարողներին համանման, կրում է պատասխանատվություն հարկային օրենսդրությունը խախտելու համար:

Հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը (հարկային գործակալը) վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.15 %-ի չափով:

Նշված տույժը կիրառվում է ժամանակին չմուծված հարկի գումարների (այդ թվում նաև հարկային օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի կողմից չվճարված), հարկերի կանխավճարային մուծումների գումարների, ստուգման արդյունքներով հայտնաբերված (պակաս ցույց տրված) հարկվող օբյեկտի գծով հարկի գումարի նկատմամբ՝ դրանց վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

Հարկ վճարողների (հարկային գործակալների) կողմից հարկային տեսչություն ներկայացվող հաշվարկը (հայտարարագիրը) հարկային օրենսդրությամբ սահմանված ժամկետից 2 ամսից ավել ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար հարկ վճարողի (հարկային գործակալի) գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված հարկի ընդհանուր գումարի 5 %-ի չափով, բայց ոչ ավել, քան այդ հարկի ընդհանուր գումարն է:

Հաշվապահական հաշվառում (հարկային օրենսդրությամբ և ՀՀ կառավարության որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաև այլ հաշվառում և (կամ) գրանցումներ) չվարելու կամ սահմանված կարգի խախտումներով այն վարելու, հաշվապահական հաշվետվությունները, հաշվարկները, հայտարարագրերը և հարկային օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթերն ու տեղեկությունները սխալ կազմելու համար հարկ վճարողի (հարկային գործակալի) գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով բյուջե չմուծված կամ պակաս մուծված հարկերի գումարի 10 %-ի չափով:

Հարկվող օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում հարկ վճարողների (հարկային գործակալների) գանձվում է թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար նախատեսված (հարկային տեսչության կողմից հաշվարկված) հարկի գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50 %-ի չափով, իսկ հարկային տեսչության կողմից խախտումն արձանագրվելուց հետո 1 տարվա ընթացքում նույն հարկատեսակի գծով հարկվող օբյեկտը կրկին թաքցնե-

լու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ տուգանք՝ հարկի ամբողջ գումարի չափով, եթե հարկային օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

Հարկվող օբյեկտը թաքսները կամ պակաս ցույց տալը՝ հարկային տեսչություն ներկայացված տվյալ հարկատեսակի հաշվարկներում (հայտարարագրերում) հարկվող օբյեկտը ցույց չտալը, պակաս ցույց տալը կամ էլ գործունեություն չիրականացնելու (հարկվող օբյեկտներ չառաջանալու) մասին կեղծ տվյալներ ներկայացնելն է:

Հարկ վճարողները թաքսերած կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև հաշվարկված տույժերը և տուգանքները բյուջե են վճարում հարկային տեսչության կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո 10-օրյա ժամկետում:

10.4.

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ

Եթե ՓՄՁ-ն հանդիսանում է գործատու, այսինքն ֆիզիկական անձանց հետ պայմանագրեր (աշխատանքային, քաղաքացիաիրավական) կնքելու միջոցով նրանց ներգրավվում է որոշակի աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) մեջ, նա պարտավոր է հանդիսանալ ապահովադիր այդ անձանց համար և կատարել «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքով գործատուների վրա դրված պարտականությունները՝ հաշվարկել, պահել (գանձել) և Հայաստանի Հանրապետության պարտադիր սոցիալական ապահովագրության բյուջե փոխանցել պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ (այսուհետ՝ սոցիալական վճար):

Ֆիզիկական անձանց եկամուտներ հաշվարկելիս ՓՄՁ-ն՝ ապահովադիր պարտականությունը կատարելու համար, պետք է հաշվի առնի այդ անձանց ինքնությունը (ՀՀ քաղաքացի, օտարերկրյա քաղաքացի և քաղաքացիություն չունեցող անձ, անհատ ձեռնարկատեր), քանի որ օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում պետական գրանցում ունեցող անհատ ձեռնարկատերերին (կնքված պայմանագրերը կամ՝ դրանց ըստ էության փոխարինող հաշիվ-ապրանքագրերը պետք է պարունակեն այդ անձանց ինքնությունը հաստատող բոլոր վավերապայմանները՝ անձնագրային տվյալները, ՀՀ-ում բնակության հասցեն, անհատ ձեռնարկատիրոջ ՀՎՀՀ-ն, վկայականի համարը և այլն) վճարվող եկամուտների մասով գործատուներն ազատված են ապահովադիր պարտակա-

նությունների կատարումից: Այսինքն, ՓՄՁ-ն ապահովադրի պարտականությունը կատարում է ՀՀ քաղաքացիների հետ կնքված պայմանագրերով (աշխատանքային, քաղաքացիաիրավական) վճարվող աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված միջոցների մատով: Ընդ որում՝ այդ աշխատանքների (ծառայությունների) դիմաց վճարումը կարող է կատարվել ինչպես դրամական, այնպես էլ բնաիրային (ոչ դրամական) ձևով:

Ուշադրություն. *Բնաիրային ձևով ստացված եկամուտների հաշվարկման կարգը, ինչպես նաև աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտների) ցանկը հաստատված են ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 8-ի «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 352 որոշմամբ:*

Գործատուները աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատող ՀՀ քաղաքացիներին յուրաքանչյուր ամիս հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրան հավասարեցված եկամուտների (այդ թվում՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների դիմաց հաշվարկված եկամուտների) նկատմամբ պարտավոր են կատարել սոցիալական վճարներ՝ անկախ դրանց վճարված լինելու կամ չլինելու հանգամանքից: Այսինքն, ի տարբերություն եկամտահարկի, երբ աշխատավարձից հաշվարկված եկամտահարկի պահման (գանձման) և բյուջե փոխանցման պարտավորությունն անմիջակաճորեն կախված է այդ աշխատավարձի փաստացի վճարման հետ, սոցիալական վճարի կատարման պարտավորությունը առաջանում է արդեն իսկ աշխատավարձի հաշվարկման պահից:

Աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներ և դրան հավասարեցված եկամուտներ են համարվում՝

- ա) աշխատավարձը (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ վարձատրություն), ներառյալ՝
 - արտաժամյա աշխատանքի վարձատրությունը,
 - գիշերային աշխատանքի վարձատրությունը,

- ոչ աշխատանքային (հանգստյան, տոնական, հիշատակի) օրերին կատարված աշխատանքի վճարումը,
 - լրավճարները, հավելավճարները (այդ թվում՝ գիտական աստիճանների համար) և պարգևատրումները (անկախ վճարման պարբերականությունից և ֆինանսավորման աղբյուրներից),
 - աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցներից տրվող միանվագ գումարները (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերում տրվող փոխհատույցման և օգնության գումարների),
 - պարապուրդի ժամանակ վճարումը,
 - օրինական գործադուլին մասնակցող աշխատողներին վճարումը,
 - լրացուցիչ և հատուկ ընդմիջումների վճարումը,
 - առողջության ստուգման համար ծախսվող ժամանակի համար վճարումը (եթե աշխատողի առողջության ստուգումը պարտադիր է և պայմանավորված է աշխատանքի բնույթով),
 - աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ այլ վայրում աշխատանքի ընդունվելու դեպքում տեղափոխման համար նախապատրաստվելու և նոր վայրում տեղավորվելու ժամանակահատվածի համար վարձատրությունը.
- բ) ամենամյա (նվազագույն, երկարացված, լրացուցիչ) և նպատակային (ուսումնական, պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար) տրամադրվող վճարովի արձակուրդի համար, ինչպես նաև աշխատողին աշխատանքից ազատելու ժամանակ ամենամյա արձակուրդի տրամադրման դեպքում վճարվող աշխատավարձը.
- գ) նախկին աշխատանքում վերականգնվելու դեպքում հարկադիր պարապուրդի դիմաց վճարված աշխատավարձը.
- դ) հեղինակային վարձատրությունը (բացառությամբ ռոյալթիների):
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությանը համապատասխան քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից կատարվող աշխատանքներից և մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտներն են, մասնավորապես՝

- կապալի (այդ թվում՝ շինարարական, նախագծային և հետագոտական աշխատանքների կապալի) պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- մանկավարժական, փորձարարական-կոնստրուկտորական և տեխնոլոգիական աշխատանքների կատարման պայմանագրերի շրջանակներում աշխատանքի վարձատրությունը,
- հանձնարարության և գործակալության պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը,
- պահատվության պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը,
- փոխադրման և տրանսպորտային առաքման պայմանագրերի շրջանակներում ծառայությունների դիմաց վճարումը:

Քաղաքացիախիրավական պայմանագրերի հիման վրա գիտական և ստեղծագործական աշխատանքների դիմաց եկամուտները չեն դիտվում որպես աշխատանքի վարձատրությանն ուղղված կամ դրանց հավասարեցված եկամուտներ:

Գործատուները յուրաքանչյուր աշխատողի (այդ թվում՝ քաղաքացիախիրավական պայմանագրով աշխատողի) համար սույնիսկական վճարները կատարում են հետևյալ չափերով.

Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչև 20000 դրամ	7000 դրամ
20000-ից մինչև 100000 դրամ	7000 դրամ գումարած 20000 դրամը գերազանցող գումարի 15%-ը
100000 դրամից ավելի	19000 դրամ գումարած 100000 դրամը գերազանցող գումարի 5%-ը

Գործատուների վրա դրված է նաև աշխատանքային պայմանագրերի շրջանակներում վարձու աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված եկամուտների 3%-ի չափով սույնիսկական վճարների կատարման պարտականությունը:

Վարձու աշխատողը ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացին է, որն աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատանքային հարաբերությունների մեջ է գտնվում գործատուի հետ՝ նրա օգտին կատարելով որոշակի աշխատանք՝ ըստ որոշակի մասնագիտության, որակավորման կամ պաշտոնի:

Վարձու աշխատող է համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող 14-ից մինչև 16 տարեկան անչափահաս քաղաքացիները:

Աշխատանքային հարաբերությունները վարձու աշխատողի և գործատուի փոխադարձ համաձայնության վրա հիմնված հարաբերություններն են, ըստ որի՝ վարձու աշխատողն անձամբ, որոշակի վարձատրությամբ կատարում է աշխատանքային գործառույթներ (որոշակի մասնագիտությամբ, որակավորմամբ կամ պաշտոնում աշխատանք)՝ ենթարկվելով ներքին կարգապահական կանոններին, իսկ գործատուն ապահովում է աշխատանքային օրենսդրությամբ, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով, աշխատանքային պայմանագրերով նախատեսված աշխատանքի պայմաններ:

Վարձու աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա:

Օրինակ. ՓՄՁ-ն աշխատանքային պայմանագրով իր մոտ աշխատող ՀՀ քաղաքացու 2006թ. հուլիսի 4-ին հաշվարկում և վճարում է հունիս ամսվա աշխատավարձ՝ 70,0 հազ. դրամ գումարով: 2006թ. հուլիսի 7-ին այդ քաղաքացու հաշվարկվում է հունիս ամսվա պարգևատրում՝ 40,0 հազ. դրամ գումարով:

Հունիս ամսվա համար կատարվում է սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և սոցիալական վճարի հաշվարկ՝ ելնելով հունիսի համար սպահովադրի կողմից այդ քաղաքացու հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամտների (ԱՎՈՒՄ) ընդհանուր գումարից՝

- ԱՎՈՒՄ (70,0 + 40,0)՝ 110,0 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար (19,0 + (110,0 – 100,0) × 5%)՝ 19,5 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար (110,0 × 3%)՝ 3,3 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար (19,5 + 3,3)՝ 22,8 հազ. դրամ:

Հունիս ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (110,0 հազ. դրամ) և սոցիալական վճարը (22,8 հազ. դրամ) արտապղվում են հունիս

ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարը ենթակա է վճարման մինչև 20.07.2006թ. (ներառյալ): Միաժամանակ՝ հուլիսին վճարված հունիս ամսվա եկամուտները $(70,0 + 40,0 = 110,0$ հազ. դրամ) և հաշվարկված եկամտահարկը $(8,0 + (110,0 - (20,0 + 3,3) - 80,0) \times 20\% = 9,3$ հազ. դրամ) արտացոլվում են 3-րդ եռամսյակի եկամտահարկի հաշվարկում (հուլիս ամսվան վերաբերող սյունակներում), իսկ եկամտահարկը կազմակերպության կողմից ենթակա է վճարման մինչև 05.08.2006թ. (ներառյալ):

Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների համար գործատուները վերը նշված 3 %-ի չափով սոցիալական վճարներ չեն կատարում:

Եթե քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքները կատարվում են կամ ծառայությունները մատուցվում են պայմանագրում նշված կոնկրետ ժամկետում, ապա՝

- ա) այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով չեն նախատեսվում աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սոցիալական վճարներ չեն հաշվարկվում և չեն կատարվում.
- բ) այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով նախատեսվում է աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սոցիալական վճարները հաշվարկվում են այդ ամիսների համար պայմանագրով առանձնացված վարձատրությունից ելնելով (բայց ոչ պակաս, քան 7,0 հազ. դրամ) և վճարվում են այդ ամիսների հաշվարկված սոցիալական վճարների համար սահմանված ժամկետներում.
- գ) այն ամիսների համար, որոնց ընթացքում պայմանագրով նախատեսվում է աշխատանքների կատարում կամ ծառայությունների մատուցում, սակայն այդ ամիսների համար պայմանագրով առանձնացված վարձատրություն նախատեսված չէ, սոցիալական վճարները հաշվարկվում են պայմանագրով նախատեսված աշխատանքների կամ ծառայությունների (կամ դրանց փուլերի) ընդհանուր արժեքի և այդ արժեքի մեջ ընդգրկված ու պայմանագրով առանձնացված վարձատրությանը ամիսների վարձատրության տարբերությունը ըստ ամիսների հավասարաչափ բաշխվող գումարից ելնելով (բայց

ոչ պակաս, քան 7,0 հազ. դրամ), և վճարվում են այդ ամիսների հաշվարկված սոցիալական վճարների համար սահմանված ժամկետներում.

- դ) պայմանագրի (կամ դրա փուլերի) ավարտից հետո հանձնման-ընդունման փաստաթղթերով հիմնավորված փաստացի կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների ըստ ամիսների արժեքային այլ բաշխման դեպքում գործատուն ներկայացնում է ճշտված հաշվետվություններ բոլոր այն ամիսների համար, որոնց հաշվարկով (վերահաշվարկով) կատարվում է սոցիալական վճարների փոփոխություն, և դրանց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար սոցիալական վճարների պարտավորությունների վերահաշվարկ:

Եթե աշխատանքները կատարվում կամ ծառայությունները մատուցվում են քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրում նշված ժամկետում, որը պայմանավորված է որոշակի իրադարձությունների (այդ թվում՝ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման, դրանց հանձնման-ընդունման) հետ, որի հետևանքով պայմանագրի հիման վրա հնարավոր չէ որոշել սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտը ըստ ամիսների, կամ՝ եթե քաղաքացիաիրավական գրավոր պայմանագրից, սկզբնական հաշվառման և վճարման փաստաթղթերից հնարավոր չէ որոշել սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտը ըստ ամիսների, ապա սոցիալական վճարները հաշվարկվում են պայմանագրի շրջանակներում կատարված վճարումներից (վճարման ամիսների համար) և պայմանագրով (կամ դրա փուլերով) նախատեսված աշխատանքների կատարումը կամ ծառայությունների մատուցումը հաստատող հանձնման-ընդունման փաստաթղթերի հիման վրա, ընդ որում՝

- ա) պայմանագրի շրջանակներում կատարված վճարումներից (այդ թվում՝ կանխավճարային ձևով) սոցիալական վճարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով պայմանագրի (կամ դրա փուլերի) կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման փաստաթղթերի տվյալները.
- բ) պայմանագրի (կամ դրա փուլերի) կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման փաստաթղթերի հիման վրա սոցիալական վճարները հաշվարկվում են՝ հաշվի առնելով պայմանագ-

րի շրջանակներում կատարված վճարումները (այդ թվում՝ կանխավճարային ձևով):

Եթե օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սույնիսկան վճարները հաշվարկելու և ապահովագրության բյուջե փոխանցելու պարտականությունը դրված է վարձու աշխատողների վրա, ապա գործատուն պարտավոր է մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ) հարկային մարմին սահմանված ձևով Տեղեկություններ հայտնել վարձու աշխատողների, նրանց վճարվող աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների մասին:

Ուշադրություն՝ *Սահմանված ժամկետներում չներկայացված յուրաքանչյուր տեղեկության համար գործատուն վճարում է տուգանք՝ 25,0 հազ. դրամի չափով:*

ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ աշխատանքային պայմանագրերով աշխատող անձանց համար՝ ի տարբերություն քաղաքացիաիրավական պայմանագրերով աշխատանք կատարողների, սահմանված է ամենամյա արձակուրդի հնարավորություն: Ամենամյա արձակուրդն օրացույցային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձը:

Ամենամյա արձակուրդի վճարումների դեպքում սույնիսկան վճարները հաշվարկվում և վճարվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Օրինակ՝ *Կազմակերպության վարձու աշխատողը (Հայաստանի Հանրապետության քաղաքացի) գնում է հերթական (ամենամյա) արձակուրդ 2006 թ. հոկտեմբերի 21-ին և վերադառնում է 2006 թ. նոյեմբերի 21-ին (արձակուրդի տևողությունը՝ 31 օրացույցային օր): Արձակուրդային գումարը հաշվարկվել է 80,0 հազ. դրամի չափով և վճարվել է աշխատողին 2006 թ. հոկտեմբերի 19-ին: 2006 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսների աշխատավարձը կազմում է ամսական 70,0 հազ. դրամ:*

Տվյալ դեպքում յուրաքանչյուր ամսվա համար կատարվում է սույնիսկան վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափի և սույնիսկան վճարի հաշվարկ՝ ելնելով տվյալ ամսվա աշխատավարձի և այդ ամսվան վերաբերող արձակուրդային գումարի ընդհանուր գումարից (ԱՎՈՒՄ):

Հոկտեմբեր ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

- **ԱՎՈՒՄ**
($70,0 : 31/օր/ \times 20/օր/ + 80,0 : 31/օր/ \times 11/օր/$)՝ 73,5 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար
($7,0 + (73,5 - 20,0) \times 15\%$)՝ 15,0 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար ($73,5 \times 3\%$)՝ 2,2 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար ($15,0 + 2,2$)՝ 17,2 հազ. դրամ:

Հոկտեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (73,5 հազ. դրամ) և սոցիալական վճարները (17,2 հազ. դրամ) արտացոլվում են հոկտեմբեր ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները կազմակերպության կողմից ենթակա են վճարման մինչև 20.11.2006թ. (ներառյալ):

Նոյեմբեր ամսվա համար սոցիալական վճարի հաշվարկը հետևյալն է՝

- **ԱՎՈՒՄ**
($80,0 : 31/օր/ \times 20/օր/ + 70,0 : 30/օր/ \times 10/օր/$)՝ 74,9 հազ. դրամ,
- գործատուի սոցիալական վճար
($7,0 + (74,9 - 20,0) \times 15\%$)՝ 15,2 հազ. դրամ,
- վարձու աշխատողի համար սոցիալական վճար ($74,9 \times 3\%$)՝ 2,2 հազ. դրամ,
- ընդամենը սոցիալական վճար ($15,2 + 2,2$)՝ 17,4 հազ. դրամ:

Նոյեմբեր ամսվա համար հաշվարկված ԱՎՈՒՄ-ը (74,9 հազ. դրամ) և սոցիալական վճարները (17,4 հազ. դրամ) արտացոլվում են նոյեմբեր ամսվա սոցիալական վճարների հաշվետվությունում, իսկ սոցիալական վճարները կազմակերպության կողմից ենթակա են վճարման մինչև 20.12.2006թ. (ներառյալ):

Գործատուների մոտ աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատող անձինք, որոնց համար օրենքով սահմանված կարգով կատարվել են պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ, իրավունք ունեն ստանալու **ապահովագրական նպաստներ**: Ապահովագրական նպաստները նշանակվում են, եթե դրանց համար պահանջվող փաստաթղթերը ներկայացվել են աշխատունակության վերականգնման, հղիության ու ծննդաբերության արձակուրդի (ժամանակաշրջանի) ավարտման կամ հաշմանդամության խուճր սահմանելու օրվանից 6 ամսվա ժամկետում:

Հիվանդության նպաստը տրվում է հիվանդության (վնասվածքի) ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը:

Պրոթեզավորման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունում (ստացիոնարում) գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը:

Առողջարանային բուժման նպաստը տրվում է հիվանդանոցային բուժական հաստատությունից (ստացիոնարից) անմիջապես առողջարան լիաբուժման ուղարկված, ինչպես նաև տուբերկուլյոզային առողջարան մեկնած վարձու աշխատողներին՝ առողջարանում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք են հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը և առողջարանային բուժման ուղեգրի պատճենը:

Հղիության ու ծննդաբերության նպաստը տրվում է հղիության և ծննդաբերության՝ օրենքով սահմանված կարգով հատկապես (գործատուի կողմից ձևակերպված) արձակուրդի ժամանակաշրջանի համար, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը:

Վարձու աշխատողին ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստը տրվում է օրենքով սահմանված դեպքերում և ժամկետներում, և այդ նպաստի նշանակման համար հիմք է հանդիսանում բժշկական հաստատության կողմից տրվող ժամանակավոր անաշխատունակության թերթիկը, իսկ մինչև 18 տարեկան անհատական խնամքի կարիք ունեցող երեխային կամ հաշմանդամ երեխային առողջարանում խնամելու դեպքում՝ նաև առողջարանային բուժման ուղեգրի պատճենը:

Ապահովագրական նպաստները հաշվարկվում են վարձու աշխատողի միջին աշխատավարձի (եկամտից): Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքին նախորդած 3 օրացույցային ամիսներին տվյալ աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրանց հավասարեցված եկամուտներից, որոնցից կատարվել են սոցիալական վճարներ: Եթե

ապահովագրական դեպքին նախորդող եռամսյա ժամանակաշրջանում վարձու աշխատողը եկամուտ չի ունեցել (աշխատավարձ չի ստացել), ապա որպես միջին ամսական աշխատավարձ (եկամուտ) հիմք է ընդունվում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի 13-ապատիկը (13,0 հազ. դրամ): Եթե ապահովագրական դեպքին նախորդող՝ տվյալ գործատուի մոտ աշխատանքի ժամանակաշրջանը պակաս է 3 օրացույցային ամիսների, ապա միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկվում է փաստացի աշխատած ամիսների (օրերի) համար հաշվարկված եկամտից:

Վարձու աշխատողների ապահովագրական նպաստի հաշվարկումը իրականացնում է գործատուն՝ այն վճարելով տվյալ ամսվա համար հաշվարկված սույխալական վճարների հաշվին: Ապահովագրական նպաստը վճարվում է դրա նշանակումից հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետներում: Եթե տվյալ ամսվա համար գործատուի բոլոր աշխատողների հաշվարկված սույխալական վճարների ընդհանուր գումարը բավարար չէ նպաստի գումարը ամբողջությամբ վճարելու համար, ապա գործատուն ապահովագրական նպաստի պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը հետագայում փոխհատուցվում է ՀՀ սույխալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից: Այդ դեպքում գործատուն Հիմնադրամ է ներակայացնում իր հաշվառման վայրի հարկային մարմնի կողմից հաստատված սահմանված ձևի տեղեկանք, որի հիման վրա մեկամսյա ժամկետում կատարվում է իր միջոցների հաշվին վճարված նպաստի փոխհատուցումը:

ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված դեպքերում, մասնավորապես՝ արտադրության ծավալների, տնտեսական, տեխնոլոգիական և աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում, գործատուն վարձու աշխատողին վճարում է արձակման նպաստ՝ առնվազն մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով, իսկ առանձին դեպքերում՝ 2 շաբաթվա աշխատավարձի չափով, որը հաշվարկվում է վարձու աշխատողի միջին օրական աշխատավարձի չափից ելնելով: Վարձու աշխատողին վճարվող արձակման նպաստից սույխալական վճարներ չեն հաշվարկվում:

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է վարձու աշխատողի հետ պայմանագրի լուծման օրը կատարել լրիվ վերջնահաշվարկ՝ վճարելով աշխատավարձը և դրան հա-

վասարեցված այլ վճարումները: Վարձու աշխատողին վճարվող վերջնահաշվարկի գումարը կազմող աշխատավարձից և դրան հավասարեցված այլ վճարումներից սույնիսկական վճարները հաշվարկվում են ընդհանուր կարգով, բացառությամբ են կազմում չօգտագործված արձակուրդի դիմաց հաշվարկվող փոխհատուցումները, որոնցից սույնիսկական վճարներ չեն կատարվում:

Գործատուները յուրաքանչյուր ամսվա համար սույնիսկական վճարները հաշվարկում և ապահովագրության բյուջե են փոխանցում (վճարում) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ):

Գործատուները, յուրաքանչյուր հաշվետու ամսվա արդյունքներով, մինչև հաջորդ ամսվա 20-ը (ներառյալ), իրենց հաշվառման վայրի հարկային մարմին ՀՀ կառավարության սահմանած պարզեցված ընթացակարգով ներկայացնում են սույնիսկական վճարների հաշվետվություն, որտեղ ներառվում են նաև սույնիսկական վճարների հաշվին գործատուի կողմից հաշվետու ամսում վճարված ապահովագրական նպաստները (հիվանդության նպաստ, պրոթեզավորման նպաստ, առողջարանային բուժման նպաստ, հղիության ու ծննդաբերության նպաստ, ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստ), ինչպես նաև վարձու աշխատողի մահվան դեպքում տրվող թաղման նկատար:

ՓՄՁ-ն սույնիսկական վճարների հաշվետվություն հարկային մարմին չի ներկայացնում, եթե հաշվետու ամսում չի հանդիսանում գործատու (չունի գրավոր կնքված աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագիր և փաստացի չի օգտագործում ֆիզիկական անձանց աշխատանքը, ծառայությունները):

Գործատուն նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվետվություններում սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում կարող է հարկային մարմին ներկայացնել սույնիսկական վճարների ճշտված հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվում է այդ ժամանակաշրջանների համար սույնիսկական վճարների պարտավորությունների վերահաշվարկ: Հարկային մարմինների կողմից գործատուների մոտ իրականացված ստուգումների ընթացքում գործատուի կողմից ներկայացված ստուգվող ժամանակաշրջաններին վերաբերող հաշվետվությունների ճշտում չի իրականացվում (սույնիսկական վճարների ճշտված հաշվետվություններ չեն ներկայացվում): Սույնիսկական վճարների ճշտված հաշվետվություններ չեն ներկայացվում նաև հարկային մարմինների կողմից կատարված ստուգմանը ընդգրկված հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստուգված ժա-

մանակաշրջանների համար սույնիսկական վճարների գծով պարտավորությունները կարող են ճշտվել միայն գործատուի կողմից ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

Գործատուների կողմից սույնիսկական վճարումների կատարումը սահմանված ժամկետներից ուշացնելու օրվանից մինչև 365-րդ օրը ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար գանձվում է տույժ՝ ապառքի 0,15%-ի չափով, ընդ որում օրենքի խախտումներ հայտնաբերելու դեպքում սույնիսկական վճարների գծով լրացուցիչ պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան հաջորդող երեք տարի հետո:

Սույնիսկական վճարների օբյեկտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում ապահովադրից գանձվում է թաքցրած կամ պակաս ցույց տրված սույնիսկական վճարների օբյեկտի նկատմամբ հաշվարկված սույնիսկական վճարների գումարը, ինչպես նաև տուգանք՝ այդ գումարի 50%-ի չափով, իսկ հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, սույնիսկական վճարների օբյեկտը կրկին թաքցնելու կամ պակաս ցույց տալու դեպքում՝ սույնիսկական վճարների ամբողջ գումարի չափով:

Ապահովադիրների՝ լիազոր մարմին ներկայացվող հաշվետվությունը օրենքով սահմանված ժամկետից երկու ամսից ավելի ուշացնելու դեպքում այդ ժամկետին հաջորդող յուրաքանչյուր 15 օրվա համար ապահովադրից գանձվում է տուգանք՝ դրա հետևանքով չմուծված սույնիսկական վճարի ընդհանուր գումարի 5%-ի չափով, բայց ոչ ավելի, քան սույնիսկական վճարի ընդհանուր գումարն է:

Սույնիսկական վճարների հաշվետվությունները սխալ կազմելու համար ապահովադիրներից գանձվում է տուգանք՝ այդ խախտումների հետևանքով ՀՀ պարտադիր սույնիսկական ապահովագրության բյուջե չմուծված կամ պակաս մուծված սույնիսկական վճարի գումարի 10%-ի չափով:

Աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին գրավոր հրամանի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրվելու դեպքում գործատուն տվյալ ամսում հաշվարկում և վճարում է յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար սույնիսկական վճար՝ 60.000 դրամի չափով, ինչպես նաև ենթարկվում է վարչական պատասխանատվության:

**Ձեռնարկ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ՎՃԱՐՆԵՐԻ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Էջադրումը և ձևավորումը
Ա. Հարությունյանի

Մինչտպագրական աշխատանքներ՝ «Գ-ԱՐ» ՍՊԸ
Տպագրությունը՝ «Է-Ի-Թ՝ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 500